



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.....	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ.....	2
ՀԱՅ ՄԱՅՐՈՎ ՄԵՆՔ ՀԱՅ ԿԸ ՄՆԱՆՔ.....	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ.....	4
ՊԱՏՄԱԲԱՆ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ ՀԵՏ	4
ԿԻՊՐԱՀԱՅ	8
ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ԻՐ ԿՈՂԱԿԻՑԻՆ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ	8
ԿԻՊՐԱՀԱՅ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑԻՉ ՎԱՐԴԳԷՍ ՄԱՀՏԵՍԵԱՆԻ ԷՋԷՆ.-	11
ՀԱՆԴԻՊՈՒՄ Հ.Բ.Ը.Մ-Ի Նախագահ Սեմ Սիմոնեանի հետ	11
ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ՝ ՆԻԿՈՍԻՈՅ ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ԱԿՈՒՄԲԻՆ ՄԷՋ	12
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	13
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷԼԸ ԴԱՐՁՆԵԼ ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴԻ ՁԱՅՆԸ.....	13
ԱՇԽԱՐՀԸ ՆՈՒԱՃԵԼՈՒՆ ԴԻՄԱՑ.....	20
ՀԱՄԱԿԵՐՊԻ՞Ն, ՅԱՆՁՆՈՒԻ՞Ն, ԹԷ՞ ԸՆԴՎՁԻԼ.....	20
ԱՏՐՊԷՅՃԱՆ – ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ, ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ.....	24
ՄԵՐ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ ՈՐՈ՞ՒՆ ԿՏԱԿԵՆՔ.....	27
ԱՌԱՋԻՆ ՌԱՀՎԻՐԱՆԵՐԸ.....	30
ՏԵՍԱԿԷՏ	32
ԻՐԱՆԻ ՇՈՒՐՋ ՁԵԽԱԻՈՐՈՒԱԾ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԿՐՆԱՆ ԱԶԴԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ	32
ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ՝ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՆԱԽՊԱՅՄԱՆ	38
19/2/2026.....	38
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՈՒ ՄՐՅԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ	41
ԽԱԲՈՒՍԻԿ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆԸ ՍՊԱՍԵԼԻՍ.....	45
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՎՃՌՈՐՈՇ ՇՐՋԱԴԱՐՁԻ ԱՌՋԵԻ.....	48
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	50
ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ.....	50
ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆՈՐ ԵՒ ՅԱԶՈՂ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ՍԸ ԵՒՍ. ՅԱՐՈՒԹ ԳՆԴՈՒՆԻ ԻՆՔՋԻՆՔ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՂ ՈՒ ԳԵՐԱԶԱՆՅՈՂ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ.....	54
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷԼԻ ԱՊԱԳԱՅԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՈՒՈՒՏՊԸՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ.....	57
ՅՈՒՍԱՄ ՕՐ ՍԸ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Կ՛ԱԻԵՏԵՆՔ.....	59

ՀԱԼԷՊԵԱՆ ՅՈՒՇԵՐ՝ ՊԱՐԱՆ, ԿԱԻՒՃ ԵՒ ԳՈՒՆԱԳԵՂ ԺԱՊԱԻԷՆ.....61

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ 63

ՔԱՌԵԱԿՆԵՐ..... 66

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ՄԱՅՐՈՎ ՄԵՆՔ ՀԱՅ ԿՐ ՄՆԱՆՔ

Գեղեցիկ եւ իմաստալից աւանդութեամբ մը, հայ կեանքին մէջ յատկապէս, Մարտ ամսուան մէջ եւ միամսեայ տեւողութեամբ, անգամ մը եւս կ'իմաստաւորուի ու կ'արժեւորուի հայ մօր դերակատարումը, որպէս ծնուցիչն ու սնուցիչը հայ իրերայաջորդ սերունդներու: Անգամ մը եւս լուսարձակի տակ կ'առնուի հայ մօր առաքելութիւնը որպէս առաջին եւ գերագոյն դաստիարակը հայ մարդուն:

Բայց ի՞նչ է դաստիարակութիւնը: Կամ ո՞վ է լաւ դաստիարակուած մարդը: Շատերու մօտ, կայ այն թիւր կարծիքը, թէ լաւ դաստիարակուած մարդը կը յատկանշուի մասնաւորաբար անոր ձեռքբերած ուսման բարձր վկայականներով, նորագոյն գիտելիքներով, արուեստագիտական հմտութիւններով եւ անշուշտ բարձր դիրքով ու պաշտօնով...



Դաստիարակութեան այս ըմբռնումը որքան խաբուսիկ կը դառնայ, երբ քիչ մը աւելի խոր մտածենք: Արդարեւ, որքան շատցած է ուսեալներու թիւը, բայց որքան նուազած է իմաստութիւնը: Որքան շատցած են հմուտ մասնագէտները, բայց որքան նուազած է գիտակցութեան մակարդակը: Ի գուր չէ որ մեր

«գերքաղաքակիրթ» ժամանակներուն, մարդուն մէջ դեռ կ'ապրի ու կը գործէ վայրի գազանը: Վկայ՝ պատերազմները, սուգ ու աւեր տարածող կռիւները, զիրար յօշոտելու պատրաստ ամենէն քարանձաւային կիրքերու դրսեւորումը...

Սա դաստիարակութեան ամենէն ցայտուն ձախողումն է անտարակոյս:

Դաստիարակութիւն՝ որուն կարեւորագոյն բաղադրիչը՝ մարդ էակին մէջ ՆԿԱՐԱԳԻՐ կերտելն է գերազանցօրէն: Իսկ նկարագիրը ռեւէ անհատին կը կերտուի առաջին հերթին տան մէջ, ի մասնաւորի մօր դերակատարութեամբ: Անիկա չի փոխանցուիր գիտելիքներով կամ տեղեկութիւններով, այլ՝ մօր ապրած վարք ու բարքով, մօր ցուցաբերած վերաբերմունքով ու կեցուածքով, մօր յորդորներով, մօր ապրած ազգային-բարոյական արժէքներով, շիտակ, ազնիւ, սկզբունքային եւ արժանապատիւ վարքով...Նկարագիրը այն



մնայուն եւ ամուր յենասիւնն է որ կանգուն կը մնայ, երբ կը փլուզուին ամէն արտաքին փայլ ու պերճանք, դիրք ու պաշտօն, փառք ու տիտղոս...: Մօր կոփած ամուր նկարագիրը՝ սկսեալ թերեւս օրօրոցէն եւ մանուկ հասակէն, մարդ անհատին կ'ընկերանայ մինչեւ իր վերջին շունչը եւ կը պայմանաւորէ իր վարքն ու արարքը, իր կենցաղը, իր կեանքի ուղեգիծը:

Նկարագիրով է որ ան կը շահի այլոց յարգանքը: Նկարագիրով է որ ան կուրծք կու տայ կեանքի դժուարութիւններուն: Նկարագիրով է որ ան կը կերտէ իր յաղթանակը, վեր ելլելով կեանքի զառիվերէն խիզախօրէն եւ արժանավայել, շիտակ ու ազնիւ: Առանց ամուր նկարագրի, ուսման բարձր վկայականները, դիրքն ու պաշտօնը, նիւթական ամէնէն ճոխ բարիքները Ի ԶԻՔ կը դառնան, աննպատակ ու անբովանդակ կեանքի բաւիղներուն...

Նկարագիրը ունի լայն պարունակ: ՄԱՐԴԿԱՅԻՆ ու ԱԶԳԱՅԻՆ բարոյական արժէքներու յանձնառութենէն մինչեւ խիզախութիւն եւ անկոտորում կամք, պայքարի ոգի զանոնք մինչեւ վերջ պաշտպանելու՝ անսակարկ եւ անկաշառ: Ազգային արմատներու խոր գիտակցութիւն: Իրաւ հայրենասիրութիւն եւ հայրենաստիքութեան ոգի:

Ինչ կը վերաբերի ԱԶԳԱՅԻՆ պարունակին յատկապէս, հայ մայրն է որ սեր ու նուիրում կը սերմանէ մանուկին մէջ հայոց լեզուին, հայ բառ ու բանին, հայոց հաւատքին, հայոց պատմութեան շունչին, ազգային խորհրդանիշներուն, հայ աւանդութիւններուն ու սրբութիւններուն նկատմամբ, հայոց հայրենիքին, հայոց պետականութեան նկատմամբ, անոնց հանդէպ նախանձախնդրութեան ոգի եւ ազգային արժանապատուութիւն:

Զմոռնանք որ դարերու պետականագործ կոչումներու տակ, հայն ու հայութիւնը յարատեւած են շնորհիւ գլխաւորաբար հայ ընտանիքին, ուր հայոց լեզուն եւ հայոց հաւատքը, ազգային ոգին եւ ազգային գաղափարախօսութիւնը, հայուն հոգեւոր-բարոյական արժէքները փոխանցուեցնելու սերունդէ-սերունդ ՀԱՅ ՄՕՐ կողմէ գերազանցօրէն: Ի գուր չէ ըսուած որ ազգի մը ճակատագիրը պէտք է փնտռել մայրերու ասիւններուն մէջ:

Հայ մայրը պիտի վերիմաստաւորէ ու վերարժեւորէ «հայրենասիրութիւն» յղացքը, որ այնքան աղաւաղուած է մեր օրերուն: Հայրենասիրութիւնը գերազանցօրէն ոգի է ու պայքար, սեր ու նուիրում, մաքառում ու պայքար, հայրենակերտում եւ պետականաշինութիւն հիմնուած մեր պատմական յիշողութեան, ազգային գաղափարախօսութեան վրայ եւ նորանոր սխրանքներու հեռանկարով տեսլավառ: Իսկ հայ մայրը պիտի ըլլայ հայրենասիրութեան ոգիին կրողն ու փոխանցողը սերունդէ սերունդ եւ որդուց որդի: Ինչ կը վերաբերի հայրենաստիքութեան, Խրիմեան Հայրիկ այնքան դիպուկ կերպով կը պատգամէ. «Պինդ բռնէ հողը, մի՛ թողուր որ ուրիշը յափշտակէ, յետոյ շատ կը զոջաս, անգամ մը որ հողը կորսնցնես, մուրացկան կը դառնաս»: Այս ոգին եւ գիտակցութիւնը, այս պատասխանատուութիւնը՝ օղի, ջուրի, հացի նման ներարկելու է հայ մայրը՝ իր զաւակներու մատղաշ հոգիներէն ներս: Պատի՛ւ ու փա՛ռք բոլոր հերոսածին հայ մայրերուն, որոնք հայրենաստիքութեան բարձրագոյն ոգիով մատաղէցին իրենց քաջ



որդիները Արցախեան պատերազմներուն յանուն հայրենեաց սուրբ հողին եւ ազգային մեր արժանապատուութեան:

Մասնաւորելով մտածումներս՝ օտար երկինքներու տակ ապրող տարագիր հայ մօր, պիտի շեշտել որ ան կը գտնուի գերազանցօրէն՝ այլասերող եւ ուժացնող վիթխարի ալիքներու հոսանքն ի վեր թիավարելու հրամայականին տակ: Մարտահրաւեր՝ որուն դիմագրաւումը երիցս դժուար ու դաժան է եւ կ'ենթադրէ ամէնօրեայ աշխատանք, ամէնօրեայ մաքառում, սիրով ու հաւատքով ամրապինդ: Միփութահայ իրականութեան մէջ ապրող մայրը պիտի կարենայ հայ հողի, ազգային արմատներու գիտակցութիւն եւ պատկանելիութիւն փոխանցել իր զաւակներուն՝ բազմամշակոյթ ու բազմացեղ աշխարհի խառնիճաղանճին մէջ», Աւելին, ազգային-քաղաքական բարձր գիտակցութեամբ, հայ մայրը պիտի կարենայ՝ իրաւագործ ժողովուրդի պահանջատիրութեան ոգիով եւ պատասխանատուութեամբ դաստիարակել իր զաւակները:

Եւ այսպէս, հայ մայրը պիտի ըլլայ հայ դայրոց ու Մերոպեան բառ ու բան, ան պիտի ըլլայ հայոց եկեղեցի եւ հայոց պատմութիւն: Ան պիտի ըլլայ հայոց հայրենիք, որուն հիմնական կորիզը միշտ ալ հայ օճախն է, որուն հայեցի ոգին՝ իր շունչով է պահեր-պահպաներ հայ մայրը դար ու դարեր...

Որքան ճիշդ ու իմաստալից կը հնչեն Արամ Ա. Կաթողիկոսի խօսքերը հայ մօր մասին, գրուած իր սրբատառ Կոնդակին մէջ, ուր 2013 թուականը ան կը հռչակէր Հայ Սօր Տարի:

«Հայ մայր՝ վ հայր հայ մնաց՝ պատմութեան ամեհի ալիքներուն դիմաց:

Հայ մայր՝ վ հայր հայ է՝ ներկայ ժամանակներու ինքնութիւն ապականող հոսանքներուն դիմաց:

Հայ մայր՝ վ հայր հայ՝ պիտի մնայ՝ գալիք բոլոր ժամանակներու մարտահրաւերներուն դիմաց»:

Փա՛ռք ու պատի՛ւ մեր բոլոր մայրերուն:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՆՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶԳՈՅՑ

ՊԱՏՄԱԲԱՆ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ ՀԵՏ

«ԵԹԷ ՉԵՍ ԱՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ՝ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻ ԿԱՍ ՎԱՐՉԱՊԵՏԻ, ԱՐԱ ԳՈՆԷ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ» ՀՐԱՊԱՐԱԿ

14/3/2026



Պատմաբան, ակադեմիկոս Աշոտ Մելքոնեանի հետ զրուցել ենք Ադրբեջանի ազդեցիկ ու պահանջատիրական եւ Հայաստանի պարտուողական ու զիջողական քաղաքականութեան, մեր շուրջ օր-օրի թանձրացող գոյաբանական սպառնալիքների մասին:

- *Ադրբեջանը գրեթէ ամենօրեայ յաճախականութեամբ, յատկապէս Արցախը բռնազավթելուց եւ հայաթափելուց յետոյ, որպէս ռազմավարական ծրագիր՝ յայտարարում է 300 կամ 500 հազար ադրբեջանցիների վերադարձն «Արեւմտեան Ադրբեջան»՝ ՀՀ ինքնիշխան տարածք: Մեր իշխանութիւնները լուռ են՝ չեն հակադարձում: Ադրբեջանի տարածքում հայեր չեն ապրել, վերադարձի ինդիք մենք չունենք:*

- Խորհրդային Ադրբեջանի կազմում հայութիւնը գրեթէ միշտ կազմել է բնակչութեան առնուազն 12 տոկոսը՝ որպէս երկրորդ էթնոս, ընդհանուր թաթարների համեմատութեամբ: 1926 թ. ԽՍՀՄ առաջին մարդահամարի տուեալներով՝ հայերի թիւն Ադրբեջանում կազմել է 282 հազար, ներառեալ ԼՂԻՄ-ի հայութիւնը՝ 111 հազար 694: Իսկ 1989թ. ԽՍՀՄ վերջին մարդահամարով՝ հայերի թիւը 475 հազար էր, որից 140 հազարը Լեռնային Ղարաբաղի տարածքում էր: Այսինքն, մօտ կէս միլիոն հայ բնակչութիւն կար Ադրբեջանի կազմում, որի մասին այսօր մենք ոչինչ չենք խօսում: Վերցնենք հակառակ պատկերը. 1989թ.

մարդահամարով՝ երկու տուեալ կայ. 84 հազար եւ 89 հազար ադրբեջանցի, որ ապրում էր Հայաստանում: Ինչո՞ւ 5 հազարի տարբերութիւն կայ: Երբեմն մուսուլման քրդերին մտցնում էին ադրբեջանցիների մէջ, ինչպէս մտցրին Ամասիայի շրջանի օղուզ օսմանեան թուրքերին: Եւ հիմա, ժողովրդական խօսքով ասած, սելը ճոռալու փոխարէն սելուորն է ճոռում: Մենք, որ Ադրբեջանական ԽՍՀ տարածքում մինչեւ 1991թ. ունէինք մօտ կէս միլիոն հայութիւն, ոչ մի ծպտուն չենք հանում, իսկ Ադրբեջանը զիջեր-ցերեկ խօսում է այն մասին, որ իբր 300 հազար ադրբեջանցի է եղել մեր տարածքում, եւ նրանց նկատմամբ իբր ցեղասպանութիւն է իրականացուել, եւ իրենք պետք է վերադառնան իրենց հայրենի վաթանը, ինչպէս իրենք են ասում: Եթէ նրանք առաջ գուտ հրապարակախօսական, յետոյ «գիտական» մակարդակով սկսեցին խօսել «Արեւմտեան Ադրբեջանի» մասին, հիմա արդէն պետական մակարդակով, առաջին դէմքի մակարդակով են խօսում վերադարձի մասին:

- *Ինչո՞ւ: Մեր «Էստի համեցեք» զիջողական քաղաքականութի՞ւնն է Ադրբեջանին առիթ տալիս՝ նման պարտադրանքով նախ՝ խօսելու եւ յետոյ՝ գործելու:*

- Մեր «խաղաղութեան խաչմերուկ» ծրագրի առաջադրման պարագայում, երբ Ադրբեջանն անընդհատ ճնշումներ է գործադրում մեզ վրայ, եւ մենք ընկրկում ենք պետականօրէն, նրանք եկան այն եզրակացութեան, թէ ի՞նչ կարիք կայ զոհեր տալու, ինչպէս 2020-23թթ. պատերազմի ժամանակ, երբ կարելի է դիւանագիտական ճնշման արդիւնքում հասնել



յաջողութեան եւ «Զանգեզուրի միջանցք» բացել: Նաեւ՝ խօսել այն մասին, որ Մեւանայ լճի առնուազն արեւելեան ափն Ադրբեջանի մաս է կազմում, յետոյ անցան աւելի առաջ՝ ամբողջ Վայքին ու Սիւնիքին, եւ արդէն հասել են Երեւանին: Ինչպէս տեսնում ենք, պատմագիտական կեղծիքը դարձել է հայեցակարգ Ադրբեջանի համար, ինչի հետ կապուած՝ մենք համարժէք հակահարուած չենք տալիս: Ոչ միայն գիշեր-ցերեկ պատմաբանները պէտք է խօսեն դրա մասին, այլեւ պիտի խօսեն պետական մակարդակով: Որքանո՞վ է ընդունելի մեր կողմից այն հանգամանքը, որ, այսպէս կոչուած, 300-500 հազար ադրբեջանցիների վերադարձից հրաժարուելու դիմաց մենք էլ հրաժարուում ենք արցախցիների վերադարձի իրաւունքից: Բայց մենք դրա իրաւունքը չունենք: Արցախն անկախ հանրապետութիւն էր, անգամ եթէ այդ հանգամանքը հաշուի չառնենք, այն խորհրդային տարիներին պետական կազմաւորում էր Ադրբեջանի կազմում, ինքնավարութիւն ուներ:

- Մենք ոչ միայն չենք հակադարձում, որ հայերն էլ կարող են վերադառնալ Ադրբեջան, այլեւ Արցախի էթնիկ գտման իրողութիւնն ենք կոծկում: Այսպէս հեշտ ու անխտով մոռացա՞նք Արցախը:

- Եթէ ադրբեջանցիներն այսօր իրենց վերադարձի հարցն են բարձրացնում՝ այն դէպքում, երբ Խորհրդային Հայաստանի տարածքում իրենք որեւէ ինքնավարութեան նշոյլ չունէին, մենք ունէինք երկու ինքնավարութիւն Ադրբեջանի կազմում. մէկը Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութիւնն էր, միւսը՝ ԼՂԻՄ-ը, որ պետական կազմաւորում էր: Մենք ադրբեջանցիների համեմատութեամբ ունենք առաւելութիւն այն տեսանկիւնից, որ խորհրդային Ադրբեջանի կազմում պետականութիւն ունէինք: Այսինքն, լուծարուել է մեր պետականութիւնը, մեզ հայրենազրկել են՝ ենթարկելով ցեղասպանութեան, որն ամբողջովին տեղաւորուում է 1948թ. ՄԱԿ-ի ընդունած ցեղասպանութեան բանաձեւի կէտերի մէջ: Մենք ոչ միայն պէտք է դնենք պարզ վերադարձի խնդիրը, այլ նաեւ՝ մեր կորցրած պետականութեան: Մեր պարագայում նաեւ պետական կազմաւորման խնդիր կայ: Անընդհատ խօսում են միայն, որ Արցախի բնակչության վերադարձի խնդիր պէտք է դրուի: Ոչ, Արցախի պետականութեան հարցն էլ պէտք է դրուի:

- Թրքալեզու ցեղերը ե՞րբ են յայտնուել մեր տարածաշրջանում: Մեր հասարակութեան որոշ շերտեր անտեղեակութիւնից մոլորութեան մէջ են, եւ զգալի մասն էլ թրքական քարոզչութեան սպառողն է դարձել:

- Ամէն մի երիտասարդ ժողովուրդ, տուեալ դէպքում՝ թիւրքալեզու ժողովուրդներից ներկայիս ադրբեջանցիները, այսպէս կոչուած, իրենց բնիկութիւնն այստեղ հաստատելու համար պէտք է դիմէին կեղծարարութեան: Եւ դա սկսուեց 20-րդ դարի 50-60-ական թուականներին: Դրա ակունքներում ծագումով հրեայ Միլերն էր՝ Ադրբեջանից, որն էլ էստաֆետը փոխանցեց Զիա Բունիաթովին: Իմաստը հետեւեալն էր, որ ադրբեջանցիները, որպէս էթնոս, ի սկզբանէ այս տարածաշրջանում ապրել են: Որպէսզի այդ կեղծ հայեցակարգը նրանք կարողանային տեղից շարժել եւ դարձնել պաշտօնական, սկսեցին տարածաշրջանի բոլոր հնագոյն ժողովուրդների պատմութիւնը իւրացնել: Մենք միշտ խօսում ենք հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգութեան իւրացման մասին, բայց



բոլոր ժողովուրդների պատմամշակութային ժառանգությունը իւրացնելու ճանապարհով են գնացել աղբրեջանցիները: Քանի որ որպէս էթնոս, ժողովուրդ՝ նրանք ձեւաւորուել են 20-րդ դարի ընթացքում եւ «աղբրեջանցի» անուան տակ հանդէս են եկել միայն 1936թ.

դեկտեմբերի 5-ից՝ ստալինեան սահմանադրութիւնից յետոյ: Տարածաշրջանն ի սկզբանէ եղել է արիական-հնդեւրոպական ծագման, եւ՝ որպէս պատմական ժողովրդագրութեան մասնագէտ, ուսումնասիրել եմ եւ համոզուել, որ, հայ ժողովրդի էթնոգենեզի ծագումնաբանութեան գործընթացից սկսած, տարածաշրջանն էթնիկապէս եղել է զտարին մոնոէթնիկ: Սա հայկական լեռնաշխարհին բնորոշ երեւոյթ է եղել: Եթէ շատերը պնդում են, թէ տարբեր էթնիկ խմբերի ձուլման արդիւնքում է հայ ժողովուրդը ձեւաւորուել, իրականութեան մէջ այդպէս չէ: Մինչեւ ընդհուպ 16-րդ դարը հայկական լեռնաշխարհը գերազանցապէս եղել է էթնիկապէս միատարր՝ հայկական ծագում ունեցող: Էթնիկ դիմախեղումն սկսուել է 16-18-րդ դդ. թուրք-պարսկական երկարատեւ պատերազմների հետեւանքով, երբ տարածաշրջանում յայտնուեցին թիւրքական նորանոր ցեղեր: Եւ հետագայի, այսպէս կոչուած, աղբրեջանցիները ձեւաւորուեցին այդ էթնիկ խառը սինթեզի արդիւնքում, բայց չունէին ինքնանուանում անգամ: Նրանց որպէսզի զանազանէին միւս ժողովուրդներից, ուղղակի իսլամ էին անուանում: Խորհրդային տարիներին, երբ արտասահմանում աղբրեջանցին հանդիպում էր աղբրեջանցու, ասում էր՝ մուսուլման սը՞ն՝ դու մուսուլման՞ ես: Այսինքն, «մուսուլման» ասուածն ընկալում էր որպէս էթնիկ հանրոյթ: Եւ պատահական չէ, որ 1921թ. հուլիսի 5-ի քաղբիւրոյի այդ չարաբաստիկ որոշումով, երբ Արցախը միացուեց Աղբրեջանին, այնտեղ նշուած էր. «Ելնելով հայերի եւ մուսուլմանների միջեւ հաշտութիւն հաստատելու անհրաժեշտութիւնից...», չի ասում՝ աղբրեջանցիների: Հետագայում «աղբրեջանցի էթնոս» անուան տակ հանդէս եկող հանրոյթն իր մէջ սկսեց ներառել քրդերի զգալի մասը եւ օսմանեան թուրքերի՝ օղուզների: Մի օրինակ բերեմ. Ամասիայի շրջանում ապրող աղբրեջանցիներն իրականում սինի օղուզ թուրքեր էին՝ օսմանեան թուրքեր, որոնց եւս պարտադրեցին «աղբրեջանցի էթնիկ» անուանումը: Այդ մուսուլման հաւաքական կրօնական անուան տակ աստիճանաբար սկսեց ձեւաւորուել մի երիտասարդ էթնոս, որը փնտոտութի մէջ էր՝ իր ինքնութեան առումով: Ինքը չգիտէր, թէ ինչ է, եւ մինչեւ հիմա Աղբրեջանում վիճում են դրա շուրջ:

- *Գոնէ, յանուն արժանապատուութեան եւ ինքնայարգանքի, ինչպէ՞ս մեզ դրսեւորենք՝ ե՛ւ որպէս պետութիւն, ե՛ւ որպէս հասարակութիւն:*

- Այն, որ այս բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում պէտք է դրսեւորել զգուշաւորութիւն, համաձայն եմ, բայց ո՛չ վախկոտութիւն: Զգուշաւորութիւն, որը վախկոտութեան մակարդակի է, որ ստիպում է ճշմարտութիւնը թաքցնել, ասելիքդ չասել, միմիայն բումբերանցի նման կ'աշխատի քո դէմ: Գոնէ համաշխարհային հանրութեանը ներկայացրու իրականութիւնը: Եթէ դա չես անում պետական մակարդակով, պետական խողովակներով՝ արտգործնախարարութեան կամ վարչապետի, արա գոնէ գիտնականների մակարդակով: Մեզ համար ստեղծէք հնարաւորութիւններ՝ քարոզչական իմաստով, որ ճշմարտութիւնը հասցնենք աշխարհին: Քարոզչական դաշտում մենք պարտութիւն ենք կրում: Պետական աջակցութիւն է պէտք գիտնականին՝ գոնէ քո պատմական ճշմարտութիւնը մարդկանց հասցնելու համար: Իւրաքանչիւր պատերազմ եւ յաղթանակ,

բնականաբար, տեղի են ունենում այն դեպքում, երբ դու գաղափարապէս այն նախապատրաստում ես եւ ճիշտ ուղղութեամբ ես տանում: Իսկ մենք այդպէս չենք անում: Անընդհատ խօսել խաղաղութեան խաչմերուկի մասին, երբ ամբողջ Արեւելքը կրակների մէջ է, դառնում է արդէն ծիծաղելի: Դրա համար էլ պիտի ճշմարտութիւնն ասել մինչեւ վերջ, եթէ ոչ պետական մակարդակով, գոնէ գիտնականների մակարդակով: Յամենայնդէպս, ես չեմ նկատել, որ մեզ խրախուսելու, ուղղորդելու առումով այդ բնագաւառում աշխատանք է տարւում:

Տելիքս Եղիազարեան

«Հրապարակ» թերթ

ԿԻՊՐԱՀԱՅ

ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ԻՐ ԿՈՂԱԿԻՑԻՆ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ



Կիպրոս կատարած իրենց այցելութեան ընթացքին, սոյն թուականի փետրուար 18-21 օրերուն, ՀԲԸՄիութեան նախագահ Սեմ Սիմոնեան եւ իր կողակիցը պաշտօնական այցելութիւն մը տուին Նիկոսիա եւ Լառնագա, ընկերակցութեամբ Կեդրոնական Մարմնի անդամներ՝ Վազգէն Եագուպեանի (Հայաստանի ՀԲԸՄիութեան նախագահ) եւ Նազարէթ Ֆրստըզճեանի (ՀԲԸՄիութեան գանձապահ): Այցելութեան նպատակն էր մօտէն ծանօթանալ տեղւոյն հայ համայնքին հետ, հանդիպում ունենալ համայնքային միաւորներուն եւ ղեկավարութեան հետ, ինչպէս նաեւ՝ ապագայի ռազմավարական ծրագիրներ քննարկել:

Այցելութեան ընթացքին, Պենոն Սեւան, ՀԲԸՄիութեան Կեդրոնական Մարմնի անդամ եւ Կիպրոսի մէջ ՀԲԸՄիութեան Ներկայացուցիչ, ազնուօրէն հիւրընկալեց զիրենք

Ճաշկերոյթով մը իրենց պատուին ի ներկայութեան Կիպրոսի մօտ ՀՀ դեսպանութեան ներկայացուցիչներու, Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս արք. Օհանեանի, Արժանապատիւ Հայրերու, կիպրահայ համայնքի Պետ. Ներկ. Տէր եւ Տիկ. Վարդգէս Մահտեսեաններու, համայնքիս Թեմական, ազգային, կրթական, բարեսիրական եւ մամուլի ներկայացուցիչներու հոծ հանրութեան:



Երեկոյին ընթացքին, ՀԲԸՄիութեան նախագահ Սեմ Միմոնեան, ներկաներուն հետ բաժնեց իր տպաւորիչ խորհրդածութիւնները՝ յետ նոյն օրը, Մելգոնեան Կրթական Հաստատութիւն կատարած իր այցին:

Ան յատկապէս ըսաւ. «Այսօր ինձի համար շատ յուզիչ օր էր, երբ քալեցի Մելգոնեան Կրթական Հաստատութեան հողատարածքին վրայ, անցայ այն ճամբաներէն ուր հայրս քալած էր Համաշխարհային երկրորդ պատերազմի օրերուն: Այսօր մենք սկսանք մտածել այն ծրագիրներուն մասին, որոնք նոր շունչ ու կենդանութիւն պիտի հաղորդեն Մելգոնեանին...Եւ երբ ատիկա իրականութիւն դառնայ, Կիպրահայ գաղութը հպարտ պիտի զգայ անով,

Կիպրոսի կառավարութիւնը հպարտ պիտի զգայ, Հայկական Կառավարութիւնը հպարտ պիտի զգայ»:

Իր խօսքերը լայն արձագանգ գտան ներկաներուն մօտ, անոնց յիշեցնելով այն ոգեկան ժառանգութիւնը գոր կը կրէ Մելգոնեանը եւ այն պատասխանատուութիւնը գոր կը բաժնենք կերտելու համար անոր ապագան: Իր նշած տեսլականը միմիայն պատմական հաստատութիւն մը վերականգնելու մասին չէր – այլ յիշողութիւն մը փառաւորելու մասին էր, Հայկական ինքնութիւնը զօրացնելու մասին էր եւ կերտելու բան մը որ արժանի ըլլայ գալիք սերունդներուն:

Պատուիրակութիւնը հանդիպումներ ունեցաւ Նիկոսիոյ Մասնաճիւղի նախկին վարչութեան հետ, ներկայիս գործող ընթացիկ վարչութեան հետ եւ համայնքի անդամներու հետ:



Պաշտօնական հանդիպումները ընդգրկեցին նաեւ հանդիպումներ՝ կիպրահայ համայնքի պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի, Թեմիս կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս արք. Օհանեանի, Կիպրոսի մօտ ՀՀ դեսպանուհի Ն.Վ. Իննա Թորգոմեանի հետ:

Այս այցելութիւնը վերստին կ'ամրապնդէ ՀԲԸՄիութեան յանձնառութիւնը համայնքային կապերը զօրացնելու գծով եւ կղզիին հայ կեանքին համար՝ աշխոյժ ու կայուն ապագայ մը կերտելու ուղղութեամբ:

Համադրեց՝ Երան Գույումճեան

ԿԻՊՐԱՀԱՅ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԴԳԷՍ ՄԱՀՏԵՍԵԱՆԻ ԷՋԷՆ.-

ՀԱՆԴԻՊՈՒՄ Հ.Բ.Ը.Մ-Ի Նախագահ Մեմ Սիմոնեանի հետ



Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Վարդգես Մահտեսեան, պաշտօնական այցելութեամբ Կիպրոս ժամանած Հ.Բ.Ը.Միութեան Նախագահ Մեմ Սիմոնեանի հետ կայացած սիրալիք երկու հանդիպումներու ընթացքին առիթը ստեղծեց արծարծելու Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակման մտահոգիչ հարցը եւ անոր վերաբերեալ անցնող տարիներու ընթացքին շինիչ նպատակաւ իր կողմէ ներկայացուած առաջադրանքներու շարքը: Պրն. Մահտեսեան անդրադարձաւ նաեւ իր օրով նախաձեռնուած Մելգոնեանի առընչակից երեք կարեւոր իրագործումներու. Հաստատութեան կարգ մը կառոյցներու պահպանման պետական հրամանագրի գրաւականը: Ցեղասպանութեան 100 ամեակին նուիրուած Կիպրոս-Հայաստան

դրոշմաթուղթերու թողարկումը՝ Մելգոնեանի պատմական նկարներով: Բովանդակալից նոր «Մելգոնեան Յուշամատենան»-ի հրատարակութիւնը, մեկենասութեամբ՝ Կիպրոսի Տեղեկատուութեան Գրասենեակին եւ Կրթական Նախարարութեան:

Պրն. Մահտեսեան, այս հանդիպումին յատկապէս ծանրացաւ Մելգոնեանը վերաբանալու էական հարցին, շեշտելով որ այսպիսի որոշումի մը անմիջական գործադրութիւնը, կրթական նոր ծրագրի մը մշակումով կրնայ ըլլալ տնտեսապէս կենսունակ ու վերանորոգել մեծ բարերարներուն կտակը եւ աշխարհացրի հայութեան յոյսերը:

Կրթական այս կարեւոր առաքելութեան վերառարկայացման առընթեր՝ Պրն Մահտեսեան տակաւին հաստատութեան այժմու կալուածին վրայ գործնական երեք առաջարկներ եւս ներկայացուց Պրն. Սիմոնեանին.

Հայկական Թանգարանի մը ստեղծումը:

Մփիւռքահայ երիտասարդներու համար ամառնային դպրոց - ճամբարի դրութիւն:

TUMO Արուեստագիտական Կեդրոնի հաստատում եւ գործունէութիւն:

Նախագահ Սիմոնեան տարուած այս ջանքերը դրական եւ գնահատելի նկատեց, իր լուստեսութիւնը արտայայտելով Մելգոնեանի ապագային նկատմամբ:

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ՝ ՆԻԿՈՍԻՈՅ ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ԱԿՈՒՄԲԻՆ ՄԷՁ



ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ՆԻԿՈՍԻՈՅ Մասնաժողովի գործող Վարչութիւնը գեղեցիկ գաղափարը ունեցած էր Մարտ 8-ի Կանանց Միջազգային Օրը նշել նորարարական ոճով, շեշտը դնելով կանանց ստեղծագործական ոգիին, նոր կապեր եւ տրամադրող մթնոլորտ ստեղծելու կարողականութեանց արտայայտութեան վրայ:

Շաբաթ, 7 Մարտ 2026, կ.ե. ժամը 5:00-ին, Միութեան Նիկոսիոյ ակումբի սրահը իւրօրինակ ձեւով յարդարուած էր, սեղաններու վրայ ջրաներկի յատուկ սարքերով, ներկերով... մթնոլորտին մէջ կը տիրէր մտերմիկ շունչ մը, պաղ պաշտօնականութենէ հեռու... Ակնառու էր ներկայութիւնը երիտասարդ տիկիներու եւ օրիորդներու, որոնք շուտով գործի լծուեցան եւ ջրաներկով ստեղծագործեցին գունազեղ պաստառներ, որոնք մէկ առ մէկ ջերմ գնահատանքի արժանացան ներկաներուն կողմէ: Անոնցմէ երեք պաստառներ արժանացան մրցանակի, թէեւ «Ժիւրի»ն կամ դատական յանձնախումբի անդամուհիները դժուարութիւն ունեցան ընտրութիւն կատարել ներկայացուած պաստառներուն մէջ, որոնք բոլորն ալ ունէին իրենց հմայքը, արտայայտչական ոճը, գունազեղ գրաչութիւնը: Հիւրասիրուած գինին եւ տեսակաւոր ուտեստները առաւել ջերմութիւն փոխանցեցին ստեղծուած ընկերական տաքուկ մթնոլորտին:



Յատուկ գնահատանքի արժանի են՝
ատենապետուհի Տիկ. Էլիզապեթ
Քեպերլեանի գլխավորությամբ, Միութեան
վարչական անդամները, որոնք կրցեր էին
նման իւրայատուկ ձեռնարկով
տօնակատարել Մարտի 8-ը, արժանի
յարգանք ընծայելով կանանց, իրենց տօնին
առիթով:

ԲՈՒՆՈՒՄՆ ՎԱՐՁՔԸ ԿԱՏԱՐ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ԴԱՐՁՆԵԼ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՁԱՅՆԸ

ԱՐՏԱ ՃԷՊԷՃԵԱՆ

Դոկտոր ընկերալեզուաբանութեան



Նախորդ յօդուածին մեջ
ներկայացուած տուեալները մեզ
կը հրաւիրեն լուրջ
խորհրդածութեան.

արեւմտահայերէնի
կենսունակութեան պահպանումը
այսօր մեր համազգային
առաջնահերթութիւնն է: Մեր
նպատակն է արեւմտահայերէնը

հասցնել հոն, ուր կը բարախէ նոր սերունդին սիրտը՝ թուային հարթակներէն մինչեւ



առօրեայ ստեղծագործական շփումներ: Այս յօդուածով լուսարձակի տակ պիտի առնենք այն գործնական եւ խոստմնալից քայլերը, որոնք կրնան լեզուի ուսուցումը վերածել ներշնչող, ժամանակակից եւ կենսունակ փորձառութեան մը:

Նախքան բուն նիւթին անցնիլը՝ կրկին կենսական է կատարել հետեւեալ մատնանշումը. լեզուի մը ճակատագիրը կը դարբնուի տան մէջ: Նկատի առնելով, որ այսօր, երբ հայ նորահաս սերունդի զգալի մասը զուրկ է հայկական դպրոց յաճախելէ կամ առիթը չունի հայեցի կրթութիւն ստանալու դպրոցական նստարաններուն վրայ, արեւմտահայերէնի պահպանման հիմնաքարը ծնողներու նախանձախնդիր կեցուածքն է: Ընտանիքն է այն առաջնային վայրը, ուր կը վճռուի լեզուի մը լինելութիւնը:


Մեր առաքելութիւնը՝ դէպի կենսունակ եւ հպարտ սերունդ

Թէեւ լեզուական փոխանցման աւանդական շղթան փոփոխութիւններ կրած է, սակայն մեր կրթօճախներն ու շաբաթօրեայ դպրոցները կը մնան այն հաստատուն հիմքը, որուն վրայ կրնանք կերտել մեր մայրենիին պահպանումը: Այժմ քննարկենք, թէ ինչպէ՛ս կրնանք մեր կրթական մօտեցումները արդիականացնել՝ զանոնք համապատասխան դարձնելով արդի ժամանակներու պահանջներուն:

Այս յօդուածին մէջ առաջարկուած քայլերը սոսկ կրթական բարեփոխումներ չեն, այլ՝ հեռանկարային ռազմավարութիւն մը, որուն նպատակն է կերտել հետեւեալ կենսական իրագործումները.

- Առաջնահերթութիւն տալ խօսելու եւ լսելու կարողութեան, որպէսզի հայերէնը դառնայ կենդանի հաղորդակցութեան միջոց:
- Դաստիարակել սերունդ մը, որ ներքնապէս կը հաւատայ, թէ արեւմտահայերէնը լոկ ժառանգութիւն չէ, այլ՝ ապագայ ունեցող եւ կենդանի մնալու արժանի գանձ:
- Թարմացնել համայնքային հպարտութիւնը, ուր լեզուն կը դառնայ միաւորող եւ զօրացնող ուժ:

Կերտել անհատներ, որոնք լեզուն կը գործածեն ազատօրէն եւ ստեղծագործաբար՝ առանց ձախողելու վախին:



– Վերականգնել լեզուին հանդէպ աշակերտին անձնական եւ զգացական կապը՝ զայն դարձնելով սեփական ինքնութեան անբաժան մասը:

Նախ՝

Ո՞րոնք են այսօրուան հայ աշակերտները

Այսօրուան աշակերտները թուային սերունդի ներկայացուցիչներ են, որոնք կ'ապրին այնպիսի աշխարհի մը մէջ, ուր տեղեկատուութիւնը վայրկենական է, իսկ սահմանները՝ գրեթէ անհետացած: Անոնք միջազգայնօրէն կապուած սերունդ մըն են, որ կը բնորոշուի ընկերային բարձր գիտակցութեամբ, արհեստագիտական հմտութեամբ եւ «սպառողի» փոխարէն՝ «ստեղծագործողի» մտածելակերպով:

Ի՞նչ են այսօրուան հայ աշակերտներուն կարողութիւնները

Անոնք ունակ են բնագոյաբար տիրապետելու բարդ թուային գործիքներուն՝ յաճախ ինքնաշխատութեամբ սորվելով այնպիսի հմտութիւններ, ինչպիսիք են՝ ծրագրաւորումը, տեսանիւթերու մշակումը կամ թուային ձեւաւորումը: Անոնք ունին տարբեր մշակոյթներու հետ համագործակցելու բնական ձիրք եւ կ'օգտագործեն իրենց ձայնը՝ ջատագովելու համար ընկերային եւ բնապահպանական մեծածաւալ փոփոխութիւններ: «Կեղծ լուրերու» դարաշրջանին անոնք կը զարգացնեն ահռելի քանակութեամբ տուեալներ գտելու իրայատուկ կարողութիւն մը, թէւ տակաւին կարիքն ունին առաջնորդութեան՝ այդ կասկածամտութիւնը վերածելու համար իրական լրատուական գրագիտութեան:

Ի՞նչ են այսօրուան հայ աշակերտներուն հիմնական կարիքները



Յաջողելու համար այս աշակերտները լոկ սերտողութենէն աւելիին պէտք ունին: Անոնց անհրաժեշտ են ուսման ուղիներ, որոնք կը յարգեն իրենց նախասիրութիւններն ու յառաջդիմութեան թափը: Նոյնքան կարեւոր է հոգեկան առողջութեան աջակցութիւնը՝ դիմագրաւելու համար 24/7 թուային կեանքի ճնշումները: Ամէնէն առաջ անոնք կարիքը ունին իրական նպատակի՝ այնպիսի կրթութեան մը, որ կը կապէ արեւմտահայերէն լեզուի դասերը իրական կեանքի գործնական կիրարկութեան եւ ապագայի հմտութիւններուն, ինչպիսիք են զգացական բանականութիւնը (Emotional Intelligence, EQ) եւ ստեղծագործական կարողութիւնները:

Արեւմտահայերէնի ուսուցման նոր հորիզոններ՝ ռազմավարական մօտեցումներ

Արեւմտահայերէնի պահպանումը այսօր կախեալ է զայն երիտասարդութեան առօրեայ հաղորդակցութեան կենդանի գործիք դարձնելու մեր կարողութենէն:

Ժամանակն է արեւմտահայերէնի դասաւանդման ձեւերը վերատեսութեան ենթարկելու՝ զայն ձեռքագատելով քննութիւններու եւ գրաւոր վարժութիւններու կաղապարներէն: Հարկ է վերահասարակշռել կրթական պահանջները՝ նկատի առնելով, որ արեւմտահայերէնը պետական կամ համաշխարհային քննութիւններու պարտադիր ցանկին վրայ չէ: Մայրենին անձնական ինքնութեան եւ զգացական աշխարհի արտայայտութեան լեզու է, կրթական նոր ռազմավարութիւնը պէտք է առաջնահերթութիւնը տայ՝ աշակերտի ազատ ինքնարտայայտութեան, սեփական կարծիքը հիմնաւորելու կարողութեան եւ առօրեայ հաղորդակցական հմտութիւններուն:

Ընկերալեզուաբանութիւնը, յատկապէս՝ փոքրամասնութիւններու եւ վտանգուած լեզուներու պարագային, կը հաստատէ, որ **լեզուի մը գոյատեւումը կախեալ չէ անոր քերականական անսխալականութենէն, այլ՝ անոր գործառնական արժեքէն**: Սփիւռքեան միջավայրի մէջ, ուր տիրապետող լեզուն կը ճնշէ մայրենիին, կրթական համակարգը պէտք չէ ըլլայ լոկ գիտելիք ջամբող հաստատութիւն, այլ վերածուի «լեզուական ապահով տարածքի»:

Այս պատճառով արեւմտահայերէնի ուսուցիչները պէտք է սերտօրէն գործակցին ընկերալեզուաբաններու հետ՝ երաշխաւորելու համար լեզուի կենսունակութիւնը սփիւռքեան փոփոխական պայմաններուն մէջ: Այս համագործակցութիւնը թոյլ կու տայ դասաւանդման ձեւերը յարմարեցնել լեզուական իրականութեան, ուր շեշտը կը դրուի ոչ թէ



սոսկ կանոններու պահպանման, այլ լեզուն իբրեւ ստեղծագործական եւ հաղորդակցական կենդանի միջոց կիրարկելու վրայ:

Միջազգային փորձառութիւն եւ կրթական նոր հորիզոններ

Ընկերալեզուաբանական տեսանկիւնէն եւ այլ համայնքներու, ինչպէս՝ պասք, քաթալան, մաուրի եւ ուելշ, փորձառութենէն մեկնելով, ահա քանի մը հիմնական սիւներ, որոնց վրայ արժէ խարսխել մեր նորօրեայ կրթական առաքելութիւնը.

1.- Թուային Արդիականացում

Նոր սերունդը կը հաղորդակցի պատկերներու եւ թուային գործիքներու միջոցով: Լեզուի ներկայութիւնը համացանցի եւ բջիջայիններու վրայ այլեւս ընտրութիւն չէ, այլ՝ պարտադրանք: Դասագիրքերու կողքին, կարելի է որդեգրել փոխկապակցական (փոխազդեցիկ) (interactive) յաւելուածներ (ինչպէս՝ *Gus on the Go*) եւ խաղեր, որոնք ուսումը կը վերածեն հաճելի փորձառութեան: Դասագիրքերը օժտուած ըլլան QR քոտերով, որոնք աշակերտը կը տանին դէպի տեսերիզներ կամ ձայնային նիւթեր: Լեզուն զետեղել «Ինսթակրամ»-ի կամ «Թիքթոք»-ի տիրոյթին մէջ, պատրաստել հայկական նիւթեր եւ քաջալերել հայերէնի գործածութիւնը առցանց զրոյցներու (chats) ու նոյնիսկ վիտէօ-խաղերու (video games) ընթացքին:

2.-Լեզուի կենսունակութիւնը առօրեայ կեանքին մէջ

Ընկերալեզուաբանները կը շեշտեն, որ լեզուն սորվելու լաւագոյն ձեւը ոչ թէ զայն սորվիլն է, այլ այդ լեզուով ապրիլը: Որպէսզի լեզուն չըլլայ միայն «պարտականութիւն», անիկա պէտք է առնչուի երիտասարդի իրական հետաքրքրութիւններուն: Դասարանային քննարկումները կրնան ներառել այնպիսի նիւթեր, որոնք իրենց սրտին մօտ են՝ մարմնակրթութիւն, երաժշտութիւն, արհեստական բանականութիւն (ԱԲ), խաղային աշխարհ, ընկերային ցանցերու բարոյագիտութիւն, սփիւռքեան ինքնութիւն, հոգեկան առողջութիւն, միջավայրի պահպանութիւն, աշխարհաքաղաքացիութիւն: Շեշտը պէտք է շեղի անթերի քերականութենէն եւ սխալներ ուղղելու լարուածութենէն դէպի գործնական հաղորդակցութիւն: Անհատները պէտք է քաջալերուին գործածելու լեզուն բնական երկխօսութիւններու մէջ՝ իբրեւ ինքզինք արտայայտելու միջոց: Աւանդական շարադրութիւններու կողքին, յանձնարարել «Թիքթոք»-ի վիտէոներ, փոտքասթներ կամ Meme-եր:



3.- Մանկավարժական նոր ռազմավարություններ

Արդի մանկավարժությունը կը յուշէ հրաժարիլ «վերէն վար» դասաւանդման ոճէն: Ուսուցիչը այլեւս միայն տեղեկութիւն փոխանցող չէ, այլ՝ լեզուական միջավայր ստեղծող ու քաջալերող: Աշակերտները պարզ ունկնդիրէ պէտք է վերածուին բովանդակութիւն ստեղծողներու: Անոնք կրնան պատրաստել կարճ ժապաւեններ կամ թուային պարբերաբերթեր՝ կիսելով իրենց սեփական պատմութիւնները: Աշակերտները թող պատրաստեն թուային ամսագիրներ կամ կայքեր՝ իրենց նախասիրութիւններուն շուրջ: Դասարանային «Փակ խումբ» ստեղծելով «Ինսթակրամ»-ի վրայ՝ աշակերտը կրնայ մէկ վայրկեաննոց տեսանիւթով բացատրել հետաքրքրական բառ մը կամ օրուան ընթացքին *սթորիզ* պատմել իր առօրեան հայերէնով: Առաջարկուածը հոս այն է, որ լեզուն պէտք է ըլլայ հաճոյքի, կատակի եւ ընկերային գործիք:

4.- Համասփիւռքեան կապ եւ ինքնութիւն

Լեզուով կամրջել տարբեր գաղութներու երիտասարդները՝ անոնց մէջ արթնցնելով հաւաքական պատկանելիութեան զգացումը: Տեսագրոյցներու միջոցով կամ «Ձում» հարթակով կապել աշակերտները այլ երկիրներու հայ տարեկիցներուն հետ: Ասիկա ցոյց կու տայ, որ իրենց լեզուն սահմանափակուած չէ միայն տեղական դպրոցով, այլ մաս կը կազմէ աշխուժ ու համաշխարհային ցանցի մը: Երբ հայերէնը կը յայտնուի իրենց ամէնօրեայ գործածած հարթակներուն վրայ, անիկա կը դադրի ըլլալ միայն «պապենական» կամ «հին» լեզու:

5.- Դպրոց-ընտանիք-համայնք եռամիասնութիւն

Լեզուի պահպանման գործընթացը պէտք է դուրս գայ դասարանի պատերէն եւ դառնայ հաւաքական ճիգ: Դպրոցները պէտք է ստեղծեն «օժանդակութեան հարթակներ» ծնողներուն համար՝ տրամադրելով պարզ նիւթեր, որոնք կ'օգնեն նոյնիսկ ոչ հայախօս ծնողներուն տան մէջ հայկական մթնոլորտ ստեղծելու: Հրապարակային ձեռնարկներու, ակումբներու եւ դպրոցական միջավայրին մէջ հայերէն գրութիւններու միջոցով լեզուին տալ մշտական տեսանելիութիւն եւ շունչ: Օգտագործել սփիւռքահայ թերթերու առցանց լուրերը կամ «Եռութիւն»-ի վրայ առկայ արեւմտահայերէն նախագիծները (ինչպէս՝ *Zarmanazan* կամ *Կրկնակ* դասերը):

Մէկ խօսքով, արեւմտահայերէնը սոսկ հաղորդակցութեան միջոց չէ, այլ՝ կենսունակ կամուրջ մը, որ մեզ կը միացնէ մեր պատմութեան, մշակոյթին եւ, կարեւորագոյնը՝ մեր



ինքնաճանաչման: Խրախուսելով պատանիները, որպէսզի անոնք ստեղծագործեն մայրենիով՝ պատրաստելով վլոկներ, հարցազրոյցներ, թատերական պատկերներ ու թուային պարբերաբերքեր, մենք անոնց կը փոխանցենք լեզուի «տիրութեան» զգացումը: Երբ լեզուն կը դառնայ ընկերային շփման բնական միջոց՝ խմբային աշխատանքներու, խաղերու, եւ համասփիւռքեան փոխանակման ծրագիրներու, անիկա կը վերագտնէ իր կենսունակութիւնը: Ի վերջոյ, մեր նպատակն է ստեղծել այնպիսի միջավայր մը, ուր հայերէնը ոչ թէ պարտադրանք է, այլ՝ ստեղծագործելու եւ աշխարհի հետ հաղորդակցելու հպարտ ու արդիական ձայն:

Արեւմտահայերէնի կրթական վերածնունդը՝ մեր յաղթանակի ճանապարհը

Եթէ ընտանեկան յարկը լեզուի բնական բնօրրանն է, ապա կրթօճախը այն կենսունակ միջավայրն է, ուր մեր մայրենին կը զրահաւորուի արդիականութեամբ: Սփիւռքեան պայմաններուն մէջ դպրոցը լոկ ուսումնական վայր չէ, այլ՝ ոգեշնչման աղբիւր, որ կը միացնէ սերունդները՝ կերտելով հայախօս ապագայ:

Մեր տեսլականն է արեւմտահայերէնը թրթռուն պահել՝ իբրեւ կենդանի, ստեղծագործ եւ աշխուժ հաղորդակցութեան լեզու՝ յատկապէս մեր այն աշակերտներուն համար, որոնք հայկական վարժարաններու երդիքին տակ կը կերտեն իրենց ինքնութիւնը: Այսօր հայ դպրոցը ընտրող իւրաքանչիւր աշակերտ թանկագին ներուժ մըն է, եւ մեր առաքելութիւնն է այդ սերունդին ջամբել այնպիսի լեզուական հարստութիւն, որ արեւմտահայերէնը դառնայ իրենց առօրեայ ինքնարտայայտումի լուսագոյն ու հարազատ միջոցը:

Այս տեսլականը իրականացնելու համար կարելոր է քաղել Մայքըլ Մաքտենիըլի փորձառութեան խորիմաստ պատգամը: Լեզուաբան Մաքտենիըլ, որ 2005-ին Թայլանտ մեկնեցաւ ախա համայնքի լեզուն փրկելու, շուտով հասկցաւ, որ լեզուի գոյատեւման նախապայմանը զայն խօսողին ապահովութիւնն ու առողջութիւնն է. «Գիւղացիները մոծակներու դէմ պաշտպանիչ ցանցեր չունին, եւ մանուկները ճանճերու պէս կը մեռնին: Հիւանդանոցի ծախսերուն համար դրամ չկայ, օդը սաստիկ տաք է, տուններուն մէջ պատառ մը ուտելիք չկայ, իսկ մալարիան իր հունձքը կը կատարէ»: Ան իր ծրագիրները վերադասաւորեց՝ նախ կեդրոնանալով երեխաներու փրկութեան վրայ, գիտակցելով, որ լեզուի ապագան զայն հնչեցնող սերունդին մէջ է:

Նոյնպէս եւ մենք՝ սփիւռքեան մեր իրականութեան մէջ, կոչուած ենք մեր առաջնահերթութիւնները յստակացնելու: Մեր մեծագոյն ներդրումը պէտք է ըլլայ նոր

սերունդի հայեցի կրթութեան եւ հոգեկան կապի ամրապնդումը: Թերեւս թուի, թէ նոր ձեւերու որդեգրումը կը պահանջէ ահռելի միջոցներ, սակայն հայութեան համաշխարհային ներուժը անսպառ է: Մենք ունինք սփիւռքի հսկայական փորձառութիւնն ու նուիրատուութեան ոգին, որոնք պատրաստ են թեւ ու թիկունք կանգնելու իւրաքանչիւր նախաձեռնութեան:

Մեր միասնականութեամբ եւ նպատակասլաց քայլերով մենք կրնանք երաշխաւորել արեւմտահայերէնի ամենօրեայ գործածութիւնը եւ պահպանումը: Վստահինք մեր պատանիներուն երեւակայութեան եւ զինենք զանոնք արդիական գործիքներով, որպէսզի մեր լեզուն հնչէ հպարտ, անկախ եւ յաւերժ ժամանակակից:

Նիկոսիա, մարտ 2026

ԱՇԽԱՐՀԸ ՆՈՒԱՃԵԼՈՒՆ ԴԻՄԱՑ

ՀԱՄԱԿԵՐՊԻ՞Ն, ՅԱՆՁՆՈՒԻ՞Ն, ԹԷ՞ ԸՆԴՎՁԻՆ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ



Մեծապետականները կը շարունակեն աշխարհը մկրատել, բաժնել, փետել, խճրճել, անճիտել, մէկ խօսքով, փորձելով իրենց սահմանները ընդլայնել, նոր հողամասեր իւրացնել, յաւելեալ յափշտակումներ արձանագրել, այլոց վրայ իշխել, տկարներ ստրկացնել, անտէրներ ճգմել: Այս բոլորը, յանուն ինչի՞, եթէ ոչ.

- Սահմաններու ընդարձակման
- Քաղաքական հզօրացման
- Տնտեսական հարստացման

- Արտադրական բերքերու իւրացման
- Ապահովական խաթարման
- Ժողովրդական բնաջնջման
- Պատերազմական հրահրման
- Միջպետական առճակատման
- Յարանուանական պառակտման
- Կամայական ձուլման

Անշուշտ, այս իրողութիւններն ու վերաբերմունքները, գործելաձեւերն ու պարտադրանքները, երբեք ԲՆԱԿԱՆ չէին, բայց ԱՆԲՆԱԿԱՆ սկզբունքներով կը կիրարկուէին, անընդունելի մեթոտներով կը կատարուէին եւ, ամենէն կարելորն ու վտանգաւորը, հակամարդկային ջարդերով, հաշուէյարդարներով եւ անիրաւութիւններով կ'ընթանային:



Զարմանալին, այլապէս արտառոցը այն է, որ նուաճողական, քանդողական ու զաւթողական այս սպառիչ սպառնական քաղաքականութեան որդեգրումը, ո՛չ դադար, ո՛չ զսպուածութիւն ունի, ընդհակառակը, ամէն օր, ամէն հանգրուանի, նոր թափ կը ստանայ, նոր մղումի կ'ենթարկուի, սարսափելի այլանդակութեամբ, անհանդուրժելի մոլեգնութեամբ եւ աններելի վայրագութեամբ:

Այս թռիւքահին ու բարբարոսութեան դէմ, անպատկառութեան եւ ամբարտաւանութեան մոլուցքով վարակուած ստորաքարշ ուժեր, յաւակնութիւնը ունին բարբաջելու եւ աղմկելու, թէ այս եւ նման ալեկոծումները կրնան (իբր թէ) նպաստել աշխարհին բարօրութեան ու բարեկեցութեան, հետեւաբար, անոնք կը ծառայեն նոր աշխարհի մը կերտման ու կազմութեան, յօգուտ խաղաղութեան, հանգստաւէտութեան ու բարգաւաճութեան:

Ինչպիսի՛ ճղճիմութիւն ու ջրիկութիւն, ինչպիսի՛ յիմարական եւ անհեթեթական տրամաբանութիւն եւ որո՞ւն խաբելու կամ որո՞ւն ջաղացքին ջուր հոսեցնելու անհիմն դիտաւորութեամբ:

Միթէ՞ աշխարհը կրնայ նման ցնորամտութեամբ առաջնորդուիլ ու գոյատեւուիլ, երբ անոր ջախջախիչ մեծամասնութիւնը կը դիմագրաւէ, կուտակուող ու բարդացող խայտաբղէտ տագնապներ:

Աւելի քան բացայայտ ու թափանցիկ է, որ այս աշխարհին ինքզինքնին տէր նկատող եւ յորջորջող ստահակներ, միայն իրենց հետ ՉԱՐԻՔ բերին (ու կը բերեն), ԹՈՅՆ սփռեցին (ու կը սփռեն), ՔԱՆԴՈՒՄ գործադրեցին (ու կը գործադրեն), ԵՐԵՄԱՆԵՐ պղծեցին (ու կը պղծեն), ԵՐԿԻՐ եղծանեցին (ու կ'եղծանեն), ժողովուրդ բռնաբարեցին (ու կը բռնաբարեն): Տակաւին ո՞ր մէկը յիշենք, վկայակոչենք եւ օրինակաբերենք, զի անոնք այնքան շատ են, բազմատեսակ ու բազմաբնոյթ, որոնց յիշելն ու թուարկելը, մատի վրայ իսկ չեն համրուիր: Այս ծրագրուած, կազմակերպուած ու դրոշմուած ո՞ր տարբերակներուն մասին կարելի է խօսիլ, յիշել կամ մեջբերել, երբ անոնք քիչ մը ամէն տեղ են եւ ամէն օր կը պատահին: Եթէ ամէնուրեք արիւն է, աւեր ու պատուհաս, ալ ինչի՞ մասին պէտք է մտածել եւ կամ ի՞նչ որակել զանոնք, որոնք բառարանի մը սահմաններէն ալ աւելի են, խոր են, բայց, ո՛չ լսող կայ, ո՛չ ալ մտիկ ընող, բացի զառանցանքներէ, կաղկաչանքներէ ու հրոսակներէ վարակուած վռնակներէն:

Շատեր կը մտածեն, կը յուշեն կամ կը պահանջեն, որ միջազգային ստեաններ ու դէտեր ի՞նչ կ'ընեն, ի տես այս դժոխային ձաբոտութիւններուն, խեղաթիրութիւններուն ու...

կապիկութիւններուն:

Բայց, դո՞ւք, որո՞նց ի նկատի ունիք, որոնք կրնան ձայն բարձրաձայնել ու զգաստութեան հրաւիրել աշխարհատարած ՅԵՅերուն եւ ԻԺերուն:

Միթէ կա՞ն նման «դարման»ներով օժտուածներ, որոնք, իրենք, նոյնքան մեղաւոր են, երբ նման ապականած հոսանքներով ու տեղաշարժերով համակուած են, «քարէ արձաններ» ու «կաւէ կիսանդրիներ»ով տժգոյն ու մռայլ դերեր ստանձնած:

Աշխարհ, քեզ կը քանդեն, կը դիմափոխեն ու կը ձեւափոխեն, իսկ դուն եւ քեզ բովանդակող խամաճիկներ, խաղաղութիւնը կը շփոթեն պատերազմի հետ, մարդկութիւնը անատուններու, քաղաքակրթութիւնը՝ գոեհկութեան, շինարարութիւնը՝ խաւարամտութեան, իսկ գեղարուեստականութիւնը՝ ողբերգութեան հետ:

Եթէ այս է աշխարհը բարեկարգող «հրէշ»ներուն գոյութեան ու գործունէութեան դերակատարութիւնը, այն ատեն, վա՛յ է կերբ բոլոր անոնց ճիտին, որոնք կը կարծեն ու կը հաւատան, որ այս աշխարհը իրենց կրնայ առաջնորդել... կրողի ծոցը:



Այս մուտքը, իր զանազան անցքերով ու ծալքերով, կը վերաբերի այն երկիրներուն, որոնք՝ իրենց փոքր տարածքներով, սահմաններով թէ բնակչութեամբ, համեմտաբար, թուայնօրէն համեատ են եւ այլ աղբիւրներով ալ, ոչ այնքան հարուստ:

Բայց, աւելի ուշագրաւը այն է, որ անոնցմէ երկուքը՝ ՀԱՅԱՍՏԱՆՆ ու ԼԻԲԱՆԱՆԸ, ամենէն աւելի կը համընկնին այդ արժեչափերուն, կշիռներուն, դիրքերուն եւ, ընդհանրապէս, անոնց ունեցած դերերուն, իրենց աշխարհագրական համապատկերներով, տեղաշրջաններով ու հարեւանութիւններով:

Հայաստանը կը գտնուի Հարաւային Կովկասի մէջ, ուր, պատմականօրէն, միշտ կարեւորուած է իր զգայուն հորիզոնականութեամբ, հոգ չէ թէ՛ ան ինկած է բազմաթիւ որոգայթներու մէջ եւ անցած է զանազան տխուր հանգրուաններէ:

Իսկ Լիբանանը, որ կը գտնուի Միջին Արեւելքի փշոտ գօտիներու մէջ, յատկապէս, իր կողքին ունենալով, սատանայական-արուեստական չերկիր Իսրայէլ մը, իր անկախութենէն ի վեր, միշտ ալ թիրախ դարձաւ անոր համայնակուլ ախորժակներուն, մինչեւ որ՝ լիբանանեան դիմադրական շարժում մը, զայն կասեցուց, թէեւ ոչ հիմնովին, բայց, անպայմանօրէն, խստօրէն:

Անշուշտ, այս երկրորդ չերկրի ընտրանքին մասին, յաճախ արտայայտուած ենք անոր բրտապինդ վայրենաբարոյութեան մասին:

Սակայն, մենք կ'ուզենք, այս պարագային, կեդրոնանալ Հայաստանի վրայ, որ իր անկախութենէն ի վեր, կը խարխափի, կը տատամսի ու կը ծփծփայ, այս կամ այն բեւեռներուն վրայ, այն տպաւորութիւնը ձգելով, որ չի գիտեր, իր ճիշդ ընտրութիւնը կատարել, որ իր հարեւանական-քաղաքական-տնտեսական ոլորտը, ուրկէ՞ կը սկսի եւ ո՞ւր կը շարունակուի:

Իսկ այս մտորումը կամ շուարումը, իրօք, բաւականին սուղի արժեց Հայաստանին եւ անոր բնակչութեան, որոնք չգիտցան, ինչպէ՞ս կողմնորոշուիլ, ի՞նչ չափանիշներով ընթանալ եւ դէպի ո՞ւր ուղղուիլ:

Այս հակուրական ու կարճատեսական կաղացումները, որոնց մասին, լայն ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ մշակուած է, այսօր, նիկոլական շրջանին, տարբեր հարթակներու վրայ կը ծաւալի, մերթ ներհայաստանեան, մերթ շրջանային լանջերուն, որոնց մասին, շատ խօսուած է (ու գրուած), սակայն, այժմ պատկեր մը յայտնուած է բոլորին առջեւ, երբ ներկայ իշխանութիւնները, իրենց պատմական գործընկերոջ ու դաշնակիցին, առանց ուրանալու, բայց, անպայմանօրէն, «ստուերի» մէջ տեսնելով զայն, իրենց հայեացքները ուղղած են՝ դէպի Արեւմուտք, աւելի ճիշդ, հայաստանեան արտայայտութեամբ... ԱՄՆ, առանց խորանալու, թէ անկէ՞ կը բխին Հայաստանին քաղաքական, տնտեսական, ապահովական երաշխիքները, որոնք այնքան անհարժեշտ ու հիմնական գործօններ են իրեն համար:

Հայաստանի բնակչութեան արդէն կէտը, հակադիր «ճակատ»ներու վրայ է (իշխանութիւն-եկեղեցի) եւ եթէ ասոնց վրայ պիտի աւելնան (արդէն աւելցած են), լրացուցիչ խմբաւորումներ, տարբեր որակումներով, հակընդդէմ թելերով, այն ատեն, ինչպէ՞ս կը պատկերացուի, «բուռ» մը հայրենաբնակներու կարգավիճակը (որուն վրան կարելի է աւելցնել նաեւ սփիւռքահայ որոշ հատուածներու մասնակցութեան շեշտերը):

Ատեն մը առաջ, Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնով «գինովցած» էր Հայաստանով, իր «չոր ու թաց»ով, զայն... փառաբանելով, արդեօ՞ք անկէ եւ անոր վարչախումբէն բան մը օգտուեցաւ Հայաստանը, բացի կցկտուր, կէսբերան ու կոկորդալիզ կմկմացումներէ, երբ շատեր մոռցան, որ նոյն Ֆրանսան, ինչպիսի վնասներ հասցուցած է Կիլիկիոյ ու կիլիկցիներուն, մինչ այսօր, Հայաստանի այս կամ այն անկիւնէն կը լսուին. «կեցցէ Ֆրանսան», «Շնորհակալութիւն Ֆրանսայի», ուռուցիկ-թռուցիկ զէխ լոզունգները:



Ներկայիս, ուրիշ «պատկերագարդում» մը ողողած էր Հայաստանեան հարթակին վրայ, երբ, անցեալ շաբաթ, ԱՄՆի փոխ նախագահը՝ Ճէյմս Տէյվիտ Վենսը, հանդերձ ընտանեօք (կին ու զաւակներ), ժամանեց Երեւան, արժանանալով ջերմ ու բուռն ընդունելութեան եւ հրաւերի: Անկասկած, հոյակապ նախաձեռնութիւն եւ այցելութիւն պէտք է նկատել այս պատմական (՝) երեւոյթը, որ, սակայն, Հայաստանեան իւրաքանչիւր կողմ (իշխանութիւն, ընդդիմութիւն, կուսակցութիւններ ու կազմակերպութիւններ), իր տեսանկիւնէն դիտեց եւ ողջունեց զայն, առանց ունենալու հիմք ու տուեալ, թէ ատոնք ի՞նչ կու տան իրեն կամ դիմացինը ինչո՞վ կը գոհացնէ զիրենք:

Չեմ գիտեր, որո՞ւն մօտ՝ ի՞նչ, հարց կամ մտորում կ'առաջանայ, թէ՛ ԱՄՆի վերնախաւէն ներկայացուցիչի մը այցելութիւնը, ինչո՞ւ այսքան խանդավառութիւն կ'առաջացնէ Հայաստանին համար եւ այնպիսի ցուցադրութեամբ, որ երեկուան իր բարեկամ-դաշնակիցը, չկայ կամ անտեսուած է, երբ այսօրուան Հայաստանը, իր ՀԱՄԱՊԱՐԳԱՎՈՒԹԵԱՄԲ եւ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ անոր ծնունդն է (հոգ չէ թէ՛ իր այս կամ այն ելեւէջներով):

Այսօր, եթէ այդ դաշնակիցին (իմա՝ Ռուսիոյ) նկատմամբ չկայ սերտակցութիւն, անմիջականութիւն կամ մօտիկութիւն, ատիկա կը նշանակէ՞ զայն անտեսել կամ «անհաճոյ»ութեամբ վերաբերուիլ անոր հետ:

Անոնք, որոնք, հակադաշնակից զգացումներով կը շարժին ու կը գործեն, արդեօք պահ մը կը մտածեն (մտածած են), որ գեղեցկատեսիլ Երեւանը իր հրաշալիքներով, որո՞ւն օրով եւ ի՞նչ պայմաններու տակ ծնունդ առաւ եւ դարձաւ այսօրուան գրաւչական ու սքանչելիական այն ԵՐԿԻՐ ԴՐԱԽՏԻՎՎԱՅԸ, որ պատիւ կը բերէ ոչ միայն հայութեան, այլեւ աշխարհին:

Եթէ նոր դաշնակիցը՝ ԱՄՆը, ԻՍԿԱԿԱՆ բարեկամութեան ջատագով մըն է, զօրակից ու գործակից Հայաստանին, առանց, ներքին, կողմնակի կամ մակերեսային հաշիւներու, այն ատեն ատիկա կը նկատուի ընդունելի եւ ողջունելի ընտրանք:

Սակայն, երբ ԱՄՆի դերակատարումը կը դիտուի, զանազան աշխարհական բնագաւառներէ ներս, ո՞վ կ'երաշխաւորէ, որ ան իր ռազմաքաղաքական ընչաքաղցութեանց մէջ, անկեղծ է, պարկեշտ եւ ազնիւ:

Ամերիկա մը, որ կը յաւակնի ինքզինք նկատել գերհզօր, գերթեր ու գերուժեղ, սակայն, կը գործէ ճիշդ հակառակ սուրբախորութեամբ, ինչպէ՞ս կրնայ դառնալ «լուսաւորութեան փարոս» մը, կամ իր նախագահը ինչպէ՞ս ինքզինք կը հռչակէ՞ «ԴՐԱԽՏԻՎ ԱՐԺԱՆԻ ՄԷԿԸ»

Այս առիթով, մեզ ամենէն աւելի յուզողը, ցուցնողը ու ցնցողը եղաւ, երբ ԱՄՆի փոխ նախագահը, յարգանքի այցելութիւն մը տուաւ Հայոց Յեղասպանութեան Ծիծեռնակաբերդի յուշահամալիրը, հանդերձ ընտանեօք, ապա, յուշամատենին մէջ, իր գրառութիւնը կատարելէ ետք, զայն... չեղեալ նկատեց, ինչ որ մեծ հարցականներ առաջացուց, ամենուրէ՛ք:


Ինչո՞ւ եւ ի՞նչ էր այս «աճպարարութեան» պատճառը, առայժմ, չկան համապատասխան բացատրութիւններ, բայց, կան սպրդումներ, որոնք, ի՞նչ ալ ըլլան, Հայաստանը, իր «տաւուլ-զուռնայ»էն ետք, ինչպէս կը մեկնաբանէ զայն:

Հա՛րց է՛ թէ ոչ, հայ ժողովուրդը (Հայաստան թէ Սփիւռք) ինչպէ՞ս կը վերաբերին այս ԱԶԳԱՍՕԹ եղելութեան հետ (կամ՝ անոր կողքէն կ'անցնին, լռելեայն ու համօրէն), երբ՝ նման սայթաքումներ, արդեօք հայ ժողովուրդի ազգային արժանապատուութեան նկատմամբ ոտնձգութիւններ չե՞ն:

(Պէյրութ)

ԱՏՐՊԷՅՃԱՆ – ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ, ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Յարութիւն Իսկահասեան – Պէյրութ



Կեդրոնական Ասիայէն 11-րդ դարու օդուգ-սելճուգ թրքական ցեղերու գաղթ-արշաւանքներու ժամանակ, անոնցմէ մեծ թիւով հաստատուած են Պաքու եւ շրջակայաքը զէնքի ոյժով: Բնիկ հայերը բազում նեղութիւն կրած են անոնցմէ, սակայն անոնց իսլամանալէն ետք, պարսիկներն ու կովկասեան այլ իսլամ ազգեր խառն ամուսնութիւններով միաձուլուելով անոնց հետ, յառաջ եկած է թաթարական ժողովուրդը: Արցախի նահանգը, որ ամբողջովին այդ շրջանին մէջ կ'իյնայ, կազմուած էր միայն բնիկ հայերէ: Իսկ Նախիջեւանը, ուրկէ հայերը նախ Շահ Աբասի ատեն, յետոյ քսաներորդ դարու սկիզբը թաթարներու յարձակումներով եւ բռնի ուժով գրեթէ հայաթափուեցաւ: Խորհրդային իշխանութեան ատեն շարք մը անհամաձայնութիւններ կային երկու տարածքներու կարգավիճակին վերաբերեալ: Կարգ մը փոփոխութիւններէ ետք խորհրդային կառավարութիւնը պայման դրաւ, որ Նախիջեւանը պէտք է ճանչցուի իբրեւ Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն (ԻԽՍՀ)՝ Ադրբեջանի հետ սերտ կապերով, մինչդէռ Ղարաբաղը պէտք է մնար Ատրպէյճանի ԽՍՀ-ի կազմին մէջ՝ զգալի ինքնավարութեամբ: 1920-ականներու սկզբը տարածաշրջանը՝ Լեռնային գօտին ներառեալ,



ճանչցուեցաւ որպէս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ (Համացանցային Կայքէջ . - <https://www.google.com/search?q=azerbaijan%20population...>):

1918-ին առաջին անգամ Ատրպէյճան անուանուով ճանչցուած պետութիւն մը գոյութեան կոչուեցաւ, որուն օգտագործած թրքերէն լեզուն Կեդրոնական Ասիայի թրքերէն լեզուներու հարաւ-արեւմտեան օղուզական ճիւղին կը պատկանի: Այս լեզուին գրական ձեւաւորումը սկիզբ առած է 15-րդ դարու կէսերէն: Հոն արաբերէն այբուբենի գիրերը կը գործածուէին մինչեւ 20-րդ դարու սկիզբը, սակայն 1939-ին որդեգրուեցաւ Կիրիլիք (Սիրիլիկ, սլաւոնական) այբուբենի տառերը, որ ռուսերը կը գործածէն: Այնուհետեւ 1992-ին Ատրպէյճաներէնի տառերը փոխուեցան լատիններէնի Թուրքիոյ նման:

Ատրպէյճանը իսլամական երկիր մըն է: Իսլամ բնակչութեան երկու-երրորդը շիիներ են, իսկ մէկ-երրորդը սիւննիներ: Ռուսերը եւ հայերը կը կազմէին բնակչութեան ոչ արհամարեղի տոկոսը: Ատրպէյճանի ծնունդներու եւ մահացութեան մակարդակը միջազգային մակարդակէն քիչ մը ցած է: Բնակչութեան մէկ-հինգերորդէն աւելին 15 տարեկանէն վար է, իսկ բնակչութեան կէտը մօտաւորապէս 30 տարեկանէն վար:

Վերը յիշեցինք ռուս եւ հայ փոքրամասնութիւնները: Հայ փոքրամասնութիւնը որ տեղաբնիկ էր, Ատրպէյճանէն բռնագաղթուած է 1988-ին ծագած հայ-ատրպէյճանական կռիւներու ատեն: Բացի ասկէ Ատրպէյճանի հարաւը եւ Իրանի հիւսիսը կ'ապրի թալիշ ցեղի պատկանող համայնք մը, որ ցեղային սերտ կապեր ունի պարսիկներու հետ: Շրջանը Ատրպէյճանի ամենէն խիտ բնակչութիւն ունեցողն է: Անոնց բոլորն ալ գիւղացիներ են: Անոնք ունին ինքնուրոյն լեզու եւ մշակոյթ, սերտօրէն կապուած պարսկերէնի եւ պարսիկներու: Թալիշներուն գլխաւոր քաղաքը Լենքորանն է: Անոնք շիի իսլամներ են: Կը կազմեն Ատրպէյճանի երկրորդ մեծ փոքրամասնութիւնը ու կը պայքարին գոյատեւելու եւ պահպանելու իրենց ինքնութիւնը, հակառակ զօրաւոր ճնշումներու (Համացանցային կայքէջ . - <https://www.google.com/search?q=talish%20in%20azerbaijan...>):

Լեզկիները Ատրպէյճանի ամենէն մեծ փոքրամասնութիւնը կը կազմեն: Անոնք կ'ապրին երկրին հիւսիսային շարջաններուն մէջ եւ ունին ինքնուրոյն լեզու՝ լեզկերէն:

Անոնք կը պատկանին իսլամական սիւննի համայնքին, եւ սերտ կապեր ունին Տաղստանի իսլամ ժողովուրդին հետ (Համացանցային Կայքէջ . -

https://en.wikipedia.org/wiki/Lezgins_in_Azerbaijan):

Ատրպէյճանի բնակչութիւնը 10,6 միլիոն է, մեծաւ մասամբ ազերիներ՝ 94 առ հարիւր: Փոքրամասնութիւններն են՝ լեզկիներ, ռուսեր, թալիշներ, ինչպէս նաեւ աւարներ, թուրքեր, հրեաներ, թաթարներ եւ վրացիներ: Փոքրամասնութիւնները միասին կը կազմեն երկիրի բնակչութեան 6 առ հարիւրը, լեզկիները մօտ 2 առ հարիւր, ռուսերը 1,3 եւ թալիշները 1 .3 առ հարիւրը բնակչութեան (Համացանցային Կայքէջ . -

[https://www.google.com/search?q=azerbaijan+and+minorities, 2024-ի տուեալներով\):](https://www.google.com/search?q=azerbaijan+and+minorities, 2024-ի տուեալներով):)

Ատրպէյճանի Լեռնային հրեաները կովկասեան լեռներու մէջ՝ Ատրպէյճանի կեդրոնական մասը, արմատաւորուած հին համայնք մըն են, մօտ 2000 տարի առաջ հաստատուած: Անոնք ինքնուրոյն մշակոյթ ունին եւ անոնց լեզուն կը կոչուի ճուհուրի, որ հին պարսկերէնի մէկ ճիւղն է: Անոնց կեդրոնն է Կարմիր գիւղը, (Քըրմըզը Քասապա), Կուպա քաղաքին մօտ: 1000 տարի առաջ Պարսկաստանէն հրեաներ գալով ձուլուած են լեռնային հրեաներու հետ: Լեռնային հրեաները կը պահպանեն իրենց արանդութիւնները, լեզուն ու մշակութային ինքնութիւնը (Համացանցային Կայքէջ .

[https://www.google.com/search?q=azerbaijan+jews+mountainousoq=azerbaijan mountainous&gs\):](https://www.google.com/search?q=azerbaijan+jews+mountainousoq=azerbaijan mountainous&gs):)

Ներկայիս անոնք շատ ազդեցիկ ու գործունէ կերպով կը մասնակցին Ատրպէյճանի քաղաքական ու զինուորական կեանքին, Ատրպէյճանի Իսրայէլի հետ բացառիկ բարեկամութեան շնորհիւ, մօտիկ ըլլալով նախագահական կազմին եւ կառավարական



մարդոց: Լեռնային հրեաներու բնակչութեան համեմատութիւնը 0,1 առ հարիւր կը կազմէ, երկրին ընդհանուր բնակչութեան թիւին: Հայերը լեռնային հրեաները կը կոչեն «թաթեր»: Տնտեսութեան գծով, Ատրպէյճանը զարգացած արդիւնաբերական եւ գիւղատնտեսական երկիր դարձած է: Նախը եւ բնական կազը կը կազմեն արդիւնաբերութեան ողնահարը: Կան նաեւ թեթեւ արդիւնաբերութիւն, մեքենաշինութիւն եւ սնունդի արտադրութիւն, թէեւ հողի սեփականաշնորհումը դանդաղ ընթացած էր: Որոշ պետական ձեռնարկութիւններ սեփականաշնորհուած են:

Պաքուի առաջին նախահորերը փորուած են 1840-ական թուականներուն: Ներկայիս նախի արդիւնաբերութիւնը, վերամշակումն ու արտահանումը մեծ քայլ արձանագրած է, Կասպից Ծովէն մինչեւ Միջերկրական երկարող նախատար խողովակով՝ Պաքու-Թիֆլիս-Ճէիհան գիծով: 20-րդ դարու սկիզբը Պաքուի նախահորերը աշխարհի մեծագոյններն էին: Սակայն նոյն դարու ընթացքին նախի արտադրութեան մէջ Ատրպէյճանի դերը նուազած է, որովհետեւ արդիւնաբերութիւնը կը զարգանար Խորհրդային Միութեան այլ շրջաններուն, ինչպէս նաեւ այլ երկիրներու մէջ: 1994-ին Ատրպէյճանի նախային ընկերութիւնը նոր պայմանագիրեր կնքեց տասէ աւելի միջազգային ընկերութիւններու հետ, որպէսզի զարգացնէ նախի արդիւնաբերութիւնը: Իսկ 2005-ին Պաքու-Թիֆլիս-Ճէիհան գիծին հաստատումով Պաքուն հնարաւորութիւն ձեռք ձգեց մեծածաւալ մատակարարում իրականացնելու միջազգային շուկային եւ մանաւանդ Եւրոպայի:

Ատրպէյճան ունի նաեւ այլ հում նիւթեր ինչպէս կապարի, զինգի, երկաթի եւ պղինձի հանքեր, ալիւմինիումի արտադրութեան մէջ օգտագործուող քիմիական նիւթեր, սովորական աղ եւ այլ շինանիւթերու տեսակներ:

Հացահատիկը գլխաւոր գիւղատնտեսական արտադրութիւնն է, իսկ հում բամբակը՝ երկրորդ արժեքաւոր բերքը: Խաղողի աճման համար բարենպաստ պայմանները գինեգործութեան եւ այլ ըմպելիներու ճարտարարուեստին կը նպաստեն: Այլ մշակաբոյսերէն են բանջարեղէնը, պտուղները, ընկույզը եւ գետնանուշը: Մետաքսագործութեամբ կը զբաղին որոշ շրջաններ, մասնաւորապէս Շաքի, Զաքաթալա եւ Գեօչայ քաղաքներու շրջակայքներու մէջ:

Ատրպէյճանական ձկնորսութիւնը կարելոր է յատկապէս Կասպից ծովու Թառափ տեսակ ձուկի առատութեան պատճառով: Թառափի ձկնկիթէն կը պատրաստուի միջազգային հռչակ ունեցող խավիարը: Սակայն Թառափի պաշարները հետզհետէ սկսած են նուազիլ Կասպից ծովու ջուրերուն ապականման հետեւանքով:

Ատրպէյճան զարգացուցած է հանքային պարարտանիւթերու, մեքենաներու համար գործածելի իւղերու, արհեստական (synthetic) քաուչուկի ճարտարարուեստները Սումկայիթի մէջ:

Վերջապէս յիշենք թէ Ատրպէյճանի արդիւնաբերութեան զարգացումը վառելանիւթի եւ էլեկտրականութեան հայթայթման պահանջներու ծնունդ տուած է: Ներկայիս ամբողջ էլեկտրականութիւնը կ'արտադրուի բրածոյ վառելիք այրող ջերմաէլեկտրակայաններու միջոցաւ: Հաւանաբար Ատրպէյճան մօտ ատենէն ձեռնարկէ հիւլէական կայանի մը հաստատման էլեկտրականութեան կարիքը գոհացնելու ինչպէս նաեւ այլ նպատակներու համար:

Ատրպէյճանի իրավիճակը առարկայականօրէն ներկայացնելը կը միտի ցոյց տալու այն իրողութիւնը, թէ միջազգային հանրութեան առջեւ ինչպէ՞ս կը ներկայանայ այդ երկիրը, որ բնականաբար տարբեր է հայկական մօտեցումէն:

ՄԵՐ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ ՈՐՈ՞ՒՆ ԿՏԱԿԵՆՔ...

Գրեց՝ ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ



Վստահ եմ որ սիրտ մղկտացնող այս հարցումը, մերթ ընդ մերթ, անպայման իրենք իրենց կ'ուղղեն այն բոլոր գրասեր, մատենասեր ու մտաւորական դէմքերը, որոնք տարիներու եւ երկար տասնամեակներու ընթացքին շարունակ տրցակներով գիրքեր կուտակէր են իրենց բնակարանին մէջ ու կրցեր են կ'ազմել պատկառելի եւ հարուստ գրադարան մը: Այդ գրադարանը շունչ, ոգի ու թելե ր տուեր է իրենց, մշակեր ու կոփեր է իրենց միտքը, ազնուացուցեր է իրենց հոգին, գո'յն տուեր է իրենց բնակարանի պատերուն: Այդ գրադարանի շուրջին տակ անցեր են ի'նչ երջանիկ պահեր, երբեմն՝ միայնակ, երբեմն՝ հագուազիւտ զրոյցներու ուղեկցութեամբ, գաղափարակից փոքրաթիւ ընկերներու, գիր-գրականութեան սիրահար բարեկամներու հետ...:

Ընտանեկան այս գրադարանները մի'շտ պահուեր են կոկիկ, մաքուր, դասաւորուած: Գուրգուրանքը անպակաս եղեր է անոնց վրայէն: Յաճախ նիւթական յատկացումներ կատարուեր են՝ սա կամ նա գիրքը, հատորաշարքը, այս կամ այն բառարանը, հանրագիտարանը ձեռք բերելու համար: Երբեմն գրադարանին փայտեայ կահոյքը նորոգուեր ու ջնարակուեր է...: Պարբերաբար, յաւելեալ ծախքեր իսկ այք առնուեր են՝ կարգ մը մաշած ու բեկբեկուած հատորներ վերակազմելու, զանոնք կաշեպատ նոր կափարիչներով օժտելու համար...: Ի'նչ երջանկութիւն՝ գրասեր, գրքասեր մարդուն համար: Գրադարանը մտաւորական մարդուն հարստութիւնն է:

Օ, դէռ չեմ խօսիր այդ գիրքերուն առաջին էջերը լեցնող ձեռագիր մակագրութիւններուն մասին: Գիրքերէն շատ-շատեր ուղղակի իրենց հեղինակներուն ձեռամբ առաքուեր ու նուիրուեր են մեզի, մեր զգացումները շոյող պէսպիսուն ու ներբողակից ձօնագրութիւններով...: Այդ ձեռագիր մակագրութիւնները, ինքնին,-- մա'նաւանդ համակարգչային գրաշարութեան մեր դարուն, երբ «ձեռագիր» ըսուածը անհետանալու, չքանալու ուղին բռնած է... -- թանկագին նշխարներ կը թուին ինձի հիմա: Իրարմէ տարբեր



ձեռագրերու ի՛նչ խայտաբղետ տեսականի մը փռուած է գիրքերու առաջին էջերու երկայնքին: Ու այդ ձեռագրերուն տէրերը, որոնցմէ շատեր ա՛լ մեզի հետ չեն տարիներէ իվեր, հիմա կարծես դա՛րձեալ անկարելի բարեւ մը կը յղեն մեզի, կը ժպտին մեր դէմքին, կ'նոջունեն մեզ գորովագին՝ ամէն անգամ որ ձեռք զարնենք դարաններուն վրայ քնացած գիրքերէն մէկուն կամ միւսին: Թերեւս կը համարձակին փսփսալ մեր ականջն ի վար, անտեսանելի անկիւնէ մը. «Առիթ ունեցա՛ր կարդալու իմ գիրքը, հաւնեցա՛ր...»:

Այո՛, մեր ընտանեկան գրադարանները կուշտուկուռ «կերակրած» են մեզ երկա՛ր տարիներ, դպրոցական մեր օրերէն մինչեւ այսօր: Բայց ի՛նչ պիտի ըլլայ անոնց ճակատագիրը հետագային,-- մօտի՛կ ապագային,-- երբ այլեւս ալեւորած կամ խոնջած՝ ա՛լ պիտի չկարենանք հոգածու դառնալ անոնց...:

Մղձաւանջ մըն է այս անխուսափելի հեռանկարը մեզի՝ գրադարանի տէրերուս համար: -- Ո՞վ տէր պիտի կանգնի մեր գրադարանին՝ երբ հնչէ մեր մեկնումի պահը...:

Այո՛, այսպէ՛ս սկսած ենք մտածել՝ ամէն անգամ որ մտմտացած ենք կէանքի ու մահուան մեծ խորհուրդին մասին: Այսպէ՛ս մտածած ենք՝ ամէն անգամ որ հոչականուն մտաւորականի մը մահուան լուրին առնթեր տեղեկացեր ենք, թէ անոր թանկագին ու հարուստ գրադարանը փողո՞ց թափուեր է իր ժառանգորդներուն կողմէ...:

Գիտենք, որ «գիրք» կոչուած ապրանքը թանկագին մետաղ կամ հնչուն դրամ չէ՝ որ մեր անմիջական ժառանգորդներուն շահագրգռութիւնը սրէ: Բայց, այնուամենայնիւ, ինչո՞ւ մեր զաւակները (մեծ մասամբ՝ համալսարանական եւ ուսեալ) բաղձալի ջերմութիւն մը չեն ցուցաբերեր իրենց ծնողաց գիրքերուն ու գրադարաններուն նկատմամբ:

Կ'ապրինք ուսման, գիտութեան, համալսարանական բարձրագոյն վկայականներու դարու մը մէջ, սակայն հակադրաբար՝ գիրքի ընթերցումը, գիրքի սերը, գրադարանի արժէքը արագասոյր կը նահանջեն ժամանակակից մեր ընկերութեան մէջ: Կը տարուիմ մտածել, որ 125 կամ 150 տարի առաջ, Դուրեանի կամ Մեծարենցի մը, ԲաՖՖիի մը կամ Սրբուհի Տիւսաբի մը շրջանին ընթերցասիրութիւնը շա՛տ աւելի տարածուած երեւոյթ էր մեր հայ իրականութեան մէջ, քան այսօր: Նմանապէս, կացութիւնը հիմնովին տարբեր էր Խորհրդային Հայաստանի օրերուն: Բացէ՛ք այդ շրջանին Հայպետհրատի, «Սովետական գրող» կամ «Հայաստան» հրատարակչութիւններուն կողմէ տպուած ո՛րեւէ բնոյթի հատոր մը (գրական, բանասիրական, մանկապատանեկան, վերլուծական թէ այլ) ու ակնարկ մը նետեցէք անոր վերջին էջին վրայ: Ստուգեցէ՛ք «տիրած»-ը՝ տպաքանակը: Պիտի ապշիք տեսնելով որ Չարենցի մէկ ժողովածուն տպուեր է 40 հազար տպաքանակով, մանկական հեքիաթներու հատոր մը՝ 60 հազարով, հայ դասական վէպ մը՝ 20 հազարով, օտար գրականութենէ թարգմանութիւն մը՝ 10-15 հազարով: Եւ իրազեկներ կը վկայեն, թէ հրապարակ հանուած այդ գիրքերը քանի մը ամիսներու, երբեմն նոյնիսկ քանի մը շաբաթներու ընթացքին արդէն սպառած կ'ըլլային գրախանութներէ...: Ժողովուրդը «կը լափեր» այդ գիրքերը, տուներու մէջ ամէն ոք, 7-77 տարեկան, գիրք մը ունէր իր բարձին տակ...:

Անցա՛ն այդ երջանիկ շրջանները:

Այսօր, «գիրք» կոչուած ապրանքը ցանկալի ներկայութիւն մը չունի մեր բնակարաններուն մէջ: Հասակ առնող այսօրուան սերունդներուն համար՝ գիրքը կորսնցուցած է իր հմայքը կամ քաշողականութիւնը: Մեղանին վրայ դրուած հայերէն գեղատիպ գիրք մը, որքա՛ն ալ ուշագրաւ վերնագիր մը ունենայ, չի յաջողիր դէպի իրեն քաշել, հրապուրել հայ մարդը, մա՛նաւանդ սփիւռքի մէջ: Այդ հայ մարդը չէ հետաքրքրուած ո՛չ գիրքին հեղինակով, ո՛չ ալ պարունակութեամբ: Զինք բնա՛ւ չի հետաքրքրեր, թէ ժամանակակից ապրող հայ հեղինակ մը ի՛նչ կրնայ պատմած ըլլալ 200 կամ 300 էջանի սա թղթածրարին մէջ...:



Այս ապառոզը հոգեվիճակին ամենօրեայ ու շարունակական ականատեսն ենք մեր հայկական դպրոցներուն մէջ: Ո՛չ մէկ աշակերտ անկեղծ փափաքն ունի գիրք մը ձեռք առնելու եւ ընթերցելու...: Նոյնն է պարագան մեր ակումբներուն, որոնց գրադարանները կը մռափեն ամառ-ձմեռ...:

Կը հաւատամ որ ընթերցասիրութիւնը ծիլ կրնայ տալ ու աճիլ փոքր տարիքէն: Եւ ուստի, այստեղ մեծ պիտի ըլլայ դերը ծնողքին ու դպրոցին: Տան մէջ յարդարուած կոկիկ գրադարան մը ու դպրոցէն ներս աշակերտութեան առջեւ բացուած գործուն գրադարան մը (աշխոյժ ու գիտակ գրադարանավարով մը) կրնայ բարերար արդիւնքներու առաջնորդել մեզ...:

*

Թարմ օրինակ մը:

Դպրոցը, ուր կը պաշտօնավարեմ, բարձր կարգերու հայերէնի դասագիրքերէն մէկը ամբողջովին նուիրուած է Զարթօնքի շրջանին, այսինքն՝ 1850-էն մինչեւ 1880-ականներ երկարող հայ գրականութեան, իր արեւմտահայ ու արեւելահայ ճիւղաւորումներով: Հոն կը տողանցեն տասնեակ մը գրագէտներ ու բանաստեղծներ, իրենց գործերէն ընտիր նմուշներու հատուածներով՝ իբրեւ դասարանային ընթերցումի եւ վերլուծման հում նիւթ: Անցեալները, կարգը հասած էր Րաֆֆիին (1835-1888), մեր յեղափոխաշունչ գրականութեան անկրկնելի վիպագիրին:

Իբրեւ հայերէնաւանդ ուսուցիչ՝ ամէն տարի մի՛շտ ալ գրեթէ անհամբեր կը սպասեմ Րաֆֆիի դասը, հաւանաբար երկու հիմնական պատճառներով. նախ, որովհետեւ իմ պատանութեան տարիներուն յափշտակութեամբ կարդացեր էի «Պարսկաստանի Մալմաստ գաւառի Փայաջուկ գիւղը ծնած» (ճի՛շդ այսպէս գրուած էր անոր կենսագրութեան մէջ) վիպագիրին հռչակաւոր գործերը՝ «Խենթը», «Սամուէլ»-ը, «Ձալալէղդին»-ն ու «Կայծեր»-ը, խորունկ ու անջնջելի տպաւորութեամբ, ապա նաեւ՝ որովհետեւ դպրոցական մեր դասագիրքին մէջ մուծուած «Սամուէլ»-ի չորս էջանի հատուածը ի՛նչպէս շատ խորիմաստ է եւ առինքնող: Հոն կը նկարագրուի հայրենադաւ նախարար Մերուժան Արծրունիի (որ ուրացած էր իր քրիստոնէական կրօնը ու պարսից կողմը անցած...) վերադարձը իր հայրենի տունը՝ Վասպուրականի Հաղամակերտ քաղաքը:

Դասարանցի մեր տղաքը, որոնք արդէն նախապէս ծանօթացած կ'ըլլան Րաֆֆիի ամփոփ կենսագրութեան, ինձմէ կը լսեն վերեւ նշուած վէպերուն մասին կենդանի վկայութիւններ: Կը պատմեմ իրենց ի՛մ սեփական տպաւորութիւնները այդ վէպերէն՝ երբ քառասուն տարի առաջ է՛ս ալ իրենց տարիքը ունէի եւ գիշերները, քնանալէ առաջ, իմ սնարին վերեւ ամրացուած լուսամփոփի մը շողարձակումներուն տակ, էջէ՛ր ու էջէ՛ր կ'ընթերցէի Րաֆֆիէն...:

Այս տարի ալ նոյնը կրկնուեցաւ: Կիրքով ու խանդավառութեամբ խօսեցայ Րաֆֆիի վէպերուն մասին, յատկապէս շեշտելով հեղինակին նկարագրելու ձիրքը, տիպարները կենդանի ու շնչող էակներու վերածելու իր կարողութիւնը, ընթերցողները յուզելու եւ զանոնք վէպին մթնոլորտին մէջ քաշելու իր ճարտարութիւնը: Վերջաւորութեան, նկատել տուի, թէ Րաֆֆի ապրեցաւ ընդամենը 53 տարի եւ սակայն իր գրած գիրքերը եթէ վրայ-վրայ շարենք, անոնք աւելի բարձր ու ծանր պիտի կշռեն՝ քան դասարանի մեր տղոց հասակն ու ծանրութիւնը...:

Դասը աւարտած էր: Յաջորդ դասապահին պիտի սկսէինք հաւաքաբար կարդալ «Սամուէլ»-ի հատուածը՝ տեսնելու համար, թէ Հաղամակերտի բնակիչները ինչպէ՞ս պիտի դիմաւորէին ուրացող Մերուժանը, քաղաքի շքամուտքին առջեւ կամ ներսը՝ փողոցներուն մէջ...: Իրեն նկատմամբ ինչպիսի՞ կարծր վերաբերմունք պիտի ցուցաբերէին ի՛ր իսկ ընտանիքին անդամները՝ մայրը, կողակիցը, երեխաները: Անոնք բոլորն ալ իրենց դոները պիտի փակէին ուրացողին առջեւ...: Տնցի՛ չ պատկեր: Խռովի՛ չ նկարագրական:



Յաջորդ օր, դասապահի աւարտին, երկու աշակերտուհիներ մօտեցան ինձի.

-- Պարո՛ն, ԲաՖՖիի վեպերէն մէկն ու մէկը ուրկէ՞ կրնանք գտնել...:

Անակնկալի եկած էի: Բայց անվարան պատասխանեցի.

-- Քովս ունին: Վաղն իսկ կը տրամադրեմ ձեզի:

Ու յաջորդ օր մեր զոյգ աշակերտուհիները իրենց փերտուն մէջ կը շօշափէին արդէն

«Խենթը»-ի Պէյրութ տպուած (դասական ուղղագրութեամբ) կրկնօրինակները...:

Կարդացի՞ն, թ՛է ոչ՝ չեմ կրնար հաստատել: Թերեւս 15-20 էջ յառաջանալէ ետք՝ վար դրին

գիրքը, յոգնեցան, չկրցան ընտելանալ: Թերեւս վեպին հարուստ բառամթերքը արգելք եղաւ

16 տարեկան այս մանկամարդուհիներուն հեզասահ ընթերցանութեան: Թերեւս

պատմական նիւթը (Դ. դարէն) հնաբոյր թուեցաւ իրենց...: Թերեւս ալ հանդարտօրէն պիտի

կարդան գիրքը, մաս առ մաս, հիմա կամ յառաջիկային:

Բայց հայերէն գիրքին մատչելու իրենց անկեղծ փափաքը գնահատելի գտայ:

Ամէն յաջողութիւն, ամէն ուսում կը սկսի առաջին քայլով մը: Այս աղջիկները առի՛ն այդ

քայլը ինքնաբոլի կերպով, առանց պարտադրանքի, թերեւս իմ դասարանային

բացատրութիւններուն որպէս բնական արձագանգ կամ ներքին լուռ պահանջք:

Սակայն, իրենց այս առաջին քայլէն ետք ալ՝ խթանիչ ազդակներու պէտք ունին անոնք:

Հետեւող մը պէտք է, մնայուն քաջալերող մը: Յատկապէս տունէն, ծնողներէն:

Կա՛յ այդ քաջալերանքն ու նեցուկը:

Կասկածելի է:

Հալէպ

("Պայքար" շաբաթաթերթ, Պոսթըն, 22 Փետրուար, 2026)

ԱՌԱՋԻՆ ՌԱՀՎԻՐԱՆԵՐԸ

Յակոբ Միքայէլեան



Չեմ գիտեր ով ըսած է, որ «Մարդոց ամենաերկար ապրողները վանականներն են, իսկ ամենակարճ կեանք ունեցողները ուսուցիչներն են: Կ'ուզէք հաւատացէք, կ'ուզէք՝ ոչ, սակայն ըսուածին մէջ իրականութիւն մը կայ: Վանականներէն աւելի հանգիստ ու անհոգ կեանք ունեցողներ կա՞ն, անոնք առաւօտէն իրիկուն սուրբ գիրք կը կարդան, կ'աղօթեն, կ'ուտեն, կը խմեն, կը քնանան... Անշուշտ երկար կ'ապրին, ո՛չ ընտանիքի, ո՛չ ալ երեխաներու հոգ ունին. իտէալական

կեանք: Իսկ ուսուցիչներու պարագային՝ գլուխդ ու ջիղերդ մաշեցուր, ընտանիքիդ հոգը վերցուր, տեղացող բողոքներուն, զանգատներուն ու բամբասանքներուն դիմադրէ, առած աշխատավարձդ փորձէ բաւեցնել մինչեւ յաջորդ ամսական... մարդ անշուշտ կը մաշի:

Սակայն, հակառակ այս բոլորին, «գործը» առաքելութեան վերածէ, առաքելութեան սրբազան նպատակին համար զոհուէ, եւ տակաւին հայ ուսուցիչին համար, անջատ պաշտօնին ընդունուած պահանջքէն, ազգային դաստիարակութիւն սնուցանէ դասերուդ



առընթեր, սովորական սնունդին հետ վիթամին տալու պէս: Այս բոլորը ըրէ ու սպասէ որ աշակերտներդ մեծնան ու օր մը յիշեն քեզ ու գնահատեն:

Այսպէս կը մտածենք այս օրերուս, իսկ Մեծ Եղեռնէն կարճ շրջան մը ետք, տակաւին կոտտացող վերքերով, տակաւին ընկճուած հոգիով, հազիւ ոտքի կանգնած, հազիւ գլխու վրայ առաստաղ մը ունեցած, մարդիկ գտնուեցան, որոնք դպրոցներ բանալու մասին մտածեցին, մտածեցին ու գործի անցան, երբեմն անհատաբար, երբեմն կազմակերպութեան մը հովանիին տակ եւ հայ երեխան սկսաւ դպրոցի բարիքները վայելել:

Նպատակս Հալէպի դպրոցներու ու կրթական մշակներու պատմութիւնը ներկայացնել չէ, անոնք որ կը հետաքրքրուին այս հարցով թող դիմեն դոկտ. Յակոբ Չոլաքեանի Սուրիահայ Դպրոցներու մասին երկհատոր աշխատութեան: Պատկերացուցէք, Սուրիոյ մէջ անցեալ դարասկիզբին մեծ կամ փոքր 244 դպրոց ունեցած ենք: Անշուշտ այս դպրոցներն ալ տնօրէն եւ ուսուցիչներ ունեցած են. ուրեմն 244 դպրոց, 244 տնօրէն ունեցած ենք: Եթէ իւրաքանչիւր դպրոց 10 ուսուցիչ-ուսուցչուհի ունեցած է, ուրեմն այդ օրերուն Սուրիա ապաստանած հայ բռնագաղթեալներէն 2440 հոգի կրթական ասպարէզին ծառայած է: Այս մարդիկ որոշ կրթական զարգացումի ենթահող մը ունեցած են կ'երեւի, որ լծուած են այդ գործին: Շժմելիք բան է, սակայն թիւերը կը խօսին եւ այս թիւերն ալ օդէն չեն իջած, այլ Չոլաքեանին տքնաջան աշխատանքներուն արդիւնքն են:

Անշուշտ այդ առաջին սերունդէն ոչ մէկը մնացած է հիմա, սակայն իմ այս յառաջացած տարիքիս կրնամ յիշել կարգ մը անուններ, որոնք Հալէպի կրթադաստիարակչական գործին մէջ մեծ ներդրում ունեցան, Մայր Գաղութի առաջին ռահվիրաները եղան, որոնց նուիրումին իբրեւ հետեւանք, տարտամ քայլերով ընթացող դպրոցները մեծցան, ուռճացան ու փառաւոր դիրքերու հասան: Այդ նուիրեալ մարդոցմէ ոմանք անձնապէս ճանչցած եմ փոքր տարիքիս: Օրինակ, ճանչցած եմ հիներէն ամենահեղինակաւոր տնօրէն ԱՐՄԷՆ ԱՆՈՅՇԸ, (Մարաշլեան), երբ նախակրթարան Ազգ. Հայկազեան վարժարան կը յաճախէի: Կարճահասակ, լայն ճակատով, լուրջ եւ խիստ անձնաւորութիւն մըն էր, որուն տեսքն ու խօսքը յարգանք կը պարտադրէին: 1952-ին, երբ կայարանի մեր տունէն Նոր Գիւղ փոխադրուեցանք, Հայկազեանը հեռու մնաց ու այդ օրերուն համար անմասշտաբ, որուն պատճառով զիս մեր նոր տան անմիջապէս քովի թաղը գտնուող Ազգ. Զուարեան դպրոց ուղարկեցին: Երեք տարի հոն աշակերտելէ ետք, երբ դասարանին առաջնութիւնը խլողա սկսաւ ետ-ետ երթալ, զիս վերադարձուցին Հայկազեան, ուր վեցերորդ պէտք է ըլլայի, սակայն Տնօրէն Արմէն Անոյշը մօրս ըսաւ որ վեցերորդը պետական սերթեֆիքայի քննութեան տարի է եւ ինք դուրսէն եկող աշակերտը չի կրնար վեցերորդ ընդունիլ, պէտք է հինգերորդ նստի: Մայրս չկրցաւ առարկել, տնօրէնին խօսքը խօսք էր ու տարի մը կորսնցնելով մնացի հինգերորդ դասարան, իսկ յաջորդ տարին ալ պետական քննութեանց տողոց բաժնի առաջնութիւնը խլեցի, ի մեծ գոհունակութիւն ծնողքիս եւ Արմէն Անոյշին:

Նոր արձանագրուած եմ եւ առաջին օրն է. հաւաքուած ենք դպրոցին բակը, հին դասընկերներս վեցերորդի շարքը, իսկ ես՝ հինգերորդի: Տնօրէնը կարդաց անունները անոնց, որոնք առկախ էին եւ վերաքննութեան արդիւնքով պիտի անցնէին յաջորդ դասարան, կամ մնային նոյն դասարանը: Սկսաւ ընթերցումը ու աշակերտութեան մէջ անհանգիստ, աղմկոտ խլրտում մը ծայր առաւ: Տնօրէնին մէկ սաստը լռեցուց բոլորը, ու երբ տղու մը անունը կարդաց ու ըսաւ որ դասարանը կրկնած է ու անցնելու է միւս շարքը, տղան, որ ընկերներուն համեմատ բաւական մեծ էր տարիքով, փոխանակ շարքը փոխելու շարքէն դուրս եկաւ եւ ուղղուեցաւ դէպի ելքի դուռը: Տնօրէնին ձայնը «Այդ ու՞ր կ'երթաս, հոս

եկուր անմիջապէս»-ը դանակի պէս կտրեց տղուն քայլերը: Տղան հազիւ մօտեցաւ, Արմէն Անոյշը ոտքի մատներուն վրայ բարձրացաւ ու շոռախ... ձայնաւոր ապտակ մը իջեցուց դէմքին. տղան քարացաւ:

Ասանկ էր «Արեան Ճանապարհով» զիրքին հեղինակը, որ անցնելով այդ արեան ճամբաներէն հասած էր Ազգ. Հայկազեան վարժարանի տնօրէնի պաշտօնին: Քանի մը անուն ալ յիշեմ, հին օրերու կրթական ասպարէզի նուիրեալներէն, որոնք հետք ձգած են քաղաքիս կրթական պատմութեան մէջ, ինչպէս Գրիգոր Պողարեան, Պրն. Տօնապետեան, Կարապետ Սապունճեան, Մինաս Թէօլեօլեան, Երուանդ Պապայեան, Միսաք Միսեռեան, Հրանդ Մուրատ, Ֆիրուզ Խանգատեան, Արմէն Պետրոսեան, Սարգիս Պալապանեան (Պալապան Խոճա), Յարութիւն վրդ. Պզտիկեան, Մկրտիչ Մկրտիչեան, Հայկ Պարիկեան, Երուանդ Ակիշեան, Ռուբէն Տիրարեան, Վարդան Պարիկեան, Անդրանիկ Կիրակոսեան, Ժիրայր Իսկէնեան, Տիկ. Տաքէսեան, Տիկ. Ադամեան, Մարի Սեմէրճեան, Արփի Սապունճեան... Գիտեմ, դեռ շատ են, բոլորը յիշել եւ արձանագրել հնարաւոր չէ, մի այսպանէք զիս, դուք ալ յիշեցէք անուն մը եւ մտովի օրհնեցէք անոր յիշատակը:

Այս մարդոց յիշատակը միշտ վառ մնալու է, հերոս ռահվիրաներ էին անոնք:

<https://kantsasar.com/news/60602-2/>

ՏԵՍԱԿԷՏ

**ԻՐԱՆԻ ՇՈՒՐՁ ԶԵՒԱՒՈՐՈՒԱԾ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՍՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԿՐՆԱՆ ԱԶԳԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ**

14/03/2026



«Իրան-ԱՄՆ Հակամարտութիւնը եւ Հայաստանի Հանրապետութեան Անվտանգութեան Հարցերը»

Նախաբան



Կասկած չկայ, որ ընթացիկ տարուայ, Մարտ ամիսէն սկսեալ, Մերձաւոր Արեւելքի, յատկապէս Իրանի շուրջ ձեւաւորուած ռազմաքաղաքական սրացումները ուղղակիօրէն եւ անուղղակիօրէն կ'ազդեն Հայաստանի անվտանգութեան միջավայրին վրայ: Թէեւ ՀՀ իշխանութիւնները նոյն օրերուն ցուցադրաբար պոռտիկ, կուկուրուզ եւ սուճուխ ուտելով «ամեն բան լաւ է լինելու»-ի նամակներ կը յղեն ժողովուրդին, մինչ պաշտօնական շրջանակները կը յայտարարեն, որ երկրին անվտանգութեան անմիջական սպառնալիք մը գոյութիւն չունի, սակայն փորձագիտական եւ հետախուզական վերլուծութիւնները կը մատնանշեն կարեւոր վտանգներ, որոնց դէմ յանդիման կը գտնուի մեր Հայրենիքը:

Աշխարհաքաղաքական եւ Ապահովական Հիմնական Վտանգները

- *Տարածաշրջանային ուժերու հաւասարակշռութեան փոփոխութիւն.* Իրանի հնարաւոր թուլացումը կրնայ խարխլել Հարաւային Կովկասի ներկայիս դրութիւնը: Թեհրան բազմիցս յայտնած է, որ Հայաստանի հետ սահմանի փոփոխութիւնը կամ «Զանգեզուրի միջանցքի» արտատարածքային կարգավիճակը իրեն համար «կարմիր գիծ» է:
- *Հիպրիտային սպառնալիքներ եւ ապատեղեկատուութիւն.* ՀՀ Արտաքին Հետախուզութեան Ծառայութիւնը նախագգուշացուցած է 2026-ին հիպրիտային սպառնալիքներու եւ արտաքին միջամտութեան աճի մասին, որոնք կրնան սրուիլ Մերձաւոր Արեւելքի լարուածութեան ֆոնին՝ յատկապէս Յունիսին սպասուող խորհրդարանական ընտրութիւններուն նախաշեմին:
- *Իրան-Ազրպէյճան լարուածութեան արտահոսք.* Իրանի կողմէ Ազրպէյճանին ուղղուած նախագգուշացումները (օրինակ՝ Նախիջեւանի օդակայանի միջադէպը (եւ կապ չունի թէ, որուն ձեռքով եղած է այդ) կրնան լարուածութիւն յառաջացնել անմիջապէս Հայաստանի սահմաններուն երկայնքով:

Ընկերատնտեսական եւ Լոճիսթիք Ազդեցութիւններ

- *Մարդասիրական ճգնաժամի վտանգ.* Իրանի մէջ իրավիճակի ապակայունացումը կրնայ յանգեցնել փախստականներու մեծ հոսքի դէպի Հայաստան, ինչ որ լրացուցիչ ճնշում կ'արձանագրէ երկրի պաշարներուն վրայ:
Կրնամ այստեղ տալ Սուրիոյ արհաւիրքի տարիներուն Լիբանանի դիմակալած ինդիքներուն օրինակը: Սուրիոյ մէջ 2011-ին ընթացք առած քաղաքական եւ ապահովական վերիվայրումներուն անմիջապէս յաջորդեց մեծ թիւով սուրիացի գաղթականներու անկանոն մուտքը՝ սահմանամերձ Լիբանան: Ի տարբերութիւն դարձեալ սահմանակից Թուրքիայէն, Լիբանանի ո՛չ տարածութիւնը, ոչ ժողովրդագրական նրբութիւնները, ոչ ալ պետական միջոցները կրնային նման հոսք հակակշիռի տակ պահել: Բան մը, որ յառաջացուց լուրջ ինդիքներ մանաւանդ երբ գաղթականներուն թիւը անցաւ 2 միլիոնը: Չուշացան անշուշտ արեւմտեան երկիրներու եւ միջազգային համապատասխան



կազմակերպութիւններու մարդասիրական/պարենային/ֆինանսական օգնութիւնները, որոնք Լիբանանի պետութեան ուսերէն թեթեւցուցին այս հարցին հետ առնչուելու լուրջ ծանրութիւնը, սակայն մնաց ընկերային և ժողովրդագրական այլ անլուծելի խնդիրներ (ինչպէս գողութիւններ, ոճիրներ, եւայլն) եւ այս բոլորին վրայ գումարուեցաւ Լիբանանի մէջ հազիւ հաւասարակշռուած յարանուանական թիւերու խախտում՝ եթէ նկատի ունենանք, որ սուրիացի գաղթականներուն մեծամասնութիւնը Իսլամ՝ սիւննի համայնքէն էին:

Նաեւ կարելոր է նկատի ունենալ, որ նման պահերու սահմանային/ցամաքային գաղթականութեան կը դիմեն տնտեսապէս ոչ կայուն ընտանիքներ, մինչ աւելի բարեկեցիկները՝ զանազան տարբեր միջոցներով կ'արտագաղթեն իրենց համար աւելի նպաստաւոր երկիրներ: Մինչ Լիբանանի պարագային, բացի վերը նշուածներէն, մշակութային կտրուկ տարբերութիւններ չկային եկուորներուն եւ բնիկներուն միջեւ, Հայաստանի պարագային այդ անպայմանօրէն կայ եւ սա շատ լուրջ խնդիր է: Ի դէպ, Հայաստանցի մեր հայրենակիցներէն ոմանք, մակերեսային մօտեցումով մը, բնաւ ալ պէտք չէ ուրախանան նման պարագային, միջազգային ֆինանսական օգնութիւններով, քանի ի վերջոյ արեւմտեան երկիրներ այդ օգնութիւնները կը տրամադրեն պարզապէս գաղթականներ ունենալու վտանգը իրենցմէ կարելի եղածին չափ հեռացնելու, զանոնք պահելով իրենց երկիրներէն հեռու:

- *Ենթակառուցային եւ առեւտրական խափանումներ.* Իրան Հայաստանի երկու ցամաքային ուղիներէն մէկն է: Լարուածութիւնը կրնայ դանդաղեցնել ենթակառուցային նախագիծերը (կազմ՝ ելեկտրականութեան դիմաց) եւ բարձրացնել վառելանիւթի գիները:
- *Լոճիսթիք խնդիրներ.* Արդէն իսկ արձանագրուած են թոյլներու չեղարկումներ եւ բեռնափոխադրումներու յաճախակի կանգ, ինչ որ կը բարդացնէ Իրանէն Հայաստան եւ հակառակը՝ ապրանքներու տեղափոխումը:

Իրան-Հայաստան Տնտեսական Փոխգործակցութիւնը եւ Միւնիքի Անպահովական Իրավիճակը

Իրան-Հայաստան տնտեսական փոխգործակցութիւնը եւ Միւնիքի անպահովական իրավիճակը կը գտնուին ճգնաժամային փուլի մէջ այսօր, պայմանաւորուած՝ Մերձաւոր Արեւելքի մէջ Իրանի շուրջ ստեղծուած դրութեամբ:

Իրան-Հայաստան տնտեսական ծրագիրներ

Տարածաշրջանային ճգնաժամը երկակի ազդեցութիւն կը թողու ռազմավարական նախագիծերուն վրայ.



• *Ենթակառուցային (կազմելեկտրականութեան դիմաց).* Հակառակ տարածաշրջանային լարուածութեան, այս պայմանագիրը կը շարունակէ գործել որպէս Հայաստանի ենթակառուցային անվտանգութեան հիմք: Սակայն Իրանի ենթակառուցային վրայ յարձակումներու վտանգը ստիպած է ՀՀ կառավարութեան քննարկել եռանդակիրներու այլընտրանքային պաշարներու կուտակման հարցը:

• *Հիւսիս-Հարաւ ճանապարհային միջանցք.* Միւնիքի հատուածին մէջ (Ագարակ-Քաջարան) շինարարութիւնը կը շարունակուի իրանական ընկերութիւններու ներգրամամբ: Անիկա ռազմավարական նշանակութիւն ունի՝ շրջանցելու համար Ազրպէյճանի վերահսկողութեան տակ անցած ճանապարհահատուածները: Այս աշխատանքները կրնան դանդաղիլ պատերազմական իրավիճակի բարդացման պարագային:

• *Առեւտրաշրջանառութիւն.* Իրանի դէմ պատժամիջոցներու հնարաւոր աւելի եւս խստացումը կամ ռազմական գործողութիւնները կրնան խաթարել բեռնափոխադրումներու կայունութիւնը, ինչ որ կը յանգեցնէ ապրանքներու թանկացման:

Միւնիքի ապահովական շեշտադրուած վտանգները

Միւնիք կը մնայ աշխարհաքաղաքական բախման կիզակէտին մէջ հետեւեալ պատճառներով.

• *«Զանգեզուրի միջանցքի» գործօնը.* Ազրպէյճան եւ Թուրքիա կը շարունակեն ճնշում գործադրել միջանցքի բացման համար: Իրան Միւնիքի սահմանը կը համարէ իր «անվտանգութեան դուռը» եւ յստակ յայտարարած է, որ չի հանդուրժեր սահմանային փոփոխութիւններ:

• *Իրանի թուլացման հետեւանքները.* Եթէ Իրան շարունակէ ներքաշուած մնալ լայնածաւալ պատերազմի մէջ, Ազրպէյճան կրնայ օգտուիլ առիթէն՝ Միւնիքի նկատմամբ ռազմական թշնամութիւն իրականացնելու համար, քանի որ Թեհրանի զսպող դերը պիտի նուազի:

• *Հիպրիտային պատերազմ.* Միւնիքի մէջ աշխուժացած են ապատեղեկատուական արշաւները, որոնք նպատակ ունին խուճապ յառաջացնել բնակչութեան շրջանին մէջ եւ թուլացնել պաշտպանողականութիւնը:

Կապանի մէջ Իրանի գլխաւոր հիւպատոսութեան պարագան

Կապանի մէջ Իրանի գլխաւոր հիւպատոսութիւնը դարձած է շրջանային անվտանգութեան ճարտարապետութեան առանցքային տարրերէն մէկը: Անիկա ինչպէս միշտ կը դիտարկուի ոչ միայն իբրեւ դիւանագիտական մարմին, այլ նաեւ իբրեւ «ռազմավարական զսպման» գործիք մը:

Ահա հիւպատոսութեան հիմնական դերակատարութիւնը լարուածութեան զսպման հարցին մէջ.



1. Սահմաններուն անձեռնմխելիութեան «կենդանի» երաշխիք

Հիւպատոսութեան ներկայութիւնը Կապանի մէջ Թեհրանի յստակ ուղերձն է առ այն, որ որեւէ ռազմական ագրեսիա մը ընդդէմ Սիւնիքի անմիջականօրէն կ'առնչուի Իրանի շահերուն: Իրանցի դիւանագետները բազմիցս շեշտած են, որ Հայաստանի հետ սահմանը «հազարամեակներու պատմութիւն ունի» եւ չպէտք է փոփոխուի:

2. Տեղեկատուական եւ դիտարկումներու կեդրոն

Հիւպատոսութիւնը կը ծառայէ իբրեւ Իրանի «աչքերն ու ականջները» անմիջապէս սահմանամերձ գօտիին մէջ: Ասիկա թոյլ կու տայ.

- Օփերաթիւ արձագանգել սահմանային միջադէպերուն:
- Կանխել ապատեղեկատուութիւնը, որ կրնայ գործածուիլ ռազմական գործողութիւններ աւելի եւս սրելու համար իբրեւ առիթ:
- Վերահսկել տեղաշարժերը «Զանգեզուրի միջանցքի» յաւակնութիւններուն համատեքստին մէջ:

3. Հակակշիռ արտաքին ուժերուն

Սիւնիքի մէջ հիւպատոսութեան գործունէութիւնը կը հակակշռէ շրջանին մէջ Ազրպէյճանի եւ Թուրքիոյ ազդեցութեան: Ասիկա նաեւ ազդակ մըն է Արեւմուտքին եւ Ռուսաստանին, որ Իրան պատրաստ է ապահովել աշխուժ ներկայութիւն մը իր հիւսիսային սահմաններուն պաշտպանութեան համար:

4. Տնտեսական «անվտանգութեան բարձիկ»

Հիւպատոսութիւնը կը համակարգէ իրանական բեռնատարներուն անվտանգ տեղաշարժը Գորիս-Կապան եւ այլընտրանքային ճամբաներով: Ասիկա կենսական է, քանի որ տնտեսական կայունութիւնը Սիւնիքի մէջ կը նուազեցնէ ներքին ապակայունացման վտանգները:

5. Հոգեբանական ազդեցութիւն

Տեղական բնակչութեան համար իրանական դիւանագիտական ներկայութիւնը լրացուցիչ ապահովութեան զգացում կը ստեղծէ՝ նուազեցնելով խուճապային տրամադրութիւնները, որոնք յաճախ կը հրահրուին արտաքին հիպոթիտային գրոհներու միջոցով:



Կարելորդ դիտարկում. Իրանի ներկայիս իրավիճակը կրնան ժամանակաւորապէս թուլցնել հիւպատոսութեան «զապող ուժը», եթէ Թեհրանի ուշադրութիւնը կեդրոնանայ բացառապէս հարաւային ճակատին վրայ:

ՀՀ Կառավարութեան Արձագանգը

Ըստ տեղեկատուութիւններու, ՀՀ Անվտանգութեան Խորհուրդը, իբր ձեւաւորած է աշխատանքային խումբ մը՝ Մերձաւոր Արեւելքի իրավիճակի հնարաւոր հետեւանքները կառավարելու համար: Նշեալ մարմինը վերջերս հաստատեց, թէ կ'իրականացուի ամենօրեայ դիտարկում մը՝ Միւնիքի ուղղութեամբ հնարաւոր սադրանքները կանխելու եւ տնտեսական կայունութիւնը պահպանելու համար, մինչ պաշտօնական Երեւան կը պահպանէ զուսպ դիրքորոշում մը ինչ կը վերաբերի ընթացող պատերազմին՝ կոչ ուղղելով դիւանագիտական լուծումներու:

Իրանի Հայ Համայնք

Մերձաւոր Արեւելքի մէջ ընթացող ռազմաքաղաքական սրացումները, յատկապէս Իրան-Իսրայէլեան ուղղակի հակամարտութիւնը եւ ԱՄՆ-ի ներգրաւուածութիւնը, Էական մարտահրաւերներ կը ստեղծեն Իրանի հայ համայնքին համար:

Աշխարհաքաղաքական իրավիճակը եւ անվտանգութեան վտանգները

Ռազմական գործողութիւններու ազդեցութիւնը. Իրանի տարածքին մէջ օդային յարձակումներու եւ հրթիռակոծումներու ալիքները, ներառեալ թիրախները Թեհրանի մէջ, անմիջական վտանգ կը ներկայացնեն քաղաքացիական բնակչութեան, այդ թիւին մէջ՝ հայկական թաղամասերուն համար:

Թիրախային խոցելիութիւն. Հակառակ այն փաստին, որ Հայ համայնքը պատմականօրէն պաշտպանուած եղած է Իրանի մէջ, ժամանակակից անկանոն պատերազմի պայմաններուն մէջ քաղաքացիական բնակչութիւնը կը մնայ խոցելի:

Ներքին անկայունութիւն. Իրանի մէջ ներքին էթնիք եւ ընկերային լարուածութեան հնարաւոր աճը, որ կը խթանուի արտաքին ուժերու կողմէ, կրնայ ապակայունացնել իրավիճակը հայաշատ շրջաններուն մէջ:

Իրանահայութեան հաւանական տեղափոխումը Հայաստան

Ներկայ միտումները. Հայաստանի ԱԳՆ-ն եւ Իրանի մօտ ՀՀ դեսպանատունը իբր գործօն կերպով կը հետեւին իրավիճակին: Արդէն իսկ գրանցուած են ՀՀ քաղաքացիութիւն ունեցող անձերու վերադարձի դէպքեր: Սակայն ո՞ր է Սփիւռքի հարցերով ՀՀ վարչապետի գրասենեակին կից յանձնակատարի պաշտօնը զբաղեցնողը, որուն այս հարցով ազդու միջամտութիւնը կամ աշխատանքները նշմարելի չեն, մինչ Սուրիոյ արհաւիրքի



տարիներուն, ՀՀ Սփիւռքի նախարարութիւնը իր կարելին ըրաւ սուրիահայութենէն գոնէ բեկոր մը փրկելու, փորձելով զանոնք հաստատել Հայաստանի մէջ:

Մարդասիրական միջանցք. Հայաստան կը դիտուի որպէս կարելորագոյն մարդասիրական միջանցք ոչ միայն հայերուն, այլ նաեւ այլ քաղաքացիներուն համար, որոնք Իրանէն կը տեղափոխուին ցամաքային ճամբով:

Մահմանային իրավիճակ. Ըստ որոշ տուեալներու, բարեբախտաբար Հայ-իրանական սահմանը ներկայիս կը գործէ բնականոն կերպով, ինչ որ առ այժմ թոյլ կու տայ կազմակերպուած՝ ոչ-խուճապային տեղաշարժ:

Մարտահրաւերներ Հայաստանի համար. Իրանի վրայ շղթայազերծուած պատերազմը երկարելու պարագային, իրանահայերու հաւանական մեծաթիւ ներհոսքը կրնայ լրացուցիչ ճնշում գործադրել Հայաստանի բնակարանային շուկային եւ ընկերային ենթակառուցուածքներուն վրայ, յատկապէս Արցախէն բռնի տեղահանուածներու ճգնաժամէն ետք: Այս իրավիճակը եւ ի չգոյէ հայրենադարձութեան պետական յստակ ռազմավարութեան, բան մը, որ վերջին քառասուն տարիներուն հողմերու հետ աշխարհի չորս կողմը ցրուեց ալեկոծումներ ապրող Մերձաւոր Արեւելքի հայկական բոլոր սփիւռքները, կրնայ նաեւ կորսնցնել իրանահայութիւնը ու չճառայեցնել այն Հայրենիքի զարգացման ի խնդիր:

ՄԵԻԱԿ ՅԱԿՈԲԵԱՆ

«Զարթօնք» օրաթերթի Գլխաւոր Խմբագիր


**ԱԶԳԱՅԻՆ
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ՝

ԳՈՅՈՒԹԵԱՆ

19/2/2026

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ- ՊԱՅՔԱՐ 462



Ազգային գաղափարախօսութիւնը ժողովուրդի մը պետական մտածողութիւնը ձեւաւորող եւ ազգային ընթացքը կողմնորոշող պատուարն է: Ան կ'ընդլուզէ ժողովուրդին անցեալը, ներկան ու ապագան, կը ձեւաւորէ ազգային շահերու ըմբռնումը ու կ'ուղղորդէ պետական որոշումները: Ազգային գաղափարախօսութիւնը ոչ միայն քաղաքական ծրագիր է, ոչ միայն տեսութիւն, այլ՝ հոգեւոր, մշակութային եւ պատմական ինքնութեան խտացումն է:



Ազգային գաղափարախօսութիւնը սովորաբար ամրագրուած կ'ըլլայ երեք հիմնական սկզբունքներու վրայ՝ ինքնութիւն, անվտանգութիւն եւ բարգաւաճում:

Ինքնութիւնը կ'ապահովէ տուեալ ժողովուրդին պատմական ու մշակութային առանձնայատկութիւնները: Ան ժողովուրդի մը պատմական յիշողութեան, լեզուի, մշակոյթի եւ արժէքային համակարգի կենդանի ամբողջութիւնն է: Ինքնութիւնը կը ձեւաւորուի սերունդներու փորձառութեամբ, կորուստի եւ յաղթանակի յիշողութեամբ եւ կը փոխանցուի իբրեւ հոգեւոր ժառանգութիւն: Առանց ինքնութեան՝ ժողովուրդը կը վերածուի անուղղելի հաւաքականութեան, իսկ պետութիւնը կը կորսնցնէ իր վարկանիշը:

Անվտանգութիւնը՝ գոյութիւնը: Երկրի մը անվտանգութիւնը չի սահմանափակուիր միայն ռազմական կարողութիւններով: Ան կը ներառէ պետութեան տարածքային ամբողջականութեան պաշտպանութիւնը, քաղաքացիներու ֆիզիքական անվտանգութիւնը, քաղաքական կայունութիւնը եւ ազգային ինքնութեան պահպանումը: Անվտանգ երկիրը այն է, ուր պետութիւնը ի վիճակի է կանխել արտաքին սպառնալիքները, դիմակայել ներքին ապակայունացումները եւ երաշխաւորել իր ժողովուրդին խաղաղ ու արժանապատիւ գոյութիւնը:

Բարգաւաճումը՝ տնտեսութիւնը, իրաւական համակարգը, հոգեւոր, բարոյական, ազգային եւ քաղաքացիական արժէքներու ամբողջութիւնը եւ հասարակական համերաշխութիւնը: Բարգաւաճումը առանց ինքնութեան եւ անվտանգութեան կարճատեւ պատրանք է պարզապէս:

Ազգային գաղափարախօսութիւնը հիմնաքարն է երկրի սահմանադրութեան: Ան կ'ուղղորդէ պետական կառավարման սկզբունքները, պաշտպանութեան ու քաղաքացիական իրաւունքներու հիմքը եւ կ'երաշխաւորէ ազգային արժէքներու շարունակականութիւնը:

Անոր դրոյթներուն վրայ կը կերտուի իշխանութեան ռազմավարութիւնը: Ան միաժամանակ սահմանագիծ մըն է իշխանութեան կամայականութիւններուն առջեւ:

Ազգային գաղափարախօսութիւնը կայուն պետութեան մը վարկանիշն է: Ան ընդհանուր յայտարարի մը շուրջ կը կամրջէ ժողովուրդի մը տարբեր միաւորներուն տեսակէտները:

Ազգային գաղափարախօսութիւնը կը պատասխանէ հիմնարար հարցումներու. ո՞վ ենք մենք, ուրկէ՞ կու գանք, ինչպիսի՞ պատասխանատուութիւն կը ստանձնենք, եւ ինչպիսի՞ ապագայ կ'ուզենք կերտել: Հարցումները անպատասխան ձգող ժողովուրդը ժամանակի ընթացքին կը դառնայ ամբոյս, իսկ պետութիւնը՝ վարչական մեքենայ, ենթակայ՝ պատահական ղեկավարներու կամ օտար շահերու կամքին:

Իշխանութիւնները կը փոխուին, կառավարութիւնները կու գան ու կ'երթան, սակայն

ազգային գաղափարախօսութիւնը կը մնայ անփոփոխ ուղենիշ: Ազգային

գաղափարախօսութեան բացակայութիւնը շահադիտութիւններու թակարդը կը մղէ երկիրը:



Կարճաժամկետ անձնական կամ խմբային շահերը կը գերիշխեն, իսկ պետական եւ ազգային երկարաժամկետ ծրագիրները կը վտանգուին: Տուժողը անպայման կ'ըլլայ ազգային շահը: Զուգահեռաբար, հաւաքականութիւնը կը վճարէ ապիկար անհատներու արկածախնդրութեան գինը:

Հայաստանի անկախութենէն անցած է արդէն երեսունհինգ տարի: Ժամանակ մը, ուր ըստ բնական տրամաբանութեան, արդէն իսկ ազգային յստակ գաղափարախօսութիւն մը ձեւաւորուած պիտի ըլլար, հիմնուած՝ պատմութեան, ցեղասպանութեան յիշողութեան, պետականութեան վերակերտման եւ ապագայի անվտանգութեան վրայ: Դժբախտաբար մեր պետութիւնը այս օրակարգին առջեւ կորսնցուցած է իր կողմնացոյցը: Մինչեւ օրս չենք ձեւաւորած միասնական ազգային յայտարարներ, չենք մշակած համահայկական ծրագիր եւ չենք հաստատած այն արժեքային յենքը, որ միաւորող ուժ ծառայէ համայն հայութեան: Մերօրեայ իշխանութիւնները մինչեւ իսկ կ'անտեսեն Հայոց Ցեղասպանութեան հարիւրերորդ տարելիցին առիթով Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ ընթերցուած Համահայկական Հռչակագիրին դրոյթները:

Ի՞նչ կարելի է սպասել, երբ Իշխանութեան բուրգը չի բարձրանար արժեքներու ու սկզբունքներու վրայ: Որոշումները կը կայացուին ո՛չ թէ ազգային շահերու չափանիշով, այլ՝ սեփական իշխանութիւնը պահպանելու տրամաբանութեամբ: Երբ իշխանութիւնը կը կառուցուի միայն համախոհներու ցանցի վրայ, երբ չի յարգուիր ազգային պատասխանատուութիւնը, պետութիւնը կը կորսնցնէ իր ներքին կայունութիւնը եւ ժողովուրդին վստահութիւնը:

Այս վիճակը վտանգաւոր է, որովհետեւ գաղափարական դատարկութիւնը կը լեցուի օտար մտածողութիւններով, պարտադրուած «իրապաշտութիւններով» եւ ազգային արժեքներուն հակասող պատկերացումներով: Պատմութիւնը կը ներկայացուի բեռ, ինքնութիւնը՝ խոչընդոտ, իսկ պահանջատիրութիւնը՝ անիրագործելի երազանք:

Այս բացակայութիւնը հետեւանք է գիտակցաբար կամ անգիտակցաբար որդեգրուած քաղաքական մտածողութեան մը, որ ազգայինը կը դիտէ խոչընդոտ, իսկ պահանջատիրութիւնը՝ բեռ: Այս պայմաններուն մէջ Սփիւռք-հայրենիք յարաբերութիւնը կը սահմանափակուի զգացական ելոյթներով կամ բարեսիրական հանգանակութիւններով, փոխանակ դերերու բաշխումով ռազմավարական եւ գաղափարական համագործակցութեամբ:

Առանց ազգային գաղափարախօսութեան, ժողովուրդ մը չի կրնար հիմնաւորել իր գոյութեան տրամաբանութիւնը: Առանց անոր՝ ո՛չ Սփիւռքը կրնայ ընկալել իր դերը, ո՛չ հայրենիքը՝ իր պարտականութիւնը:

Ազգային գաղափարախօսութիւնը հաւաքական տեսակետներու հանգանակն է: Անոր բացակայութիւնը ծանր հետեւանքներու գիրկը կը գլորէ երկիրը: Մինչդէռ, ազգային

գաղափարախօսութիւնը քաղաքական հոսանքներուն առջեւ կը բանայ միեւնոյն նպատակին համար գործելու բազմաձև եւ իւրայատուկ ենթահող: Անոնք կրնան հակադիր տեսակէտներ, մօտեցումներ կամ գործելաձև ունենալ, սակայն պիտի ծառայեն միեւնոյն շրջագիծին մէջ, միեւնոյն նպատակին՝ ազգային գաղափարախօսութեան:

Ազգային գաղափարախօսութեան բացակայութեամբ, պետութիւնը կը դադարի ըլլալ ազգային շահերու պաշտպան: Մայրաքունը կը սկսի քաղաքական մտածողութենէն, ապա կը հասնի քարտէսին: Պատմութիւնը կը վերագրուի «անցեալին», ինքնութիւնը կը կոչուի «խոչընդոտ», իսկ արժանապատուութիւնը կը փոխարինուի «իրապաշտութեան» կեղծ լեզուով:

Ոչ մէկ պետութիւն կրնայ գոյատեւել առանց գաղափարախօսական յենքի: Ո՞վ կրնայ բացատրել, թէ ի՞նչ են անկախ- գերիշխան Հայաստանի գաղափարախօսութեան դրոյթները: Ի՞նչ հիմքերու վրայ մշակուած է անկախ Հայաստանի ազգային գաղափարախօսութիւնը: Անվտանգութիւնը միայն զենքով չ'ապահովուիր, այլ՝ հաւաքական գիտակցութեամբ: Իսկ հաւաքական գիտակցութիւնը միայն ազգային գաղափարախօսութենէն կրնայ ծնունդ առնել:

Ազգային գաղափարախօսութիւնը մեր պետականութեան եւ ժողովուրդի գոյութեան նախապայմանն է: Ե՞րբ պիտի ունենանք մեր ազգային գաղափարախօսութիւնը:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՈՒ ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ



ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ

Ազգային ժողովի ընտրութիւնները, որքան մօտենան, այնքան քաղաքական, կուսակցական թէ անհատական մրցակցութիւններն ու թեկնածուները աւելի կը սրուին, կը գրգռուին ու կը շիկանան: Իշխանական թելը, թէեւ ինքզինք կը նկատէ ապահով եւ հաւանական յաջողութիւններով տոգորուած, բայց, երբեմն ակնյայտ կը դառնայ, որ նաեւ համակուած է մտահոգութեամբ, թէ կրնայ «անակնկալ» մը ձախողցնէ

զինք:

Ընդդիմութիւնը, որ չկրցաւ երբեք ինքզինք արդարացնել, ընդհակառակը, միշտ ալ... փայլեցաւ իր ձախաւերութիւններով, անճարակութիւններով եւ խայտառակութիւններով, ժողովուրդին մեծամասնութեան մօտ արձանագրելով յուսախարութիւն ու հիասթափութիւն:

Անտերներու, անտարբերներու եւ անհոգներու զանգուած մըն ալ կայ, որ երբեք հետաքրքրուած չէ տեղի ունեցող իրադարձութիւններէն, բոլորն ալ նկատելով



պատեհապաշտներ եւ բախտախնդիրներ կամ ալ որեւէ յոյս չկապելով որեւէ կողմի հետ, տակաւին ալ, իր կեանքը փնտռելով այլուր:

Իսկ մեծագոյն բացական է՝ մտքի ու գրիչի մտաւորականութիւնը, երբ անկէ կ'անկկալուի մեծ պատասխանատուութիւն, իր գործօն դերակատարութիւնը ունենալու, հոն ուր իր կարիքը կը զգացուի եւ իր մտաւորականի կանչը կը պահանջէ:

Խորհրդային տարիներուն, մտաւորականութիւնը ուժ էր, հեղինակութիւն եւ ազդեցիկութիւն, կառավարութենէն, կուսակցութենէն, իշխանութենէն թէ պետականութենէն ներս եւ պատահական չէր, որ Կենտկոմի քարտուղարները (ինչպէս՝ Անտոն Քոչինեանը, Յակոբ Զարոբեանը եւ ի մասնաւորի Կարէն Դեմիրճեանը), իրենց շուրջ կը հաւաքէին անուանի, ձեռնհաս եւ յարգելի ազգայիններ, մերթ՝ առ ի պաշտօնէ, մերթ ալ՝ որպէս փորձառու խորհրդականներ:

Իսկ այսօր, Ազգային Ժողովին մէջ, կա՞յ արդեօք մտաւորական մը, արուեստագետ մը, գիտնական մը, որ իր ունեցած արժանիքներով, բարեմասնութիւններով, ունակութիւններով, գիտելիքներով, նաեւ՝ ազգայնականութեամբ, տեսլապաշտութեամբ, վաստակատրութեամբ եւ հռչակութեամբ, կրնայ նուիրուիլ ու ծառայել իր հայրենիքին ու ժողովուրդին բարօրութեան ու բարեկեցութեան:

Անշուշտ, խօսքը հոս կը վերաբերի պետական վարչակարգերուն ու վարչակազմերուն, որոնք որեւէ պետութեան մը համար, կը կազմեն այն բանալիներն ու հնարքները, որոնցմով կը կերտուի, կ'առաջնորդուի ու կը ղեկավարուի ժողովուրդը, իր զանազան կարիքներով, բազմաբնոյթ պահանջներով ու բազմատեսակ տուեալներով:

Դժբախտաբար, մենք չտեսանք կամ չզգացինք որեւէ բժախնդրութիւն, համակրութիւն, նախաձեռնութիւն կամ պատրաստակամութիւն, հայ մտաւորականութեան հանդէպ ցուցաբերուի գուրգուրանք եւ ուշադրութիւն կամ առաջնորդում ու նշանակում, որ այս անփոխարինելի եւ ծանրակշիռ հատուածը, ներգրաւուի պետական կառոյցներէն ներս: Եթէ անկախութեան առաջին տարիներուն, կային մտաւորականներ, արուեստագետներ, գործիչներ ու հնարամիտներ, որոնք, գէթ Ազգային Ժողովին մէջ էին, իսկ ումանք ալ կը վայելէին համաժողովրդականութիւն, սակայն, յետագային, անոնք... չքացան, շոգիացան կամ անհետացան, որովհետեւ, անոնց տեղ լեցուեցան, մեղմ ըսած, անարժաններ, իրենց անշնորհութիւններով, տափակութիւններով, միջակութիւններով եւ այլանդակութիւններով: Այլապէս, ինչպէ՞ս բացատրել Ազգային Ժողովէն ներս, անմակարդակ ելոյթները, անվայելուչ արտայայտութիւնները, անպատկառ բանավէճերը, իսկ զգուրտոցներն ու ծեծուրտութիւնները, ի՞նչ պատիւ կը բերեն ու վարկ կու տան այդ կառոյցին եւ ընդհանրապէս՝ Հայաստանի:

Այս արտառոցութիւնները բան մը կը նշանակեն՝ թէ ոչ եւ ատոնց մէջ, ո՞ր պէտք է տեսնել Հայաստանը, իր վարած քաղաքականութեամբ ու ժողովրդավարութեամբ:

Այս յոռի եւ վայրագ, անքաղաքակիրթ եւ անփառունակ ընթացքը, մինչեւ ե՞րբ կրնայ շարունակուիլ եւ ո՞ր կրնայ տանիլ կամ հասցնել Հայաստանը, այնքան ատեն որ՝ իսառնափնթորը, խուճապը, ապիկարութիւններն ու ծայրայեղութիւնները կը մնան տիրապետող... գործօններ, իսկ կացութիւնները՝ ալեկոծող... ալիքներ:

Արդեօք Հայաստանի պատկան իշխանութիւնները, պետական թէ ժողովրդական ցանցերով, չէ՞ն ապրիր այն արհաւիրքները, աղէտները ու վարկաբեկումները, որոնք կը ծառանան իրենց (ՄԵ՛Ր) հայրենիքին դէմ, առանց որ գտնուի զսպիչ ուժ մը կամ հակադարձող կարելիութիւն մը, դուրս բերելու հայրենիքը ու հայ ժողովուրդը այս շարունակուող ու բռնկուող ներքին վայրէջքներէն, որովհետեւ, ատոնք, այս հոսանքներով, խարխափումներով ու ցնորքներով, ոչ մէկ շահոյթ, եզրոյթ կամ արժոյթ պիտի կարենան... պարգեւել հայութեան:



Այս վերագրումներէն, պատկերացումներէն եւ ընդգծումներէն դուրս, որոնք նշմարելի ու զգալի են, ո՞վ ի վիճակի կամ տրամադիր պիտի ըլլայ, զգաստացնելու՝ «խելագարուած ամբոխ»ները, ո՞վ պատրաստակամ պիտի դառնայ զսպելու այս կամ այն կողմը, այնքան ատեն, որ՝ ո՛չ ամպերը կ'անհետին, ո՛չ մշուշները կը փարատին, ո՛չ ջիղերը կը հանգչին, իսկ դէպի իշխանական աթոռներու արշաւանքները կը մոլեգնին, կ'ուռճանան ու կը բռնկին: Ի դէմս այս ձգտուած ու լարուած կարգավիճակներուն, որոնք, աւելի քան բուռն ու բիրտ դառնալու ցուցանիշներ ցոյց կու տան, ոչ միայն իրենց քաղաքական ճակատումներով, այլեւ՝ աւելի խիստ (ու հաւանաբար՝ բիրտ) միջամտութեան կարգուսարքը, իր գանազան բարիքներով, օգտակարութիւններով, բարեկարգութիւններով ու տնօրինումներով, ո՛չ կը կերտուի, ո՛չ ալ կը բարեփոխուի:

Ներկայիս, բոլորին հայեացքները եւ ուշադրութիւնները կեդրոնացած են Ազգային Ժողովի ընտրութիւններուն վրայ, այն հաւատքով կամ համոզումով, խաբուսիկ կամ անլուրջ յոյսերով, թէ իրենց ճակատը կամ հետեւորդախումբը պիտի յաղթանակէ, ապա, պիտի ճգնէ մրցակիցը կամ հակառակորդը:

Սակայն, անկեղծօրէն, ո՞ր կը փնտռուի իսկական ժողովրդավարութիւնը, ի՞նչ գոյնի կամ որակի կրնայ ըլլալ ան եւ ի՞նչպէս կրնայ արդարացնել իր դերակատարութիւնը, երբ ամենուր «լաբրինդոս» կը տիրէ, ուր «տէրը ծառան չի ճանչնար» (եւ հակառակը), իրարու նկատմամբ անհանդուրժողութիւնը հասած է իր գագաթնակէտին:

Հայաստանաբնիկը չի՞ տեսներ, որ ժողովուրդը միակամ չէ, միաձոյլ չէ, միագոյն չէ, իսկ ատոնք ինչպէ՞ս կրնան միանալ, հզօրանալ եւ ամրանալ, ի դէմս ներքին անհարթութիւններուն եւ արտաքին միջամտութիւններուն:

Շատեր կը փորձեն իրենք զիրենք նկատել անբեկանելի իշխանութեան ջատագովներ ու ջահակիրներ, Հայաստանի գոյութիւնը եւ յարատեւումը առընչելով այդ կարգախօսին հետ, սակայն, ատոր հասնելու կամ անկէ օգտուելու համար, կա՞ն առաջադրանքներ ու լուծումներ, որոնք Հայաստանը կրնան առաջնորդել այդ ուղիներով, մինչդէռ սփռուած պատկերը, բոլորովին ուրիշ պատկեր կու տայ, իր սեւ ու մութ գիծերով, հետեւաբար, խիստ կասկածելի է, որ այդ երթով ան կրնայ ինքզինք պարտադրել եւ արժեւորել:

Պէտք չէ մտահան ընել, որ՝ Հայաստանը, անդարմանօրէն եւ անբուժօրէն կը տառապի իր բազմաթիւ վերքերով, որոնցմէ իւրաքանչիւրը ունի իր պատկանելիութիւնը, հայեցողութիւնը, տեսողութիւնը ու մեկնաբանութիւնը, թէ՛ ո՞ր կը յայտնուի ան, քաղաքականօրէն, ընտրականօրէն, գործընկերօրէն ու ծրագրօրէն, ունենալու իր հետեւորդները, կողմնակիցները կամ զօրակիցները:

Միւս կողմէ, արտաքին ուժերը, մօտակայ թէ հեռաւոր, իրենց բարեկամական, քաղաքական, տնտեսական, նոյնիսկ զինուորական մերձեցումներով, միշտ բեմին վրայ են, վարագոյրին առջեւ թէ ետին, յաւակնելով Հայաստանին հետ պահելու լաւագոյն եւ արդիւնաբեր յարաբերութիւններ:

Իրատեսութիւնը եւ առարկայականութիւնը, գործնամետութիւնը ու հեռատեսութիւնը, ի՞նչ կը յուշեն դէպի Ազգային Ժողով սուրացող կարաւաններուն ու կառքերուն, միայն հասնիլ հոն ու բազմիլ թեկնածուական աթոռներուն վրայ (ականջը խօսի Լիբանանին), որպէսզի շարունակուին ու վերանորոգուին այն փերեզակութիւնները եւ խաղքութիւնները, որոնք ժողովուրդին հրամցուեցան անցնող տարիներուն:

Իշխանութիւնը, միջազգային հարթակներու վրայ, համարեա գոհունակութիւն մը կ'ապրի, որ ինք անպայմանօրէն եւ անվիճելիօրէն, պիտի վերադառնայ Ազգային Ժողով, որուն համար, ամէն միջոցի ու հնարքի կը դիմէ հաճոյանալու բոլորին առջեւ, ընդհուպ, մեծ պետութիւններուն եւ եւրոպական ոստաններուն:



Խեղճուկրակ ու թափթփած ընդդիմութիւնը, ինքզինք պատե-պատ կը գարնէ, ըսելու եւ յիշեցնելու, թէ ինք եւս հրապարակի վրայ է ու կրնայ անցարգելները ձեռքէլ ու... հրաշքներ գործել, առանց անդրադառնալու, որ նախ ինք չունի ո՛չ միութիւն, ո՛չ ուժականութիւն, ո՛չ ալ ժողովրդականութիւն, ապա՝ որեւէ յաւակնութիւններով ան չի կրնար դառնալ առաջնակարգ իշխանութիւն, ոչ ալ կրնայ գրաւել պետականական ղեկ ու դիրք:

Ահա այսպիսի փոթորիկներուն մէջ, ուրիշ սուր պայքար մը կ'ընթանայ, ապագայ վարչապետական թեկնածութեան շուրջ, որուն մասին, կ'արժէ հետեւեալ տխրահիւս պատկերը ներկայացնել.

Անոնք, որոնք ինքզինքնին թեկնածու կը նկատեն կամ կ'առաջադրուին, այս կամ այն զիւ նենգ ու ծուռ հաշիւներով, ցաւալի է որ մեծ մասը, չի ներկայացներ որեւէ առաւելութիւն, յատկանշութիւն ու բարեմասնութիւն, որ կրնայ հպարտացնել եւ արժեւորել նման վարչամեծութիւն մը:

Այդուհանդերձ, ամենէն մեծ ու խոր քստմնելիութիւնը այն է, որ նախկին նախագահներէն մէկը (Ռոպերթ Քոչարեան), առանց խպնելու ու քաշուելու, իր թեկնածութիւնը (կամ իւրայինի մը) շրջանառութեան մէջ կը դնէ, երբ ինք կը գտնուի բազմաթիւ ամբաստանութիւններու տակ (որոնց մասին հետեւողականօրէն անդրադարձ կատարուած է, առանց որեւէ անմիջական պատժամիջոցներու):

Այս առիթով, հետաքրքրական դրուագ-արձանագրութիւն մը, որուն ակնդիրն եւ ունկնդիրը եղած եմ:

Հայաստանի Գ. Հանրապետութեան առաջին հիմնադիր-նախագահը՝ ԼԵՒՈՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ, որ եղած էր համակուրսեցի մը հետս (ինք՝ Արեւելագիտական, ես՝ բանասիրական, Երեւանի Պետական Համալսարանէն), 1998ին, հրաժարական տալով, իր տեղը զիջեցաւ Ռոպերթ Քոչարեանին, որ, ըստ իս, պատմականօրէն ու քաղաքականօրէն ԱՀԱԻՈՐ ՄԽԱԼ մըն էր եւ ողբերգութիւն դարձաւ Հայաստանի ու հայութեան համար:

Մեր մտերմիկ հանդիպումներէն մէկուն ընթացքին, հարց տուի. «Ինչո՞ւ այս հրաժարականը» եւ ինչո՞ւ այս... «եկուոր»ը, որուն մասին իր պատասխանը տուաւ (եւ օրին այդ մասին ես արտայայտուեցայ), իսկ ժամանակները ցոյց տուին, ինչ որ տեղ, իր խոստովանութեամբ եւ իմ ակնարկութեամբ, մենք ճիշդ էինք:

Լեւոն Տէր Պետրոսեանը լուրջ, խոհուն, իմաստագէտ, մատենագէտ ու բազմաշնորհ մտաւորական մըն է, ազգային-քաղաքական հարցերու հմուտ մասնագէտ ու պատմագիտական հարուստ հատորներու հեղինակ:

Ճիշդ է, երկար ժամանակ, ան լուսարձակներէ հեռու մնաց, իր պատճառները ունենալով (ճիշդ ըրաւ), բայց, յաճախ, աշալուրջ, հետեւողական, ակնառու երախտաւոր մը մնաց, որուն հետ իմ բարեկամութիւնս (մեր հայրերը ըլլալով ջերմ գաղափարակիցներ) միշտ ալ մնաց կանգուն եւ անմիջական, ամէն անգամ որ, Հայաստան այցելութեանս ընթացքին, իր հետ գլուխ-գլխի հանդիպում կ'ունենայ ինք, իր ընդարձակ «սեւ շէնք» բնակարանին մէջ: Եթէ նախապէս նուազ կը յայտնուէր հրապարակային ելոյթներու ու հրապարակներու վրայ, Ազգային Ժողովի եռուզեռային այս նախօրեակներուն, ան հանդէս եկաւ քանի մը առիթներով, որոնցմէ մէկը, գոնէ այնքան ալ խանդավառիչ չէր, երբ յայտարարեց հետեւեալը.

«Պառակտուած ընդդիմութիւնը միաւորելու միակ կարող ուժը, Սամուէլ Կարապետեանն է», սակայն մոռնալով որ, այս վերջինը ունի զոյգ օտար հպատակութիւններ՝ ռուսական-կիպրական, հետեւաբար չի կրնար վարչապետական թեկնածու դառնալ:

Ասիկա ինչպէս որակել, երբ այս ընտրական խառնիճաղանճին մէջ, Լեւոն Տէր Պետրոսեան, յանկարծ, նման յայտարարութեամբ հանդէս կու գայ, կարծես յիշեցնելով 1998...

Քոչարեանական անունի մը հրապարակումը, որ «փորձանքներու-փորձանք»ը դարձաւ, որուն մասին չեմ ուզեր կրկնել, այնքան շա՛տ են իր «մեղք»երը, բայց տակաւին,

զարմանալիորէն կը դեգերի աջ ու ձախ, կարծես ուզելով Հայաստանը... թաղել ու հայ ժողովուրդը... խեղդել:

Յամենայնդէպս, իմ համեստ կարծիքովս, Պրն. հիմնադիր-նախագահը, պէտք չունէր ինքզինք նետել նման փորձանաւոր դաշտի մը մէջ, որովհետեւ՝ նախորդէն «խեր» չստացողը, ո՞վ ըսաւ որ, նորէ մը կը ստանայ, այնքան յորձանաւոր ու ճահճահոտ է... ասպարէզը:

Աւելի պիտի չերկարեմ, յուսալով որ՝ իրականութիւնները երեւան կու գան, նոր վարչապետի մը ընտրութեամբ, որ երբեք չի շեցնէ ՏԵՐԱԶՆՉԱԿ Քոչարեանի մը աննախընթաց ապօրինութիւնները:

Պէյրութ, 12/3/2026

ԽԱՐՈՒՄԻԿ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆԸ ՍՊԱՍԵԼԻՍ

Յակոբ Աւետիքեան

13/03/2026



- Թերեւս 1000-րդ անգամ վերահաստատում է այն ճշմարիտ խօսքը, թէ դիրքին է պատերազմ սկսելը, բայց դժուար՝ այն աւարտելը: Ջղային գալարումների մէջ գտնուող ողջ աշխարհն է սպասում Մ. Նահանգներ-Իսրայել դաշինքի Իրանի դէմ սկսած պատերազմի աւարտին, որն ուշանում է, քանզի պատերազմը հրահրողներն իրենք չգիտեն, թէ ինչի՞ են հասել, որքանո՞վ են իրականացրել իրենց սկզբնական՝ յայտարարած նպատակը:

Այո, զգալիորէն թուլացել է Իրանը,

նրա հրթիռահրետանային զինատեսակները, անօդաչու թռչող սարքերն ու կործանիչները ամէն օր աւելի քիչ են ամերիկաիսրայելական թիրախներին հարուածում, սակայն նախագահ Թրամփի առաջադրած casus belli-ն, աւելի ճիշտ՝ նախապայմանները՝ կրօնապետական իշխանութեան հեռացում եւ միջուկային կարողականութեան ոչնչացում կամ հրաժարում, տեղի չունեցան եւ հաւանաբար տեղի չունենան երբեւիցէ, հակառակ կրօնապետերի եւ բարձրաստիճան զօրահրամանատարների իրարայաջորդ սպանութիւններին, նոյն տանդեմի ձեռքով:

Իսկ ինչ վերաբերում է Իսրայելի վարչապետ Նեթանեահուի պահանջին՝ ոչ աւել եւ ոչ պակաս՝ ամբողջական կործանումը Իրանի Իսլամական Հանրապետութեան, անկարելի



երագ կարող է մնալ, որքան էլ որ յայտնի տանդեմը փորձի շարժման մէջ դնել նաեւ քրդական գործօնը եւ սաստկացնել ռազմական հարուածները:

ԱՄՆ-Իսրայել տանդեմը այդպէս էլ չհասկացաւ, որ գործ ունի առնուազն 3000-ամեայ պետականութիւն ունեցող մի երկրի ու ժողովրդի հետ, որը գիտի արժանապատուօրէն պահել եւ իրացնել պատմական իր աւանդութիւնն ու փորձառութիւնը:

Ստեղծուած անել այս կացութիւնը բոլորից առաջ հասկանում են թէ՛ հրեա եւ թէ՛ ամերիկացի ժողովուրդները: Օրերս Իսրայելում անցկացուած հարցախոյզի արդիւնքները բաւական պերճախօս են: Իսրայելցիների 81 տոկոսը թէեւ համաձայն է Իրանի ռմբակոծմանը, սակայն 59 տոկոսը դէմ է քաղաքականութեանը վարչապետ Նեթանեահուի, որի գլխաւորած Լիքուդ կուսակցութեանը դժուար օրեր են սպասուում առաջիկայ ընտրութիւններին: Իսկ ինչ վերաբերում է ամերիկացիներին, ըստ ամենավերջին հարցախոյզի եւ ըստ անգլիական The Economist շաբաթահանդէսի, հարցուածների միայն 40 տոկոսն է կողմ թրամփի քաղաքականութեանը, իսկ 56 տոկոսը՝ դէմ, ընդամենը 4 տոկոս չկողմնորոշուածներով: Ընդունենք, որ ցածր վարկանիշ է Հանրապետական կուսակցութեան համար, որը պատրաստուում է կէս տարի յետոյ կայանալիք վճռորոշ ընտրութիւններին, մինչ դեմոկրատներն օգտուելով առիթից՝ պատրաստուում են մինչ այդ իմպիչմենտի ենթարկել Թրամփին:

Սակայն ամենաձանր վիճակը տիրում է Պարսից ծոցի երկրներում, յատկապէս այն երկրներում, ուր ամերիկեան ռազմաբազաներ կան, որոնք ամենօրեայ ռեժիմով թիրախ են իրանական հրթիռների եւ, միաժամանակ, Հորմուզի նեղուցի ականապատման, փաստացի՝ փակման պատճառով այժմ զրկուած են իրենց նաւթը արտահանել, անգամ՝ արդիւնահանել:

Այդ երկրները ժամանակին, 1991 թ.ին, շատ գոհ էին, որ Քուեյթի իրաքեան ներխուժումից եւ Սադդամ Հուսէյնի զօրքերին այդ երկրից դուրս մղելուց յետոյ, ամերիկացիները ռազմական հզօր յենակէտեր ստեղծեցին իրենց երկրներում, որոնք այժմ ռմբակոծուում են մարդկային ու նիւթական մեծ կորուստներ պատճառելով: Ամերիկեան պաշտպանական հովանոցի ներքոյ նրանք յոյս ունէին, որ, մանաւանդ 2003-ի իրաքեան պատերազմի եւ Սադդամի չէզոքացումից յետոյ, տեւական խաղաղութեան մէջ կը շարունակեն հարստանալ, բարգաւաճել: Սակայն շուտով պարզուեց, որ Իրաքի ջախջախումը առաւել օգուտ տուեց Իրանին, որն այդպիսով ազատուեց իր արքիթշամուց...

Այստեղ փակագիծ բացելով ասեմ, որ ես չեմ յիշում ամերիկեան ռազմական որեւէ միջամտութիւն, որքան էլ հզօր ու տպաւորիչ, տեւական խաղաղութիւն բերի տուեալ երկրին



ու ժողովրդին: Ես յիշում եմ, օրինակ, 1958 թ.ին, լիբանանեան քաղաքացիական առաջին պատերազմին, ամերիկեան 6-րդ հզօր նաւատորմի մուտքը Բեյրութի նաւահանգիստ եւ արհամարհ ջրեր: Ծովայինները եկան ու գնացին՝ առանց տեւական խաղաղութիւն բերելու Իսրայելի ատամների տակ գտնուող այդ փոքրիկ պետութեանը: Միակ օգտուողը հազարաւոր այդ ծովայիններից եղան նաւահանգստի մերձակայքում գտնուող հասարակաց տների տիրուհիները... Նոյնը կրկնուեց 1983 թ.ին, երբ ամերիկեան բազա ստեղծուեց Բեյրութի օդակայանի մօտ, սակայն 2-3 ամիս յետոյ փակուեց՝ դաւադիր պայթյունից յետոյ, որը իսկեց ամերիկացի 230 զինուորների կեանքը:

Տնտեսական ու քաղաքական ալեկոծումների մէջ է նաեւ Եւրոպան, որը վերջին երկու շաբաթներին անդադրում նիստեր է գումարում լուծելու համար իր անվտանգային ու վառելանիւթի դժուարութիւնները, մանաւանդ օտարերկրեայ դեսպաններին տուն ուղարկելու վերաբերեալ Կրեմլի որոշումից յետոյ:

Ստրասբուրգում տեղի ունեցած այդ ժողովում մի քանի շաբաթ առաջ կատաղի ելոյթ ունցաւ Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանը, որն իրեն ուղղուած կոռուպցիոն մեղադրանքներին ի պատասխան Ուրսուլա Ֆոն դեր Լայենի գլխին անցկացրեց, ինչպէս ասում են, կոռուպցիոն գործերից հիւսուած... վարտիքը:

Երկու օր առաջ նոյն ամբիոնից խօսեց նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինեանը, որ փոխանակ վտանգալից մեր տարածաշրջանում Հայաստանի դժուարութիւններին անդրադառնալու, յարմար, տեղին ու կարելոք համարեց, իր կարծիքով, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին «պատերազմի կուսակցութիւն» որակելը: Իսկ երեկ, երբ լրագրողներից մէկը, արդէն Երեւանում, հարց տուեց նրան, թէ ինչո՞ւ համար է նման բողոք ներկայացրել եւրոպացիներին, պատասխանեց, որ ոչ թէ բողոքել, այլ իրավիճակն է ներկայացրել...

Իրավիճակային այս մարդուն պէտք է յիշեցնել, որ առաջին անգամը չէ, որ ինքը միջազգային հարթակներում բամբասում, վատաբանում, հեղինակազրկում ու ծիծաղելի է դարձնում մեր երկիրը, պետութիւնը, ազգային մեր կառոյցները:

ՅԱԿՈԲ ԱԻԵՏԻՔԵԱՆ, «ԱԶԳ» Շաբաթաթերթ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՎՃՌՈՐՈՇ ՇՐՋԱԴԱՐՁԻ ԱՌՋԵՒ

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ



Հայաստանի մէջ վերջին շաբաթներուն տեղի ունեցող զարգացումները կը վկայեն, որ քաղաքական դաշտը մտած է նոր եւ անորոշ փուլ մը:

Հայաստանի քաղաքական համակարգը կը գտնուի բեկումնային կետի մը վրայ՝ խորհրդանշաններու վերականգնում, որոշ զիջումներ եւ հռետորաբանութեան մեղմացում: Բայց հարցը կը մնայ բաց. արդե՞ս ք այս բոլորը ժամանակ շահելու փորձեր են, թե՞ իրապէս նոր քաղաքական ուղեգիծի մը սկիզբը կը նախանշեն:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրապարակային խոստովանութենէն ետք, թէ երեսունհինգամեայ շրջափակումը պիտի շարունակուի, որովհետեւ Անգարա եւ Պաքո կը մերժեն «Թրամփի ճանապարհը» յառաջ տանիլ Նախիջեւանով եւ Հայաստանով, իշխանութիւններուն հռետորաբանութիւնը կտրուկ փոխուած է:

Փաշինեան վերջերս յայտարարեց, թէ հաստատուած խաղաղութիւնը տակաւին չէ ձեւաւորուած: Համաձայնագիրը կը մնայ թուղթի վրայ՝ անստորագիր վիճակի մէջ: Ան ակնարկեց, որ խոստացուած «խաղաղութիւնը» կրնայ առհասարակ իրականութիւն չդառնալ: Խաղաղութեան օրակարգը, որ ամիսներ շարունակ կը ներկայացուէր անշրջելի ընթացքի տպաւորութեամբ, այժմ կը մատնանշուի անորոշ հեռանկարի մը նմանող իրավիճակ:

Միւս կողմէ, միջազգային մամուլը տարբեր վերլուծութիւններով կը շեշտէ, թէ իշխանութիւնները ընտրութիւններէն անմիջապէս ետք սահմանադրական հանրաքուէի պիտի ձեռնարկեն: Այդ հանրաքուէն, ըստ շարք մը դիտարկումներու, փաստացի կրնայ նշանակել Հայաստանի Երրորդ Հանրապետութեան լուծարում՝ առանց Չորրորդ Հանրապետութեան յստակ երաշխիքներու: Եւրոպական Միութիւնը նոյնիսկ պատրաստակամութիւն կը յայտնէ «դիտորդական խումբ» ուղարկել Հայաստան, որպէսզի վերահսկէ ընտրական գործընթացը եւ իշխանութիւններուն որդեգրած ուղին:

Հանրապետութեան լուծարումը չափազանց ծանր քաղաքական եւ պատմական պատասխանատուութիւն մըն է:

Անիկա կը ներկայացնէ ոչ միայն սահմանադրական փոփոխութիւն, այլեւ պետական ինքնութեան ամբողջական վերակառուցման գործընթաց:



Պատահական չէ, որ այս շրջանին իշխանական վարքագիծը յանկարծակի մեղմացումներ եւ խորհրդանշական քայլեր կը ցուցաբերէ: Կենսաթոշակները բարձրացան տասը հազար դրամով՝ հակառակ նախկին պնդումներուն, թէ միջոցներ չկային: Փաշինեան մասնակցեցաւ երկու յաջորդական պատարագներու, ուր յիշատակուեցաւ կաթողիկոսին անունը:

Յայտարարուեցաւ նաեւ, թէ Մեսրոպ Մաշտոցի դիմանկարը պիտի վերադառնայ առաջին դասարանի այբբենարաններուն մէջ: Այս քայլը խորհրդանշական է. քանի մը տարի առաջ ազգային խորհրդանիշներու նսեմացումը դարձած էր պետական քաղաքականութեան մաս: Հնարաւոր է, որ Արարատի խորհրդապատկերին շուրջ ստեղծուած սահմանափակումներու մթնոլորտն ալ մեղմանայ:

Սակայն ամենախորհրդանշական փոփոխութիւնը Փաշինեանի քաղաքացիական կնոջ՝ Աննա Յակոբեանի հեռացումն է հրապարակային կեանքէն: Ան տարիներ շարունակ կը ներկայանար իշխանութեան գաղափարական եւ քարոզչական առանցքային դէմքերէն մէկը: Այս փուլին անոր հեռացումը կը մեկնաբանուի իբրեւ քաղաքական շրջանի մը սպառումի նշան:

Յիշեցնենք, որ 2018-ին, երբ Փաշինեան իր քայլերը սկսաւ Կիւմրիէն Երեւան, լուրեր կը շրջանառուէին անոր ընտանեկան եւ քաղաքական որոշումներուն շուրջ: Այդ բոլորը շրջանցուեցաւ, որովհետեւ այդ օրերուն Փաշինեանի իշխանութիւնը ներկայացուեցաւ յեղափոխական նոր էջի մը արշալոյսը Հայաստանի պատմութեան մէջ: Այսօր, ութ տարի ետք, նոյն այդ շարժումը կը գտնուի պատմական լուրջ պատասխանատուութեան առջեւ:

Հայաստանին սպառնացող ալիքները բազմաշերտ են: Եթէ իշխանութիւնը պարտութիւն կրէ ընտրութիւններուն, անոր դէմ ներքաղաքական հաշուետուութեան ատեան մը պիտի բացուի: Յաղթելու պարագային՝ պիտի դառնայ պետական համակարգի արմատական վերաձեւումին պատասխանատուն՝ իր բոլոր հետեւանքներով:

Ընտրութիւններուն մնացած է երեք ամիսէն նուազ ժամանակ: Երկրին ներքաղաքական քարտէսը տակաւին կը մնայ անորոշ: Որոշ կուսակցութիւններ կրնան ընդհանրապէս հրաժարին մասնակցիլ ընտրութիւններուն՝ ոչ միայն գաղափարական պատճառներով, այլ նաեւ այն գիտակցութեամբ, որ ընտրութիւններէն ետք կազմուելիք կառավարութիւնը պիտի դիմագրաւէ չափազանց ծանր որոշումներ:

Իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» հոսանքը կ'ականկալէ, որ հանրաքուէի ճանապարհով հոչակուի «Չորրորդ Հանրապետութիւն»ը:

Փաստօրէն Փաշինեանը արժարձած «Իրական Հայաստան»ը՝ սահմանափակ աշխարհագրական շրջանակներով: Խօսքը կը վերաբերի Արցախէն, Արեւմտահայաստանէն եւ Նախիջեւանէն հրաժարելու մասին, նոյնիսկ զիջելով ներկայ Հայաստանի որոշ տարածքներ: Շարք մը փորձագէտներ կը զգուշացնեն, որ նման գործընթաց մը կրնայ աւարտիլ պետական ճգնաժամով՝ յիշեցնելով Արցախի 2023 սեպտեմբերի ողբերգական զարգացումները:



Ընտրութիւններուն մասնակցող հոսանքները պարտաւոր են գիտակցիլ, որ եօթ յունիսին ընտրուած ուժերուն վրայ պիտի դրուի իշխանութեան եւ կատարուելիք զիջումներու պատմական պատասխանատուութեան ծանր բեռը: Անոնք, որոնք պիտի ստանձնեն այդ պատասխանատուութիւնը, կրնան շատ արագ մաշիլ քաղաքական պատմութեան մէջ: Քաղաքական իրարանցումի մթնոլորտը անխուսափելի պիտի ըլլայ խորհրդարանական ընտրութիւնները յաջորդող ամիսներուն:

Ապագան տակաւին մշուշոտ կը մնայ: Սակայն մէկ բան անժխտելի է՝ Հայաստան կը մօտենայ պատմական փուլի մը, ուր կայացուելիք որոշումները կրնան երկար ժամանակով ձեւաւորել երկրին քաղաքական դիմագիծը եւ պետականութեան հիմքերը:

Յառաջիկայ ամիսները հետեւաբար պիտի դառնան ոչ միայն ընտրական պայքարի շրջան, այլ նաեւ պատասխանատուութեան ծանր քննութիւն՝ թէ՛ իշխանութիւններուն, թէ՛ քաղաքական ուժերուն, ե՛ւ ընդհանրապէս ամբողջ հայ ժողովուրդին համար:

Ադրիւր՝ ՊԱՅՔԱՐ շաբաթաթերթ

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԳԱՐՈՒՆՆԵՐՄ

Գարուններս անցան-գացին
Ասուպի պէս արագընթաց,
Անոնցմէ դեռ շող մը վճիտ
Փայլատակէ սրտիս մէջ տաք...

Թիթեռ մը դեռ թելի՛կ-թելի՛կ
Կը թռչկոտի ծաղկէ-ծաղիկ,



Բոյր-թոյրերով դառնայ արբշիռ
Ոսկելոյսին մէջ գարունի...

Պարման սիրտ մը անմեղունակ,
Արեգական լոյս աչքերով,
Կը նայի դեռ կեանքին, մարդկանց
Անապական ու հոգեթով...

Զեփիւտը մեղմ դեռ կ'օրօրէ
Բիւր երազներ անըջահեւ,
Պարման հոգին բեղմնաւորէ
Վառ յոյզերով արեւահեւ...

Լոյս խոկումներ դեռ կ'այցելեն,
Էութիւնս կը բռնկեն,
Գարնան տենդը, Օ՛, մահ չունի,
Նորոգ շունչով կը բողբոջի...
11/3/2020

.....

ԳՐԻՉՍ ԸԼԼԱՐ

Գրիչս ըլլար սիրոյ անթրոց
Չոր սիրտերու մոխիրին մէջ,
Գրիչս ըլլար խոհի անթրոց
Միտքերու խոր թմբիրին մէջ...

Թող ան ըլլար գանգ ու դողանջ՝
Քար խիղճերու արթընացման,
Լոյս հեղեղէր վարդաբուրեան,
Զերթ արեգակն արդարութեան,

Մտներ ամեն խորշ, խորխորատ,
Լոյսը սփռէր ճշմարիտին
Խաւարին դէմ շիլ կեղծիքին,
Անիրաւին, անարդարին...

Իր թելերուն վրայ տանէր
Յոգնած մարդը դէպ' Բարձունքներ,
Հոն ուր ոգին ճառագայթէ
Արշալոյսներ, արեգակներ...

Գրիչ ի՛մ խոնարհ, հաւատաւոր,
Քեզ փայլեցնեմ, ժանգ չկապես,
Դողամ վրադ զերթ աչքի լոյս,
Մթութեան մէջ՝ բեկոր մը յոյս...
25/1/2016

.....



Դժուար է դարը, դաժան է դարը,
 Խառնարան դարձեր է ողջ աշխարհը,
 Ծովն է ալեկոծ, մրրիկներով լի,
 Իսկ մենք շուարած՝ ալեաց յորձանքին,
 Մերթ ա՛ջ կը թեքինք, մերթ ձա՛խ տատանինք,
 Չունինք ուղեցոյց փարոս մը լոյսի,
 Չունինք նաւապետ խոհուն ու հմուտ,
 Որ կամքով հզօր, անբեկանելի
 Հաւաքէ վերջին ոյժերն աննկուն,
 Նաւը ուղղորդէ դէպ՝ նաւահանգիստ,
 Դէպ՝ խաղաղ ափեր այնքան բաղձալի,
 Դէպ՝ հանգրուանը արեգակնակիր,
 Ուր մեր տեսիլքն է Նայիրեան լոյսի...

17/2/2024

.....

ԵՐԳԵՐՈՒՄ ՄԷՋ

Երգերուս մէջ սիրոյ թրթի՛ ոն էր մեղեդի,
 Անբառ, անխօս ու անաղմուկ երգ մը վճիտ,
 Ջոր միշտ ցանկաց իր էութեամբ երագ հոգիս,
 Բայց շատ անգամ դպաւ քարէ կարծր պատին...

Երգերուս մէջ բարութեան ցո՛ւքն էր հայելիս,
 Վճիտ, մաքուր ինչպէս վարար աղբիւր սարի,
 Որուն նետուած քարը անգամ մաղձով դեղին՝
 Մընաց անուժ, պղտորելու հոսանքը ջինջ...

Երգերուս մէջ զո՛ւթն էր անձիր մարդ էակին,
 Ցաւին անոր, տառապանքին ու մորմոքին,
 Ու որքան ալ տքնեցաւ ան սփոփել զանի,
 Մընաց անկար, եղաւ անոնց լոկ բաժնեկից...

Ի՛նչ ալ ըլլայ ցնծերգութի՛ւն մ'եր երգս լոյս,
 Բիւր օրհնութի՛ւն Արարիչին որ կա՛մ, կ'ապրի՛մ
 Եւ հաղո՛րդ եմ տիեզերքին՝ խորին խորհո՛ւրդ,
 Խոկումներով, երագներով լուսատեսիլ...

13/1/2022

.....

ԼՈՒՍԱՐԲԵՑՈՒՄ

Կեանքէս համակ լուսատրոփ սի՛րտս մնաց,
 Որ դեռ թրթոյ լուսաթրթիոն եւ լուսաբաղձ,
 Որ դեռ զգայ զոլն արեւին, սեր կարօտին,



Որ դեռ պոռթկայ անիրաւին, անարդարին...

Դեռ կը խայտայ լուսաճաճանչ արարումով,
Դեռ կը հեւայ գեղեցկութեան լոյս պահերով,
Դեռ կը յուզուի ծով բարութեան ալիքներով,
Կ'ուրախանայ պզտիկ, փոքրիկ փուճ բաներով..

Դեռ կը սիրէ մարդ էակը, տիեզերքն համակ,
Կը գուրգուրայ մէն մի ծաղկին լուսափթիթ,
Լուռ կը ցաւի անօգ մանկան արտասուքին,
Արցունք ունի կորուստներուն հազարացաւ...

Կը հառաչէ հոգւոյն խորէն ու ողբաձայն
Ամէն անգամ որ մարդն մարդուն քարսիրտ դառնայ,
Անխիղճ ու չար եւ խժռէ զայն անգթաբար,
Մոռնալով որ նոյն կաւէն է արարուած...

Դեռ բռնկի, սիրոյ կայծեր փայլատակէ,
Բոցավառի ու ճենճերի, հուրհրատէ,
Լոյս արարէ այրումովն իր սիրակէզ,
Լուսաշառայլ, լուսածորան տողեր հիւսէ..

Համայնատենչ սիրով մ'անյագ, կարօտագին,
Լուսավարար խինդով, տենդով մը լուսածին,
Կ'ուզէ գրկել աշխարհն համակ գորովագին
Եւ համբուրել երկինք, երկիր, ծառ ու ծաղիկ:

Լուսարբեցումն՝ կեանքիս խորհուրդը ցնծագին...

1/3/2020

.....

ՃԱԿԱՏԱԳԻՐ Է

Ես քալեցի դար ու դարեր, անխո՛նջ, յամա՛ն
Դէպ՝ աղբիւրը լոյսին անմահ, արեւավառ,
Որ հայեացքիս դէմ շողշողաց գերթ արեգակ,
Նոյնիսկ մթին գիշերին մէջ խաւարամած...

Վախերուս դէմ ոգի՛ս էր վեհ ու աներեր,
Խութերուն դէմ՝ կա՛մքս ուժեղ ու ջլապինդ,
Մշուշին մէջ՝ հաւա՛տքս բորբ ու անվեհեր,
Խաւարին մէջ՝ լուսարձակը յոյսի՛ս լոյսին,
Տեգերուն դէմ նենգ թշնամեաց՝ ո՛յժ երկաթեայ,
Զոր թրծեցի կրակովն արեան իմ բոցավառ,
Որ հոսեցաւ դարերն ի վար իմ պատմութեան
Ու սրբացուց եւ պնդացուց հոգիս Հայկեան...

Ճամբաս քար էր, փուշ ու տատասկ, ձիգ զառիվեր,


Վիհ ու անդունդ, ժայռ վիթխարի ու ահալի,
Յամառեցայ վեր բարձրանալ տառապագին,
Ըմպել լոյսը բարձունքներուն արեւամերձ...

Եւ պիտ' քալեմ այսպէս երկար դար ու դարեր,
Ճակատագի ր է այս երթս եւ իմ ուղիս,
Քանզի Լեռն է Մասսեաց վսեմ իմ դէմ յառներ
Ու ցոյց տուեր ճանապարհս իմ երկնաձիգ:
6/3/2025

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆՈՐ ԵՒ ՅԱԶՈՂ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ՍԸ ԵՒՍ. ՅԱՐՈՒԹ ԳՆԴՈՒՆԻ ԻՆՔԶԻՆՔ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ՈՒ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ

2/3/2026



Որքան ուրախալի ու բերկրալի է, որ լիբանանահայ գաղութին մէջ տակաւին կան մշակութային հնչուն արձագանգներ, որոնք այս կամ այն ձևով կը յիշեցնեն ու կ'աւետեն երանելի եւ փառքի օրերն ու ժամանակները, երբ մշակութային կեանքը իր զանազան դրսեւորումներով, արտայայտութիւններով ու դերակատարութիւններով, ոչ միայն կը մնար պատնէշի վրայ, այլ նաեւ կենդանութիւն ու շունչ կու տար լիբանանահայ մշակութասեր հասարակութեան:

Ճիշդ է՝ եղան անխուսափելի պահեր, երբ անոնց մեծ մասը, կամայ թէ ակամայ, իսամրեցաւ, բայց չվերացաւ, անշքացաւ, բայց չմթալեցաւ, եւ կամ՝ լուսանցքայնացուեցաւ, բայց չխաւարուեցաւ, որովհետեւ

լիբանանահայութեան մէջ լոյսի եւ յոյսի աղբիւրները չէին կրնար ցամքիլ, չորնալ կամ սպառիլ մէկ օրէն միւսը, ընդհակառակը, անոնք անպայմանօրէ՛ն կը վերաճէին, կը վերականգնէին:

Հայ ժողովուրդի պատմութիւնը միշտ ալ եղած է ու կը մնայ այն փարոսը, որ չի կրնար մարիլ, անէանալ ու չքանալ, այնքան ատեն որ իր մէջ կան՝ կիրքն ու լիցքը, կամքն ու տեսիլքը երբեք չհրաժարելու իր բեղմնալի երթէն:

Այսօր, որքան ալ տժգոյն ու մռայլ փուլերէ կ'անցնի հայ ժողովուրդը քիչ մը ամէն տեղ, սակայն, իր մէջ վճռականութիւնը, տոկունութիւնը ու դիմադրականութիւնը կը մնան կանգուն, առնուազն տեղի չտալու կամ չնահանջելու՝ պարտադիր կամ ստիպողական արգելքներու դէմ:

Հայու նկարագիր թէ բնաւորութիւն, համոզում թէ հաւատք՝ ատոնք չեն կրնար հիմնովին ձեւափոխուիլ կամ այլասերիլ, այնքան ատեն որ հայու ոգիին եւ արմատներուն կանչն են, որոնք զինք կը մղեն, կ'առաջնորդեն ու կը յուսադրեն:



Թերեւս այդ է պատճառներէն մէկը, որ հայ ժողովուրդը քալած եւ ընթացած է այնպիսի ուղիներէ, որոնք զինք կ'ամրապնդեն ու կ'արժեւորեն՝ երբեք չյուսահատելու, չընկճուելու, այլ՝ միշտ մնալու իր ակունքներուն եւ ինքնութեան հարազատ կերտիչներէն մէկը: Աստնք կը նկատուին այն հիմունքներն ու մեկնարկները, որոնք հայ ժողովուրդին տուած են՝ ԱՊԲԵԼՈՒ կեանք, ԲԱԲԱԽԵԼՈՒ ոգի, ԾԱՂԿԵԼՈՒ նորափիթներ՝ յանուն իր գոյութեան, կեցութեան եւ յարատեւութեան, իսկ անոնք բնաւ չեն եղած (ու չէ՛ն) անբաւարար պայմաններ, որոնք կրնային զինք թուլացնել կամ ջլատել:

Ամէն առիթով (իսկ այդպիսիք երբեք չեն պակսիր), երբ՝ կը խօսինք, կը յիշենք կամ կ'անդրադառնանք հայ ժողովուրդին այս ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ եւ ՈՂՋԱԽՈՂՈՒԹԵԱՆ, մեր առջեւ կը պարզուին իրականութիւններ եւ իրողութիւններ, որոնք տեղի կ'ունենան մեր աչքին առջեւ ու մեր տեսողաշտային ծիրերէն ներս:

Իսկ ատոնք ի՞նչ կրնան ըլլալ, եթէ ոչ՝ մեր մշակոյթով ապրիլ, սնանիլ, դաստիարակուիլ եւ ոգեշնչուիլ, որովհետեւ այս են այն տուեալներն ու գործօնները, որոնք մեզ պահած են, ինամած ու թարմացուցած, որպէսզի երբեք չհեռանանք կամ չբաժնուինք մեր էութենէն: Այս համազգային ու համաժողովրդային զգացումները եւ ապրումներն են, որոնք միշտ մնացած են մեր գոյապահպանութեան գլխաւոր թիկունքները, առանց որոնց՝ դժուար պիտի ըլլար նոյնիսկ նուազագոյն նշոյլներով դիմանալ հոսկէ կամ հոնկէ եկած, ծանօթ եւ անծանօթ հարուածներու:

Ահաւասի՛կ, ինչպէս այլ բնագաւառներ, հայ ՄՇԱԿՈՅԹՆ է, որ ամէնէն աւելի կրցաւ հայ ժողովուրդը պահել արթուն ու զգաստ, ամրակուտ եւ բերքառատ ցուցանիշը հայ ժողովուրդին:

Այս հպանցիկ, բայց անհրաժեշտ մտորումները արդէն ցոյց կու տան, թէ լիբանանահայ մշակութային կեանքը ուրկէ՛ կը սկսի, ո՛ր կ'ընթանայ եւ ինչի՛ կը յանգի, երբ կը տեսնենք ու կ'ապրինք, որ ան կը մնայ իր անհրաժեշտ բարձունքին վրայ, թէկուզե՛լ՝ ՀԱՄԵՍ, ԺՈՒԺԿԱԼ ու ՉԱՓԱԻՈՐ պայմաններու մէջ, բայց՝ միշտ նպատակետային, արժէքաւոր ու մշակութային ոգեշնչելի ուրուագիծերով:

Այս պարագային, խօսքը կը վերաբերի լիբանանահայ թատրոնի նորագոյն իրագործումներէն մէկուն, որ հակառակ բոլոր դժնդակ ու ճնշիչ պայմաններուն՝ դարձեալ հրապարակ կու գայ, երբ հանրութեան կը ներկայացնէ «Ամուսինը ծուղակի մէջ»-ը՝ բեմադրութեամբ, հանրայայտ բեմադրիչ-դերասան, արուեստագէտ, հեղինակ, թարգմանիչ եւ գեղարուեստի մարզերէն ներս լուսագիտակ, փորձագէտ ու մասնագէտ Յարութ Գնդունիի: Յարութը հանգիստ ու դադար չունեցող, չվիատող եւ չյանձնուող այն արուեստագէտներէն է, որ ինչպէս երէկ, նաեւ այսօր (վստահաբար նաեւ վաղը) պիտի մնայ հայ բեմին արժանաւոր ու հեղինակաւոր դերքերէն մէկը, որ ԱՌԱՆՁԻՆԸ կը գլխաւորէ, կը կազմակերպէ, կը հրամցնէ, կը շքեղազարդէ ոչ միայն լիբանանահայ թատրոնի հմայքն ու հրայրքը, այլեւ՝ զայն կը պայծառացնէ ու կը լուսաւորէ թատերական աշխարհի երանգներով ու պատկերներով:

յն հաճոյքն ու գոհունակութիւնը, որ ապրեցաւ հանդիսատես հասարակութիւնը (6, 7 եւ 8 փետրուար 2026-ին), աւելի քան պերճախօս էր, թէ ներկայացուած թատրերգութիւնը իր խորքով ու բնոյթով, դերակատարներով ու մասնակիցներով (բեմ թէ յետնաբեմ), իրենց գրաւիչ, անմիջական, հաղորդական ու անգին կապերով արդէն ցոյց կու տային, որ թէ՛ նիւթը, թէ՛ գործողութիւնները, թէ՛ բեմադրիչը կրցած էին ոչ միայն թափանցել այս ամբողջ ներկայացումի բովանդակութեան մէջ, այլ նաեւ՝ զայն վերածել աշխուժ համապատկերի մը, ուր իւրաքանչիւր դերակատար հանդէս կու գար իրեն յատուկ, բայց բեմադրական մասնագէտի ցուցմունքներով ու վարժութիւններով՝ ներկայացման տալով ԻՄԿԱԿԱՆ իրապաշտական միջավայր մը եւ ընտանեկան ներքին կարգուսարքի հոլովոյթ մը:



Այս եւ յարակից կարգ մը տնօրինումներ, դերասան-խաղարկուծիւններ, յարաբերութիւններ, գործողութիւններ, պատկերներ, առաւել եւս կը գրաւէին ակնդիրներուն հետաքրքրութիւնն ու խանդավառութիւնը:

Անխուսափելի է շիշատակել, գէթ՝ քանի մը տողով կամ արձանագրութեամբ, որ բեմադրիչ Յարութ Գնդունի «գաւակները», ինչպէս իր նախորդ ներկայացումներուն մէջ, նաեւ այս առիթով, յատուկ հոգատարութեամբ, բծախնդրութեամբ ու համբերութեամբ, «կրթած ու դաստիարակած» էր բեմական արուեստով, զանոնք պահելու համար իրենց «հուն»-ին մէջ, տեղ մը՝ գնդունիական, բայց, վերջին հաշուով, յանուն թատերական եղելութեան եւ արուեստի համատեղութեան:

Կ'արժէ յիշել այն «դերակատարները», որոնք իրենց դերերով ու երեւումներով եւ, ընդհանրապէս, մասնակցութեամբ կրցան իրենց շնորհներով, ձիրքերով ու համարձակութիւններով «բան մը» տալ ոչ միայն իրենց ունեցած ունակութիւններէն, որքան ալ խոնարհ, բայց արժանացան ներկայ թատերասէր հասարակութեան ողջոյններուն ու ծափահարութեանց. ուստի, կը կարծենք, թէ ատոնք ալ բաւարար պէտք է ըլլան, արժանի «ԲԱԺԻՆ» մը տալ անոնց՝ նկատի ունենալով, որ անոնք իսկապէս արժանի եղան համապատասխան քաջալերանքի ու զօրակցութեան:

Դերակատարներէն իւրաքանչիւրը իրեն յատուկ փորձերով, կարողութիւններով ու կարելիութիւններով կրցաւ իր դերով ինքզինք արդարացնել, տալ ապացոյցը, թէ թատրոնի սիրահար մըն է, անոր ծառայող եւ երկրպագող, ոչ միայն անձնական գոհունակութիւն ապրելով, այլ նաեւ՝ ներկայ ակնդիրները եւս մասնակից դարձնելով այդ վայելքին:

Թատերագէտ, թատերագիր, թարգմանիչ ու փորձագէտ, բազմատաղանդ բեմադրիչ Յարութ Գնդունի, ինչպէս միշտ, այս անգամ եւս ինքզինք գերազանցեց՝ բեմ հանելով «Ամուսինը ծուղակի մէջ» կատակերգութիւնը (հեղինակ՝ Ռէյ Քունի)՝ իր թարգմանութեամբ ու պատշաճեցումով: Լիբանանահայ թատերասէրներու ճաշակի բազկերակին ծանօթ ըլլալով, ան այս գործը ընտրած ու հրամցուցած էր՝ իբրեւ ուսանելի ու ժամանցելի հաճելի զբաղմունք, իր դերասանական անձնակազմը ձեւաւորելով ընտրութեամբ, պատշաճութեամբ ու հետեւողութեամբ, եւ անոնք բոլորն ալ կրցան իրենց կերպարներուն մէջ մնալ աշխուժ ու կենդանի, շարժուն ու կենսունակ:

Յիշեցումի կարգով՝ արձանագրենք անոնց անունները.

- ՄԻՄՈՆ ԵԱՓՈՒՃԵԱՆ, այս անգամ եւս գտնուեցաւ իր ամբողջական կերպարին մէջ, տպաւորիչ խաղարկութեամբ եւ անմիջական երեւումներով:
- ՄԵԼԻՔ ՊԵՏՐՈՍԵԱՆ, նոր բեմական ուժ մը, որ կրցաւ ինքզինք արժեցնել եւ յուշել, այս մարզէն ներս, մնայուն դերեր ստանձնելու վստահութիւնը:
- ԼՈՒՍԻՆԷ ՏԱԳԷՍԵԱՆ, խոստմնալի ներկայութիւն մը, եւ, վստահաբար, նոր դերերով հանդէս գալու շնորհալի հասունութեամբ:
- ԱՅՏԱ ՄԱՀՍԷԼԷՃԵԱՆ ՄՐԱՊՈՆԵԱՆ, բեմին վրայ վերերեւումով, ապացուցեց, որ ինք կարող է շարունակել իր երթը, տարբեր ու համոզիչ խաղարկումներով:
- ՀՐԱԿ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ, կրցաւ իր դերին մէջ մնալ, իր համեստաբարոյ նկարագիրով, տարբեր դերերով հանդէս գալու հաւանականութեամբ:
- ԵՐԱՆ ԳՈՅՈՒՆԵԱՆ, արժանաւոր է, եթէ շարունակէ մնալ հայ բեմին ծառայելու իր հաւատարմութեամբ:
- ՀԱՅԶԱԻԱԿ ԼԷՓԷՃԵԱՆ, հայ բեմի վերջերան հաղորդական վաստակաւոր մը, որուն ներկայութիւնը, աւելի քան հարստացնող է, թատրոն վայելելու հմայքով:

Անշուշտ, այս գործը աւելի զարդարուն ու ծաղկուն դարձնելու համար, բեմադրիչին ու դերակատարներուն կողքին, նոյնքան ԵՐԱՆՏԵԼԻ են այն ուժերը, որոնք իրենց



բեմավարութեամբ (Հրակ Մամիկոնեան Մանուէլ Թոքմաքճեան, Վիզէն Քեօշկերեան), աֆիշ (Բալիկ Սրապոնեան), տեքոր (Դանիէլ Քեօրօղլեան), սրահի պատասնաստուներ (Յակոբ Սրապոնեան, Սեդա Լէփէճեան), զգեստներ (Այտա Մահսերէճեան-Սրապոնեան), յայտագրի պատրաստութիւն (Մելիք Պետրոսեան), լոյս ու ձայն (Մուրէն Խտրշեան), կրցան պայծառ սլացք ու գոյն տալ առ հասարակ թատրերգութեան յաջողութեան:

Լիբանանահայ թատրոնը նոր եւ ուշագրաւ բարենիշ մը արձանագրեց՝ «Ամուսինը ծուղակի մէջ»ով, բայց, երբեք... ծուղակի մէջ չինկաւ, ընդհակառակը, կրցաւ գեղարուեստօրէն ինքզինք դուրս պահել վտանգաւոր որոզայթներէն, դիտորդ հանդիսատեսը տեղափոխելով աւելի բարօր հորզիոններ, թատրոնի միջոցով ու բեմական գրաւիչ հնարքներով,

հանդիսատեսներուն իսկ վկայութեամբ ու համաձայնութեամբ:

Եթէ այս պարագային շահողն ու գերակշռողն էին թատրոնն ու անոր հետ առընչուող ոլորտները, կազմակերպիչներ, դերակատարներ, գործակիցներ եւ ընթացիկ լծակներ, թատերասերները եւս արժանի էին յատուկ ուշադրութեան, ցոյց տալով իրենց սերը ու հետաքրքրութիւնը թատրոնի նկատմամբ:

Մեզի կը մնայ արտագինս շնորհաւորել «Միեր Մկրտչեան» թատերախումբը, որ 2014էն ի վեր, հանդէս եկած է ԵՕԹՐ բեմադրութիւններով, թատրոնի տեղն ու դերը ոգեկոչելով եւ անոր բերած նպաստները, ջերմութիւնը ու ոգին փոխանցելով բոլորին, շնորհիւ բազմաշնորհ Յարութ Գնդունիին եւ իր նուիրեալ «գինուորագրեալ» հաւատարիմներուն, որոնք անձնագոհութեամբ եւ ամբողջականութեամբ կառչած մնացին ու կը մնան իրենց բազմաշնորհութեան, ի սպաս լիբանանահայութեան գեղարուեստականութեան պահպանումին, վերելքին ու գոյատեւման:

(Պէլրութ)

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ԱՊԱԳԱՅԻՆ ՆՈՒՒՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՌԻՈՒՏՊԸՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

☞ ՏԱՐԲԵՐԱԿ21

10/3/2026

Արեւմտահայերէնի ապագային եւ լեզուի ուսուցման նորարար մօտեցումներու նուիրուած գիտաժողով մը վերջերս համախմբեց գիտնականներ, ուսուցիչներ, մանկավարժներ եւ համայնքային ղեկավարներ՝ քննարկելու լեզուի կենսունակութիւնը, մանկավարժական մեթոտները եւ հաստատութիւններու միջեւ գործակցութիւնը: «Հայերէն լեզուի նորարարութիւններ. նոր գործիքներ, նոր մեթոտներ, նոր հնարաւորութիւններ» խորագրով այս ձեռնարկը ներկայացուց այն ռազմավարութիւնները, որոնք կը միտին ամրապնդելու արեւմտահայերէնը սփիւռքի մէջ:

Գիտաժողովը կազմակերպուած էր համատեղ՝ Հայ Եկեղեցւոյ Արեւմտեան թեմին, հովանաւորութեամբ՝ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտերեանի, եւ Գալիֆորնիոյ Պըրպէնք քաղաքի Ուուտպըրի համալսարանին (Woodbury University) կողմէ: Գիտաժողովին վարիչը՝ Արեւմտեան թեմի հաստատութենական նորարարութեան տնօրէնը՝ դոկտ. Հրաչ Զիլինկիրեան, իր բացման խօսքին մէջ նկատել տուաւ, թէ այս գիտաժողովը կ'արտացոլէ այս երկու հարեւան հաստատութիւններուն՝ առաջնորդարանին եւ Ուուտպըրի համալսարանին միջեւ աճող գործակցութիւնը:



Ուուտպըրի համալսարանի նախագահ Ճեֆ Պելանթոնի ողջունեց ներկաները եւ ընդգծեց համագործակցութեան կարեւորութիւնը կրթական-մանկավարժական նախաձեռնութիւններու զարգացման մէջ: Ան նաեւ նշեց յաջողութիւնները Ուուտպըրիի հայ շրջանաւարտներու, որոնք այսօր տարբեր ոլորտներու եւ կազմակերպութիւններու մէջ առաջնորդող դերեր ստանձնած են:



Քննարկումին ընդհանուր շրջագիծը ներկայացնելով՝ Դոկտ. Չիլինկիրեան անդրադարձաւ արեւմտահայերէնի դիմագրաւած մարտահրաւերներուն՝ յիշեցնելով, որ 2010 թուականին UNESCO-ն զայն դասակարգեց որպէս վտանգուած լեզու: Այս բնորոշումը նոր թափ տուած է սփիւռքի մէջ ընթացող քննարկումներուն, թէ

ինչպէ՛ս կարելի է պահպանել եւ վերակենդանացնել լեզուն: Ան ընդգծեց, որ այս մարտահրաւերներուն դիմագրաւումը կը պահանջէ ակադեմականներու, մանկավարժներու, համայնքային առաջնորդներու եւ ընտանիքներու համագործակցութիւնը, ինչպէս նաեւ ֆինանսական միջոցներու ստեղծումը եւ այնպիսի հաստատութիւններու մասնակցութիւնը, որոնք կրնան նորարար ծրագիրներ իրականացնել:

Դոկտ. Չիլինկիրեան դիտել տուաւ, որ այս ուղղութեամբ նշանակալից դեր կը կատարեն Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հայկական համայնքներու բաժանմունքը եւ Փարիզի արեւելեան լեզուներու եւ քաղաքակրթութիւններու ազգային հիմնարկի՝ Inalco-յի (Institut National des Langues et Civilisations Orientales) հայագիտական բաժինը: Երկու հաստատութիւններն ալ վերջին տարիներուն աջակցած են եւ կը շարունակեն օժանդակել շարք մը ծրագիրներու, որոնք հետամուտ են արեւմտահայերէնի ամրապնդման՝ ուսուցման նոր մեթոտներով, թուային միջոցներու եւ համայնքային նախաձեռնութիւններով: Ապա ան ներկայացուց գիտաժողովին մասնակցող բանախօսները. դոկտ. Ռազմիկ Փանոսեան՝ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հայկական համայնքներու բաժանմունքի տնօրէնը, Անի Կարմիրեան՝ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքի արեւմտահայերէնի զարգացման եւ դպրոցներու օժանդակութեան ծրագիրներու պատասխանատուն, ինչպէս նաեւ լեզուաբան եւ Inalco-յի Հայագիտական բաժնի վարիչ փրոֆ. Անահիտ Տոնապետեան:

Դոկտ. Փանոսեան անդրադարձաւ հայ լեզուի ուսուցման եւ նշեց, թէ փոփոխութիւններ կրնան յառաջանալ թէ՛ հաստատութենական նախաձեռնութիւններէ եւ թէ՛ համայնքային մակարդակով ինքնաբոլի ջանքերէ: Ան նաեւ մատնանշեց սփիւռքի մէջ ընթացող լեզուական զարգացումները, որոնք կը վերաբերին թէ՛ արեւմտահայերէնին եւ թէ՛ արեւելահայերէնին: Գաղթերը եւ համաշխարհայնացումը տարբեր բարբառներով խօսողներ կը բերեն իրարու մօտ, եւ այս պայմաններուն մէջ երկու լեզուաձեւերը կրնան փոխադարձաբար հարստացնել զիրար: Միաժամանակ ան նկատել տուաւ, որ Հայաստանի



Հանրապետութիւնը կրնայ կառուցողական դեր ունենալ՝ աջակցելով սփիւռքի լեզուական բազմազանութեան պահպանման:

Փրոֆ. Տօնապետեան իր ելոյթին մէջ խօսեցաւ օտար միջավայրի մէջ մայրենի լեզուներու պահպանման մէջ հաստատութենական աջակցութեան եւ անհատական նախաձեռնութեանց միջեւ անհրաժեշտ հաւասարակշռութեան մասին: Ան շեշտեց, որ դպրոցները, մշակութային միութիւնները եւ ակադեմական ծրագիրները կենսական դեր կը խաղան արեւմտահայերէնի պահպանութեան մէջ: Միեւնոյն ժամանակ ընտանիքներն ու անհատները եւս առանցքային դեր ունին, որովհետեւ լեզուի փոխանցումը յաճախ կը սկսի ընտանիքէն եւ կը շարունակուի համայնքային առօրեայ հաղորդակցութեան մէջ: Ան նաեւ անդրադարձաւ սփիւռքի այն դպրոցներուն եւ անոնց դիմագրաւած դժուարութիւններուն, ուր աշակերտները կը խօսին թէ՛ արեւելահայերէն եւ թէ՛ արեւմտահայերէն: Թէեւ լեզուական տարբերութիւնները երբեմն կրնան լարուածութիւններ ստեղծել, ան ընդգծեց, որ նման միջավայրերը կրնան նաեւ փոխադարձ հարստացման հնարաւորութիւններ ընձեռել: Փրոֆ. Տօնապետեան ներկայացուց նաեւ Հայագիտական միջազգային մագիստրոսական ծրագիրը (IMAS), որ Inalco-յի մէջ իրականացուող երկու տարուան առցանց ուսումնական ծրագիր մըն է: Ծրագիրը կը պատրաստէ հայերէնի ուսուցիչներ եւ անոնց կը տրամադրէ ժամանակակից մանկավարժական հմտութիւններ՝ համապատասխան սփիւռքի կրթական միջավայրերուն:

Անի Կարմիրեան ներկայացուց Կիւլպէնկեան հիմնարկութեան նախաձեռնութեամբ մշակուած քանի մը կրթական գործիքներ, որոնց շարքին են Zarmanazan-ը, Zndoog.com-ը եւ թուային ուսումնական այլ միջոցներ: Ան ընդգծեց նորարար մօտեցումներու կարեւորութիւնը, որոնք ուղղուած են մանուկներուն եւ պատանիներուն՝ օգտագործելով փոխազդեցիկ (interactive) հարթակներ եւ մեթոտներ, որոնք հայերէնի ուսուցումը կը դարձնեն աւելի գրաւիչ եւ հետաքրքրական երիտասարդ սերունդներուն համար:

ՅՈՒՍԱՍ ՕՐ ՄԸ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Կ'ԱԻՆՏԵՆՔ

ՄԻԼՎԱ ԻՍԿԻԿԵԱՆ-ՄԱՀՍԵՐԵՃԵԱՆ



Խաղաղութիւն՝ հաւատացի՛նք քեզի:

Խաղաղութիւն՝ հաւատացի՛նք քեզի, բայց դուն անխղճօրէն լքեցիր մեզ, երբ 1975- ին աննախընթաց հրթիռներուն տարափը ողողեց Լիբանանի երկինքը, երբ կրակի ու երկաթի բեկորները հնձեցին անմեղ քաղաքացիներու կեանքը, անխնայ հրկիզելով ու աւերելով բնակարաններն ու հանրային կառոյցները եւ մեծ ու փոքր վաճառատուները:

Հաւատացի՛նք քեզի, խաղաղութի՛ւն, բայց դուն դաւաճանեցիր մեզի, երբ մեր տան շէմը լքեցինք ու խուճապի սարսափով ապահով վայրեր վազեցինք: Հրթիռներուն տարափէն խառնեցինք



գիշերն ու ցերեկը, քնացանք աստիճաններուն տակ, նեղլիկ խուցերու մէջ, մեր գլուխին տակ փռելով մեր ամբողջ «ունեցուածքը»՝ գաղթականի «խուրջ»ը, ուր ամփոփած կըլլայինք մեր գոյատեւման համար անհրաժեշտ պիտոյքներ՝ դեղորայք, հաց, պանիր... Եւ կրակմարի ու տուն դարձի յոյսը:

Հաւատացի՛նք քեզի, խաղաղութի՛ն, բայց դուն երես դարձուցիր մեզմէ, երբ մեր սիրտը ճմլող յուզումով հրաժեշտ տուինք մեր սիրելիներուն: Մեղադրանքով անդրադարձանք անոնց գաղթի որոշումին, որովհետեւ համոզուած էինք, որ դուն շուտով պիտի ժամանես: Նոյնիսկ խրատեցինք անոնց ըսելով . «Մի՛ լքէք Լիբանանը, վաղը պատերազմը կը դադրի եւ ամէն բան լաւ կըլլայ»: Դժբախտաբար այդ վաղը չերեցաւ...:

Խաղաղութի՛ն, հաւատացի՛նք քեզի, բայց դուն չարաչար խաբեցիր մեզ, երբ ամէն անգամ նորոգեցինք մեր վնասուած բնակարաններն ու վաճառատուները, հաւատալով, որ պատերազմը աւարտած է: Ճգնեցանք ու կառուցեցինք աւելի գեղեցիկը՝ արդի սարքերովը, աչք շլացնողը, բայց կրկին ու կրկին մեր սեփականութիւնները քանդուեցան ու նորոգուելու կարիքը ունեցան: Բազմիցս մենք զմեզ համոզեցինք, ըսելով. «Նիւթական վնասը կը «դարմանուի», կարելորդ հոգիի վնաս չըլլայ»:

Հաւատացի՛նք քեզի, խաղաղութի՛ն, բայց դուն զլացար քու դերիդ մէջ, երբ երիտասարդ մը զոհը դարձաւ արձակագէնի մը անշեղ փամփուշտի, երբ մեր սիրելի դրացին մասնատուեցաւ հրթիռով մը, երբ մեծաթիւ զոհեր ինկան լարուած ականներու պայթումով, երբ լոյս աշխարհ չտեսած մանուկ մը բզկտուեցաւ իր մօր որովայնին մէջ...: Լացինք, ողբացինք, վիրաւորները դարմանեցինք, սակայն մխիթարանքի խօսք մը չգտանք, որպէսզի սգակիր մօր մը վիշտը մեղմացնենք:

Խաղաղութի՛ն, հաւատացի՛նք քեզի, բայց դուն կրաւորական ու անտարբեր դիրք բռնեցիր, երբ Լիբանանի քաղաքացին սպաննեց իր եղբօրը, չինայեց այլ կրօնքի, կուսակցութեան, գաղափարի...գաւակին, երբ Պէրութը կիսուեցաւ երկուքի, Լիբանանը կոտորակուեցաւ շրջաններու, օտարացան նոյն երկրի քաղաքացիները, իրարու միջեւ անցարգելներ ու «փշաթելեր» լարելով:

Հաւատացի՛նք քեզի, խաղաղութի՛ն, բայց դուն մեղսակից դարձար պատերազմին: Մեր կեանքէն տարիներ գողցար ու ներողամտութիւն չինդրեցիր. կեանքեր խլեցիր ու չխղճահարուեցար: Մենք քեզի ներգրաւեցինք մեր աղօթքներուն ու շարականներուն մէջ, մոմեր վառեցինք, ուխտավայրեր այցելեցինք, քեզի առողջութեան ու երջանկութեան չափ ցանկալի համարեցինք, բայց դուն խուլ եւ կոյր ձեւացար:



Ներո՛ղ եղիր, խաղաղութիւն, դուն արդար չես եւ միայն «ուժեղներուն» կը ծառայես : Անոնք իրենց պատերազմը մեր հողին վրայ կը մղեն, մեր զաւակներուն արեան գնով կը սակարկեն, առեւտուր կ'ընեն եւ շահեր կ'ապահովեն:


Դուն մեզի յուսախաբ ըրիր, երբ 1990- ին, ճերմակ տարագով ու խաղաղութեան աղաւնիներով ներկայացար, բայց աղաւնիներդ թերացան Լիբանանի երկնականարին վրայ ճախրելու եւ ամէնէն յարմար առիթին լքեցին ու հեռացան: Տակաւին մինչեւ օրս կը խոստանաս նոր աղաւնիներու խումբ մը ուղարկել, բայց մենք ակամայ միմիայն սեւ ագրաւներ կը դիմաւորենք:

Ներո՛ղ եղիր, խաղաղութի՛ւն, թէեւ անցեալին կոյր սիրահարի նման կառչեցանք քեզի, անվերջ յուսալով, հաւատալով... սակայն այսօր՝ կը հրաժարինք քեզմէ:

Տարիներու փորձառութեամբ մենք ըմբռնեցինք, որ ոչ դուն, ոչ միջազգային կազմակերպութիւնները, ոչ հեռու- մօտիկ երկիրները, կեղծ լոգունգները... մեր երկրին անդորրը կրնան վերադարձնել: Մեր միակ գրաւականը մեր կամքն է: Մենք՝ ինչպէս անցեալին, այսօր եւս պիտի զինուինք մեր անկոտորո՛ւմ կամքով, պիտի պայքարինք մեր չնահանջո՛ղ կամքով եւ պիտի յաղթենք դառն ճակատամարտները՝ մեր մշտանորո՛գ կամքով:

ՀԱԼԷՊԵԱՆ ՅՈՒՇԵՐ՝ ՊԱՐԱՆ, ԿԱԻՒՃ ԵՒ ԳՈՒՆԱԳԵՂ ԺԱՊԱԻԷՆ

Արաքս Փիլաւճեան Խտրլարեան



26/2/2026

– Արեւ, լուսին, ժապաւեն...

Թաղը թնդացնող խանդավառութեամբ եւ առանց յոգնելու, թութակի պէս կ'արտասանէինք այս բառերը եւ պարանը կը դարձնէինք երկու հոգիով, երրորդ մըն ալ կը ցատկէր, մինչեւ որ ոտքը կախուէր պարանին եւ «մեռնէր»:



Եւ այսպէս շարունակաբար կը ցատկէինք, կը մեռնէինք, կրկին ապրելու եւ պարանին խաղը վայելելու համար:

Աղջիկներուն յատուկ այս խաղը կը խանգարէին տղաքը, կը քաշէին պարանը մեր ձեռքէն, կը ճչայինք, կու լայինք, կը գանգատէինք մեր մայրերուն, մինչեւ որ հեռանային, սակայն անոնք հեռուէն կը դիտէին մեզ, կ'ուզէին մեր ուշադրութիւնը գրաւել, քիչ մըն ալ գերակայութիւն զգալ, չէ՛ որ տղաք են եւ մեզմէ զօրաւոր:

Պարգութեամբ յատկանշուող մեր խաղերը հաճելի էին եւ հասարակաց նկարագիր ունէին,

բոլորս նոյն խաղերով կ'աճէինք, Հալէպի Նոր Գիւղի թաղերուն երեխաները իրարմէ չէին տարբերեր իրենց արտաքինով, հագուստով եւ նկարագրով:

Ոչ մէկ ճոխութիւն եւ ձեւականութիւն, մեր մտահորիզոնը կը կերտուէր մեր տարիքին բնորոշ զբաղումներով, հեռատեսիլ իսկ չունէինք, բայց արտաքին աշխարհին հետ մեր կապը կը զարգանար բնագոյական մղումներով:

Մեր խաղերը մեր թաղերուն դրոշմը կը կրէին, գետինը կաւիճով քառակուսիներ կը գծէինք եւ գիծ կը խաղայինք, մէկ ոտքի վրայ ցատկելով, կը հրէինք կօշիկի կրունկը, մինչեւ որ հասցնէինք վերջին քառակուսիին, կը պարտուէինք, երբ կրունկը գիծի մը վրայ կենար:

Երբ կը յոգնէինք ցատկառելէն, հարս-հարս կը խաղայինք, մեզմէ մէկուն գուլիսը շղարշով կը զարդարէինք, հարսը կը հագներ մօրը կօշիկները, եւ բակին մէջ կը քալէր նազանքով եւ ամօթխածութեամբ, այս խաղին ներկայ կ'ըլլային մեր մայրերը, հեռանկարներ եւ երագներ կը հիւսուէին՝ առանց փեւսաներու:

Իսկ մեր պարպիները այնքա՛ն նախնական էին, որքան մեր խաղերը, լաթէ պուպրիկներ ունէինք, որոնք ձերմակ կտորէ կարուած էին եւ բամպակով լեցուած, մայրական բնագոյին յագուրդ տուող այդ պուպրիկները մեր մտերիմներն էին եւ անբաժան ընկերուհիները:

Երբ յոգնէինք, մօտակայ խանութէն ծեծուած մուրկի (լէպլէպու)ի թթուով խառն փոշի կը գնէինք եւ կ'ուտէինք, փոշին կոնաձեւ թուղթերու մէջ դրուած կ'ըլլար, կ'արժէր քանի մը դրուշ միայն, իսկ շաքարեղէնը ախորժաբեր էր եւ համեղ, վստահաբար կը յիշէր մանիշակագոյն, կարմիր, դեղին շաքարները:



Որքան մօտենամ մանկութեանս, այնքան պարզութեան համն ու հոտը կը զգամ,
արհեստագիտութիւն կոչեցին, իլեցին մանկութեան հարազատութիւնը:

Չունէինք շոայլութիւն, սակայն ունէինք առողջ մանկութիւն, քիչ քիչ աճող հասունութիւն,

Զուլլալ մտահորիզոն,

Վաղուան երազանքով մեծցող փայլուն աչուկներ,

Արեւոտ երկինք

Երազկոտ լուսին

Գունազեղ ժապաւէն:

ԱՎՆԹԱՐԹՆԵՐ



Թող միտքերդ ճախրեն անհունին մէջ՝ ազատ ու անարգել...Մի՛ սանձեր անոնց թռիչքը՝
դարե-դար դիզուած նախապաշարումներով, կարծրատիպերով, կամ՝ մտքի ծուլութեամբ
թէ՛ ստրկամտութեամբ...Ազատ միտքը մեծագոյն հարստութիւնն է, որով օժտուած է ամէն
մարդ՝ անկախ իր զանազան-զարմանազան պատկանելիութիւններէն...: Բայց շա՛տ-շա՛տեր
ինքնակամ զայն կը զիջին ուրիշէն կուրօրէն որդեգրած միտքերու, քանզի կը նախընտրեն
ստրուկ ապրիլ, քան՝ ստանձնել ԱԶԱՏ ՄՏՔԻ կամ ԱԶԱՏ ՄՏԱԾԵԼՈՒ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ..

.....



Ինչ տխուր է երբ մարդ էակը չկարենայ իր անհատականութիւնը արտայայտել՝ խօսքով, գիրով, հանրային ծառայութեամբ, մնայ անպտուղ, կծկուի ու մեռնի ինքն իր մեջ... Անհատականութիւնը կը ծաղկի, եթէ արտայայտութիւն գտնէ ան, եթէ արտադրէ, պտղաբերի եւ որքան տայ ան, այնքան աւելի կը շատնայ, կը ծաւալի, կը հարստանայ, ինքզինք կ'իրագործէ... Դժբախտութիւն է չտալը, դժբախտութիւն է, երբ մարդ էակը կը սմքի, կը ցամքի, կ'աղքատանայ հոգեպէս եւ կը մեռնի անհետ...

.....

Նոր գաղափարներ, նոր միտքեր յղանալու համար, ազատագրուած պիտի ըլլաս թապուներէ, ուրիշին կամ հասարակութեան, հատուածի մը թէ ղեկավարութեան հաճոյ թուալու ստրկամտութենէն, հինի բռնակալութենէն, քարացած կարծրատիպերէն, որոնք կը կաշկանդեն ազատ միտքը եւ պատնէշներ կը ստեղծեն անոր թռիչքը արգելակող...

.....

Պճեղ մը անուշ սիրտը հրաշքներ կրնայ գործել...
Պուտ մը բարութիւնը դրական մթնոլորտ կը ստեղծէ...
Միբող սիրտը լոյս կրնայ սփռել իր շուրջը...
Իսկ չարութիւնը միշտ ալ կործանարար է, թէկուզ իբր յանուն բարձր նպատակի...

.....

Ես-ի գոռոգութիւնը սխալ հասկցուած արժանապատուութիւն է... Առաջինը շատ անգամ քաղքենիացած փուճ բարքերով կը սնանի, կը բքի, կը հպարտանայ ի ցոյց իր նեղ ես-ին... մինչ երկրորդը մարդ էակի բուն արժանաւորութիւնը կը հաստատէ՝ հաւատարիմ մնալով զայն բնութագրող բարոյական, հոգեմտաւոր արժէքներուն եւ կը գերադասէ իր նեղ ես-ի ցանկութիւնները զոհաբերել յանուն իր մարդկային բարձր արժանաւորութեան, ճշմարիտ արժանապատուութեան...

.....

Երանի՛ սերը, բարեկամութիւնը եւ նման նուիրական զգացումները ըլլային անպայմանական, առանց որեւէ օգուտ ու շահ քաղելու ակնկալութեան, մաքուր ու անարատ... Մարդը մարդուն հասկնար կէս-խօսքէն, աչքի նայուածքէն, անոր լռութենէն, գիտնար ներել նոյնիսկ, քանզի ամէն ինչ հասկնալը ամէն ինչ ներել կը նշանակէ... (Խօսքը չի վերաբերիր անշուշտ անմարդկային արարքներու)... Կեանքը այնքա՛ն գեղեցիկ պիտի ըլլար մարդկային փոխյարաբերութեանց նման պայմաններուն, ուր մարդասիրութիւնը դառնար այնքան բնական, ինչպէս պտղատու ծառին պտղաբերումը՝ անհաշիւ, անսակարկ, բխումը հոգիի մաքրամաքուր ակունքին...

.....

ԴՐԱՍԸ, ԻՇԽԱՆՈՒԹԻԻՆԸ, ՀԱՐՍՏՈՒԹԻԻՆԸ որք՛ան կը փչացնեն մարդ էակը, տկարները մանաւանդ, որոնք ներքին ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ այլ աղբիւր չունին եւ դիւրաւ կրնան ՄՆԱՆԻԼ նիւթին պարգեւած սին երջանկութեամբ, գոռոգանալով, մեծամտելով եւ այլոց վրայ ԻՐԵՆՑ ԳԵՐԱԿԱՅՈՒԹԻԻՆԸ ՑՈՒՑԱԴՐԵԼՈՎ... Մինչդէռ իսկապէս ԱՐԺԱՆԱԻՈՐ ՄԱՐԴԸ պիտի



ԽՈՆԱՐՀ ԸԼԼԱՅ, լաւ գիտնալով որ ինք շԻԻԼԷ մըն է լոկ՝ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ընդհանրութեան մէջ...Խոնարհութիւնը ընդհանրապէս ներքին արժանիքներու արտաքին փայլն է:

.....

Գեղեցիկ, յանդուգն եւ քաջարի արարքներու գեղեցկութիւնը, բանաստեղծականութիւնը, որոնց համն ու հոտը կորսնցուցած կը թուին ըլլալ ծերացած խոհեմութեան ներկայացուցիչները, որոնց միակ գերնպատակը՝ հարստութիւն եւ ոյժ ամբարելն է եւ ուրիշ ոչինչ...Կեանքի բուն իմաստն ու արժէքը կորսնցուցած ըլլալով, անոնք կ'ապրին ու կը շնչեն յանուն իրենց ֆիզիքական գերբարօրութեան, իշխանատենչութեան մոլուցքին, պարարտացման եւ հուսկ կը վերածուին պարարտ եւ ինքնագոհ խոզերու, զուրկ հոգիէ եւ ոգիէ...

.....

ԼԻԱՐԺԷՔ ԱՊԼԵԼՈՒԻ համար, պիտի չվիատիլ, պիտի չյուսահատիլ, պիտի մաքառիլ անվերջ, անդադար, պիտի աշխատիլ անխոնջ, անտրտում, հաւատալով որ քու կատարածը լոյսի նշոյլ է խաւարին մէջ, պճեղ մը անուշ սիրտ է քար աշխարհի սրտին, բեկոր մը ճառագայթ՝ մութի բաւիղներուն...: Կարելորը՝ կեանքը կարենալ իմաստաւորելն է, որեւէ արժէք ստեղծելը, ամենէն համեստ թուող արժէքէն մինչեւ ամենէն վսեմը, ամենէն խոնարհ արժէքն անգամ կը բազմապատկուի, եթէ անիկա ստեղծուած է սիրով, հաւատքով, նուիրումով...Ի ԶՈՒՐ ՎԱՏՆՈՒԱԾ ԿԵԱՆՔԸ ՄԵԾԱԳՈՅՆ ԿՈՐՈՒՍՏ Է:

.....

ԽԻՂՃԻ ԱՐԹՆԱՑՈՒՄ...Ահա սա է պէտք մարդուն, հանրութեան, ազգին, աշխարհին, որպէսզի մարդը չմեռնի մարդուն մէջ, որպէսզի տիրեն խաղաղութիւնը, արդարութիւնը, որպէսզի դադար առնեն բոլոր տմարդի արարքները, պատերազմներն ու սպանդները, մահ ու աւեր սփռող բռնարարքները, բոլոր տեսակի յանցագործութիւններն ու ոճիրները...Ոչինչ կ'արժեն ամէն գիտական, արհեստագիտական նուաճում ու ձեռքբերում, ամէն տնտեսական աճ ու բարօրութիւն, եթէ խիղճը տակաւ բթանայ, քարանայ, տրորուի, արհամարհուի եւ հուսկ մեռնի մարդուն մէջ, հասարակութեան մէջ, պետութեանց մէջ, աշխարհիս մէջ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



ՔԱՌԵԱԿՆԵՐ



Փորձադաշտ է կեանքը համակ, բարւոյն պայքարը չարին դէմ,
Եւ ամէն պահ յաղթանակ է երբ վեր կ'ելլես մանրութիւնէն,
Երբ կը տեսնես դուն Համայնը հորիզոնին շքեղ փռուած,
Կը մերձենաս աստուածներուն թռիչքով արի ու խօլական:

.....

Ծառան եղայ ճշմարտութեան, արդարութեան, ազնուութեան,
Ու քայլ առ քայլ ես բարձրացայ սանդուխն ի վեր փառքին անհաս,
Ճաշակեցի շունչը վսեմ բարձունքներուն անապական,
Մի ակնթարթ հիպէս չնչին համը առաւ Ազատութեան:

.....

Թէ պիտ' ապրիս, պիտի ճախրես,
Հոգւոյդ թելեր պիտ' հագցընես,
Համը երկնին պիտ' ճաշակես,
Որ բարձրանաս եւ բարձրացնես:

.....

Կեանքի լեղին պիտ' ճաշակես
Որ դաս քաղես իմաստութեան,
Դաւ, խարդաւանք պիտի տեսնես
Որ գնահատես սիրտը արդար...

.....

Տարիներու թանձր մեզէն խոհեր ծնան յանկարծօրէն,
Ճաճանչներուն պէս արեւի ճառագեցին լոյս ու արեւ,
Փարոս դարձան ճանապարհիս, վա n-վա n աստղեր իմ երկնքին,



Իջան գրչիս հատի՛կ-հատի՛կ, դարձան բառեր ոսկեղենիկ:

.....

Քալէ՛մ, քալէ՛մ փողոցներէդ, այքս յառած Արարատիդ,
Ոնկն դնեմ մանուկներուդ ջինջ շուրթերէն հոսող լեզուիդ,
Ճակատս խոնջ, կարօտավառ գգուէն հովերն հայրենական,
Զգամ ոյժը մեր բորբ հողին, շունչը վսեմ մեր պատմութեան:

.....

Քանի անգամ են թելերս կոտրեր
Որ չխոյանամ դէպի երկինքներ,
Բայց կամքով հզօր նոր թելեր գտեր
Ու ճախրեր եմ վեր լազուրին մէջ վեհ..

.....

Ցմբուր ըմպեցի լեղին դառնութեան,
Չարի, նենգութեան, մաղձի ու քէնի,
Հոգիս միշտ պայծառ ու նոյնը մընաց,
Պայծառ նայեցաւ մարդուն, աշխարհին:

.....

Հոգենուէր աշխատանքս
Բազմապատիկ վերադարձաւ,
Երջանկութեամբ լեցուց սիրտս,
Բերկրանքով մը անեզրական:

.....

Խղճիս դարձայ ես հաշուետու եւ ոչ՝ մարդոց ստապատիր,
Իր խորանին բացի սիրտս, խոհ-յոյզերս անկեղծօրէն,
Խորունկ որպէս խոստովանանք, աղօթքի պէս անեղծ ու ջինջ,
Մաքրուեցայ ամէն անգամ գերթ հիւանդը իր ցաւերէն:

.....

Լուսաթախիծ ապրումներս
Ծանակեցին փոքր մարդիկ,
Իրենց համար զուարճանքն էր
Կեանքի իմաստն ու բանալին...

.....

Կարենալու համար ճախրել,
Պիտի սուգուիս խորքը հոգւոյդ,
Անկէ պիտի սլացք առնես
Ու սաւառնիս բարձունքներուն...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ